8600

017.4
2-11

Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

# ԳՐԱՑՈՒՑԱԿ

№ 8

1929

ԵՐԵՎԱՆ

06.06.2013

Հ. Ս. Խ. Հ.

## ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ
2. ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂ. ՊԵՏ. ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔ, ՀԵՌԱԽՈՍ № 105

## ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՏՎԵՐՆԵՐ

## ԿԱՏԱՐՈՒՄԸ

**ՄԱՔՈՒՐ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ**
**ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ**

**ՏՊԱՐԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԿԱՆ ԿԱԶՄԱՏՆԵՐ**

Խնդրվում է հրատարակիչներից յեվ հեղինակներից մի-մի օրինակ իրենց գրքերից ուղարկել Պետհրատի գլխավոր Վարչության, Յերեվան, Ռաֆֆու փ. № 29։ Պետհրատի հրատարակությունները վաճառվում են բացառապես «ՀԱՅԳԻՐՔ» բաժն. ընկ. խանութներում, բաժանմունքներում ու ներկայացուցչություններում։ Հասցեները ու պայմանները կարդալ Գրացուցակի շապկի վերջին յերկու յերեսում։

22 MAY 2009

# ՔԱՂԱՔԱԿԱՆ

*ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.*— **Շ. Ամիրխանյան**, *տիրաժ 1500, եջ 55, գինը 10 կ., 1928 թ.։*

*Այս գրքույկում զետեղված են ընկ. Շ. Ամիրխանյանի զեկուցումը և յեզրափակման խոսքը Կ. Վ. Հ-ի 2-րդ պլենումում։ Զեկուցման վերջում տպագրված է նաև պլենումի բանաձևը։*

---

*«ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920 թ.).*— **Շ. Ամիրխանյան**, *տիրաժ 3000, եջ 168, գինը 1 ռ. 25 կ., 1926 թ.։*

*Այս գիրքը մայիսյան ապստամբության պատմությունն է, վորի մեջ հեղինակը գլխավորապես ծանրացել է մայիսյան դեպքերի գնահատականի վրա և շոշափել է առանձնապես այդ դեպքերի ծագման և պարտության հիմնական պատճառները, մատնանշելով այն պատմական սխալներն ու սխալ մտքերը, վոր կան Աշոտ Հովհաննիսյանի այդ դեպքերին նվիրված «Հայաստանի հուլիսն ու հոկտեմբերը» անունը կրող գրքույկում։*

---

*ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ VIII ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.*— **Ն. Բուխարին**, *թարգմ. Ա. Խոնդկարյան, տիրաժ 3000, եջ 82, գինը 30 կ., 1927 թ.։*

*Ընկ. Բուխարինը 1927 թ. հունիսի 4-ին ՀամԿ(բ.) Կ. Մոսկվայի կոմիտեյի պլենումում զեկուցեց Կոմինտերնի գործկոմի պլենումի արդյունքների մասին։ Այս գիրքն այդ զեկուցումն է, վորի մեջ անդրադառնում է պատերազմի վտանգի, Յեվրոպայում տեղի ունեցող ընդհ. գործադուլի, մեր յերկրի պաշտպանության, պատերազմի, ոպպոզիցիայի և այլ խնդիրներին, ինչպես և չինական հեղափոխության վերջին փուլի (1927 թ.) պարզաբանմանը։*

---

*ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԸ.*— **Ն. Բուխարին**, *տիրաժ 3000, եջ 63, գինը 20 կ., 1927 թ.։*

*Հոկտ. հեղ. 10 ամյակի առթիվ ընկ. Բուխարինի զեկու-*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Յերևան Публичная Библиот...

ցումն է, որ արված է Մոսկվայի նահանգական յոթերորդ համագումարում 1927 թ. նոկտեմբերի 12-ին. այստեղ քննության են առնված սոցիալիզմի կառուցման խնդիրները մեր յերկրում, 10-ամյակի արդյունքները, սոց. շինարարության ընթացքը. դժվարությունները և 7-ժամյա բանվ. օրվա նախապատրաստությունը, ապա այն խնդիրները, որ այժմ կանգնած են կոմկուսակցության և բանվոր դասակարգի առաջ։

———

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԸ.—**Ն. Բուխարին**, տիրաժ 2000, եջ 48, գինը 25 կ., 1927 թ.։

Ընկ. Բուխարինի այս փայլուն ճառը, որ արտասանված է փետրվ. հեղ. 10-ամյակի առթիվ Մոսկվայի Մեծ թատրոնում գումարված հանդիսավոր նիստին, նվիրված է փետրվ. հեղափոխության նշանակության, ինքնակալության բնույթի կալվածատիրության, պատերազմի խնդիրներին։

———

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.— **Ն. Ի. Բուխարին**, տիրաժ 2000, եջ 71, գինը 25 կ., 1928 թ.։

Այս գրքույկը ընկ. Բուխարինի զեկուցումն է Համկ (բ.) Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի ժողովում, 1928 թ. սեպտ. 5-ին։ Պարունակում է հետևյալ գլխավոր խնդիրները. 1. 6-րդ կոնգրեսի և նրա աշխատանքների ընդհանուր բնույթը, 2. Կոմինտերնի ծրագիրը, 3. Միջազգային դրությունը և կոմինտերնը, 4. Պատերազմի դեմ պայքարելու խնդիրները և 5. ԽՍՀՄ օպոզիցիան Համկոմկուսում և միջազգային տրոցկիստական խնդիրը։

———

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ.—**Ի. Ռոգովոյ**, («Համկ(բ.) Կ 15-րդ համագումարի արդյունքները» սերիա), տիրաժ 2000, եջ 112, գինը 35 կ., 1928 թ.։

Այս գիրքը նվիրված է 15-րդ կուս. համագումարի այն խնդիրների, որոշումների և բանաձևերի քննության, որ վերաբերում է գյուղական չքավորության կազմակերպմանը և կուլակության դեմ մղվող պայքարին։

———

ԲԱՆԱՁԵՎԵՐ ՀամԿ(բ.) Կ ԿԿ-ի ՅԵՎ ԿՎՀ-ի ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ 6—11 ԱՊՐԻԼԻ 1928.—Տիրաժ 2000, եջ 45, գինը 15 կ., 1928 թ.։

Այս բանաձևերը վերաբերում են 1928—29 թ. թ. հացա-



մթերման, Շախտիի գործի և տնտ. շինարարության բացերի դեմ մղվելիք պայքարին։ Գրքույկի վերջում դրված է նաև ՀամԿ(բ.) Կ ԿԿ-ի և Քաղբյուրոյի պլենումի 1928 թվի աշխատանքի պլանը։

———

15-ՐԴ ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐ, ԲԱՆԱՁԵՎԵՐ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ.—Տիրաժ 3000, եջ 133, գինը 50 կ., 1928 թ.։

Այս գիրքը 15-րդ կուսհամագումարում յեղած զեկուցումների առթիվ ընդունված բանաձևերի և վորոշումների ժողովածուն է։

Ընդունված բանաձևերն են՝

1. ՀամԿ(բ.) Կ ԿԿ-ի հաշվետվության առթիվ.

2. ԿՎՀ և ԲԳՏ աշխատանքի մասին.

3. Գյուղում կատարվելիք աշխատանքի մասին.

Ապա՝ ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը կազմելու դիրեկտիվները, բանաձև Կոմինտերնի Գործկոմի ՀամԿ(բ.) Կ պատվ. հաշվ. առթիվ, բանաձև օպոզիցիայի մասին և վորոշումներ կազմակերպչական առանձին խնդիրների մասին։ Գրքին կցված են տրոցկիստական օպոզիցիային հարող այն ակտիվ գործիչների անունները, վորոնք հեռացված են կուսակցությունից։

———

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (բ.) 14-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.—Տիրաժ 3000, եջ 119, գինը 55 կ., 1926 թ.։

Այս գրքույկում դրված են 14-րդ կուս. համագումարի բոլոր բանաձևերն ու վորոշումները, ինչպես և ԿԿ-ի, ԿՎՀ-ի ամբողջական կազմի անդամների ցուցակները։

———

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ.—**Պ. Կիտայգորոդսկի**, թարգմ. Ա. Նազարյան, տիրաժ 3000, եջ 131, գինը 40 կ., 1925 թ.։

Այս գիրքը նվիրված է մի շարք յերկրների, ինչպես Թյուրքիայի, Յեգիպտոսի, Հյուսիսային Աֆրիկայի, Արաբստանի և Պարսկաստանի կիսագաղութային և գաղութային հեղափոխական շարժումներին։

Հեղինակը լավ ծանոթ է գաղութային շարժումներին, և նրա գիրքն այժմ էլ հաճույքով է կարդացվում։

———

ԲԵՐՔԻ ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՎԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.—**Միխ. Գորեվ**, եջ 13, գինը 5 կ., 1922 թ.։

Գրքույկը նվիրված է 1921 թվի բերքի սակավության և սովի պատճառների պարզաբանման խնդրին։

———

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ.—**Ա. Գայստեր**, («Համ. Կ. (բ.) Կ. 15-րդ համագումարի արդյունքները» սերիա) տիրաժ 3000, եջ 81, գինը 25 կ., 1928 թ.:

Գյուղի շերտավորումը» գրքույկն աշխատում է պարզել մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման առաջին գծալի քայլերը, գյուղի շերտավորումը, կուլակի կողմից հարձակման անցնելու տենդենցները, գյուղի ներսում դասակարգային հարաբերությունների սրվելը, միջակ գյուղացիության հանդեպ կոմկուսի քաղաքականության ճիշտ կիրառումը»:

«Կոմունիստ» № 6—7. 1928 թ.

———

ԻՆՉ Է ՍՊԵՑԻՖԻԶՄԸ ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՆՐԱ ԴԵՄ.—**Ն. Պ.**, տիրաժ 4000, եջ 39, գինը 12 կ., 1928 թ.:

Սպեցիֆիզմի այս բացատրողական գրքույկը հատկապես բանվորներին և գյուղացիներին մատչելի լեզվով բացատրում է սպեցիֆիզմի եյությունը և բնորոշում է այն պայքարը, վոր մղվում է նրա դեմ:

———

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏԵՐՐՈՐԻՍՏՆԵՐԻ ԳՈՐԾԸ.—Հ. Աշրաֆյանի առաջաբանով, տիրաժ 1200, եջ 347, գինը 1 ռ. 30 կ., 1927 թ.:

Այս գիրքը պարունակում է Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարության արձանագրությունը, մեղադրողների, մեղադրյալների, յերկու կողմի պաշտպանների ճառերը և վորոշումը վճռագործների վերաբերմամբ:

Առաջաբանն անհրաժեշտ մեկնաբանություններ է տալիս և գնահատում դատի նշանակությունն ու Դաշնակցության դեմքը:

———

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ.—**Ն. Յեգորով**, (Համ. Կ. (բ.) Կ. 15-րդ համագումարի արդյունքները» սերիա), տիրաժ 2000, եջ 50 գինը 15 կ., 1928.:

«Այս գրքույկում նշվում են այն ուղիները, վորոնցով պետք է ընթանա խորհրդային նոր գյուղի վերակառուցումը»:

«Կոմմունիստ» № 6—7. 1928 թ.

———

ՄԵՐ ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ.—**Ա. Յենուկիձե**, տիրաժ 1500, եջ 51, գինը 40 կ., 1927 թ.:

Ընկ. Ա. Յենուկիձեն մանրամասն պատմում է Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կովկասում անլեգալ տպարաններ կազմակերպելու պատմությունը 1900—1906 թվականների շրջանում:



Կովկասում բայլշևիկյան շարժումն ուսումնասիրող ամեն մի անհատ պետք է կարդա այս գրքույկը:

———

ՀՈՒՇԵՐ.—**Արամայիս Յերզնկյան**, 1-ին գիրք, տիրաժ 3000, եջ 64, գինը 50 կ., 1927 թ.:

Այս գրքույկում ընկ. Ա. Յերզնկյանը պատմում է իր կյանքի հուշերը, ինչպես՝ հոկտ. ի 17-ը և 18-ը և Վորոնցով-Դաշկովը, 1905 թվի դեպքերը Թիֆլիսում, Ստ. Շահումյան, հայոց «սահմանադիր ժողովը» 1906 թվականին, Սուրեն Սպանդարյանը Մետեխի բանտում, «Պրոլետարիատ» թերթը, «Կայծ» թերթը և փետրվարյան հեղափոխության առաջին որերը Թիֆլիսում:

———

Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆԻ ՃԱՌԸ.—Տիրաժ 1000, եջ 74, գինը 25 կ., 1926 թ.:

Այս ճառը ընկ. Ա. Յերզնկյանն արտասանել է 1926 թ. հոկտեմբերի 17-ին և 18-ին Մանուկ Խուշոյանի դատավարության գործում իբրև հասարակական մեղադրող. սա մի մեղադրական ակտ է դաշնակցական ամբողջ հակահեղափոխական գործունեյության վերաբերյալ:

———

ԲԱՅԼՇԵՎԻԶՄ ՅԵՎ ՏՐՈՑԿԻԶՄ.—**Գ. Զինովյեվ**, տիրաժ 5000, եջ 85, գինը 25 կ., 1925 թ.:

Զինովյևն այս բրոշյուրում վերլուծում է Տրոցկու տեսակետները և ցույց տալիս, վոր դրանք հիմնովին հակառակ են բայլշևիզմի վոգուն:

———

Ռ. Կ. Կ. (ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.—**Գ. Զինովյեվ**. Թարգմ. Դ. Դզնունի, Բ. տպագրություն, տիրաժ 8000, եջ 304, գինը 80 կ., 1925 թ.:

Այս գիրքը պարունակում է Զինովյևի 6 դասախոսությունը, վոր կարդացել է կուսակցության 25-ամյակի առթիվ: Կուսակցության պատմությունն է սկզբից մինչև մեծ պատերազմի բռնկումը:

———

ԹԵԶԻՍՆԵՐ Հ. Կ. (բ) ԿՈՒՍ. 15-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱՐ.—(Ընկ. ընկ. Ռիկովի, Կրժիժանովսկու և Մոլոտովի զեկուցումները), տիրաժ 1500, եջ 61, գինը 40 կ., 1927 թ.

Գրքույկը բովանդակում է այն թեզիսները «ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի վերաբերմամբ», վոր ընդունված են Հ. Կ. (բ) Կ. Կենտկոմի և Կ. Վ. Հ. պլենումի կողմից 1927 թ.

հոկտեմբերի 23 ին, ապա «Աշխատանքները գյուղում, գյուղացիական տնտեսության զարգացման առանձնահատկությունները պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում» վերնագիրը կրող թեզիսները, որ ընդունված են Հ. Կ. (բ) Կ. Կենտկոմի և Կ. Վ. Հ. պլենումի կողմից 1927 թ հոկտ. 23-ին։

———

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ.—**Վ. Լիբկնեխտ**, տիրաժ 3000, եջ 90, 1924 թ.։

Վ. Լիբկնեխտը, Կարլ Լիբկնեխտի հայրը և գերմանական ս.-դ. հիմնադիրներից մեկը, այս ճառն արտասանել է 1871 թ. հոկտեմբերի 22-ին Կրիմմշաու քաղաքում հիմնված ժողովրդական միության տարեդարձի առթիվ։ Գրքում բացատրվում են հին և նոր՝ բուրժուական և պրոլետարական աշխարհի ներհակությունները։

———

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ (Դեդուշկա).—**Ս. Խանոյան**, տիրաժ 2000, եջ 26, գինը 10 կ., 1928 թ.։

Այս գրքույկը հեղափոխական բանվոր գործիչ Մելիք Մելիքյանի համառոտ կենսագրությունն ու բնութագիրն է։

———

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Տիրաժ 3000, եջ 144, գինը 40 կ., 1928 թ.։

Գիրքը ամբողջական է և հարմար ամենափոքրիկ գրպանի համար։

———

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ.—1-ին հատոր, Արտ. Կարինյանի գրած կենսագրական ուրվագծով, տիրաժ 3000, եջ 221, գինը 1 ռ. 50 կ.։ 1926 թ., Մոսկվա։

Այս գիրքը պարունակում է իր մեջ 1905—1918 թ. թ. Ստեփան Շահումյանի գրած քաղաքական, հասարակական և կազմակերպչական հոդվածների ժողովածուն։

Ընկ. Շահումյանի այս գիրքը հանձնարարականի պետք չունի և Անդրկովկասյան քաղաքական անցուդարձով հետաքրքրվողի համար լավագույն աղբյուրներից մեկն է։

———

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ.—2-րդ հատոր (հոդվածներ), տիրաժ 3000, եջ 332, գինը 2 ռ., 1928 թ., Մոսկվա։

«Մենք արդեն ունենք Շահումյանի յերկրորդ հատորը, որտեղ զետեղված նյութերը համարյա բոլորն էլ կապված են Շահումյանի հետպատերազմյան գործունեյության հետ», գրում է «Լենինյան Ուղին» (№ 8—9 1928 թ.)։



«Գրքի վերջին մասի նյութերն անմիջապես կապված են արդեն Շահումյանի Բագվի շրջանի գործունեյության հետ։ Դրանք տալիս են արտաքին ողակավորման ու ներքին հակահեղափոխության դավադիր աշխատանքի պայմաններում Բագվի խորհրդի վարած քաղաքականությունը, նրա մանյովրները, վորոնց գերագույն նպատակն է Բագվի պահպանումը» (Լենինյան Ուղի», նույն հոդվածում)։

———

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ.— **Ա. Կարինյան**, տիրաժ 1000, եջ 71, գինը 60 կ., 1925 թ., Մոսկվա։

Հեղինակն իր գրքույկում փորձում է Ստեփան Շահումյանի կյանքի և գործունեյության համառոտ ուրվագիծը տալ։ Այս աշխատությունը տպված է նաև Ստ. Շահումյանի յերկերի ժողովածուի 1-ին հատորի սկզբում։

———

ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԻՆ.— **Ա. Կարինյան**, տիրաժ 2000, եջ 248, գինը 1 ռ. 25 կ., 1926 թ., Մոսկվա։

Այս գիրքը Ա. Կարինյանի զանազան հոդվածներն է, տպված զանազան հանդեսներում, վորոնք ուղղված են հայ նացիոնալիզմի, նրա դասակարգային եյության դեմ։

———

ԼԵՆԻՆԻԶՄ ՅԵՎ ՏՐՈՑԿԻԶՄ.—**Լ. Բ. Կամենև**, տիրաժ 5000, եջ 143, գինը 15 կ., 1925 թ.։

Ընկ. Կամենևն այս բրոշյուրում քննության է առնում տրոցկիզմը և մանրամասն հիմնավորում, վոր տրոցկիզմը շարունակ լենինիզմին հակառակ և խորթ ուսմունք է յեղել և այժմ էլ վոչ մի կապ չունի լենինիզմի հետ։

———

26 ԿՈՄՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (հոդվածների ժողովածու).— (Հ. Կ. (բ) Կ. Կ. Կ.-ին կից կուսպատ), տիրաժ 2000, եջ 135, գինը 80 կ., 1928 թ.։

«Վորոշ պլյուս պետք է համարել Բագվի կոմմունայի 10-ամյակի առթիվ Հ. Կ. (բ) Կ. Կ. Կ.-ին կից կուսպատի հրատարակած ներկա ժողովածուն՝ նվիրված 26 կոմմունարների գործունեյության և հիշատակին։

Հոդվածների ամբողջականությունը բավական լրիվ պատկեր է տալիս 26 կոմմունարներից յուրաքանչյուրի անցած հեղափոխական գործունեյության մասին, միաժամանակ տալով Անդրկովկասի զանազան մասերում տեղի ունեցած հեղափոխական պայքարի առանձին մոմենտները և, մասնավորապես, Անդրկովկասի պրոլետարիատի ու հեղափոխության ավանգարդ և որրան Բագվի պրոլետարիատի հեղափոխական անցյալը 1900—1918 թ. թ. ժամանակաշրջանում»։

«Լենինյան Ուղի» № 8—9 1928 թ.

———

ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՄ. ԿՈՄ. (բ) ԿՈՒՍ. ԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ.— Տիրաժ 1000, էջ 55, գինը 5 կ., 1928 թ.։

Բջիջների աշխատանքների այս կանոնագիրը տրված է ամենափոքր գրպանի համար ծավալով։

———

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ.—Տիրաժ 5000, էջ 21, գինը 1 կ., 1928 թ.։

Համ. կ. (բ) կ. կ. կ.-ի նամակն է՝ ուղղված կուսակցության անդամներին ու բանվորներին և պարունակում է ինքնաքննադատության լոզունգի կիրառման հրահանգները։

———

ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ, ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԵԼԻՔԸ.—**Աշոտ Հովհաննիսյան**, տիրաժ 2000, էջ 56, գինը 12 կ., 1925 թ.։

Յերևանի գավկուսկոնֆերենցիայում Կենտկոմի աշխատանքների մասին արած զեկուցումն է այս գրքույկի բովանդակությունը։

———

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ.—(Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), **Աշոտ Հովհաննիսյան**, տիրաժ 5000, էջ 30, գինը 15 կ., 1926 թ.։

Այս գրքույկը պատասխան է հայ սպիտակ եմիգրանտների արտասահմանում արծարծած այն տեսակետին, վոր իբր թե նոյեմբերյան հեղափոխություն տեղի ունեցած չէ Հայաստանում, այլ իշխանությունը հանձնված է բոլշևիկներին «վորոշ դաշնագրի հիման վրա»։

———

«ԶԱԽ» ՊԱՆԻԿՅՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՎԱՐԻԱՆՏԻ ՄԱՍԻՆ.—**Աշոտ Հովհաննիսյան**, տիրաժ 3000, էջ49, գինը 25 կ, 1927 թ.։

Աշոտ Հովհաննիսյանն այս գրքույկով պատասխանում է Ե. Սուրենի այն հոդվածներին, վոր լույս տեսան «Մարտակոչի» էջերում և ուղղված են իմիջի այլոց նաև Աշոտ Հովհաննիսյանի դեմ։

———

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ.—**Աշոտ Հովհաննիսյան**, տիրաժ 5000, էջ 28, գինը 10 կ., 1925 թ.։

Համահայաստանյան ուսուցչական անդրանիկ համագումարում արած զեկուցումն է, վորը շոշափում է «ինտելիգենցիան և պրոլետարական հեղափոխությունը» թեման։

———



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ.—**Սաքո Համբարձումյան** (Անդրկովկասի կենտկործկոմի 3-րդ գումարման 2-րդ նստաշրջանում), տիրաժ 2500, էջ 64, գինը 30 կ, 1926 թ.։

Գրքույկը մանրամասն տալիս է Հայաստանի տնտեսական, կուլտուրական և այլ շինարարությունների պատկերը հաշվետու շրջանում և գծագրում ապագա հեռանկարները։

———

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՄԵՆԱՎԵԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄՔԸ.—**Մարենց**, տիրաժ 2000, էջ 51, գինը 15 կ., 1928 թ.։

Այս գրքույկում հեղինակը փորձել է տալ հայկական նացիոնալիզմի իդեոլոգիայի հիմնական գծերը։ Հեղինակը վերլուծման է յենթարկում գլխավորապես Հով. Քաջազնունու «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» և Արշ. Ղազարյանի «Մոմենտը պահանջում է» բրոշյուրները։

———

VI ԿՈՆԳՐԵՍԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ.—**Վ. Մոլոտով**, տիրաժ 2000, էջ 54, գինը 15 կ., 1928 թ.։

Վ. Մոլոտովի այս զեկուցումը Կոմինտերնի VI կոնգրեսի մասին պարունակում է հետևյալ խնդիրների պարզաբանումը. 1) կոմմունիզմի ծրագիրը և հեռանկարները. 2) միջազգային դրությունը և Կոմինտերնի խնդիրները. 3) Կոմինտերնը և նրա քաղաքական գիծը։

———

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ.—**Ցոլակ Խանզադյան**, տիրաժ 5000, էջ 39, գինը 20 կ., 1926 թ.։

Հեղինակը փորձում է իր այս գրքույկում Ալեքսանդր Մյասնիկյանի կյանքի և գործունեության բնութագիրը տալ։

———

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՂԻՆ.—**Ալ. Մարտունի** (Ա. Մյասնիկյան, տիրաժ 2000, էջ 48, գինը 20 կ., 1924 թ., Թիֆլիս։

Այս գրքույկում զետեղված են Ալ. Մարտունու արտասանած ճառը Հայաստանի խորհուրդների I համագումարում, նրա հոդվածը—«Յերկու տարուց հետո»—Խորհ. Հայաստանի յերկրորդ տարեդարձի առթիվ և «Յեռամյա սոց. Հայաստանի առօրյա խնդիրները» հոդված Խորհրդային Հայաստանի յերրորդ տարեդարձի առթիվ։

———

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ.—**Վ. Մոլոտով**, (15-րդ կուսհամագումար), տիրաժ 3000, էջ 151, գինը 50 կ., 1928 թ.։

Ընկ. Մոլոտովը վերլուծում է դասակարգերի և գյուղի սոցիալական առանձնահատկությունները գյուղատնտեսության հե-

տագա զարգացման ուղիները, կոոպերացիայի, կոլ. խոշոր հողագործության, խորհ. տնտես. նշանակությունը, ապա հերքում օպպոզիցիայի սխալ տեսակետներն այս խնդիրների վերաբերյալ:

---

*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ (1905—1907).*—**Գ. Ի. Մոյսեյեվից**, տիրաժ 2000, էջ 45, գինը 12 կ., 1928 թ.:

Հեղինակը փորձում է պարզաբանել, թե ինչ վիճակում էին գյուղատնտեսական բանվորները 1905 թվին, ինչպես էին նրանց աշխատանքի պայմանները, նրանց պայքարի ձևերը, կազմակերպությունները: Ապա պատմում է այն աշխատանքի մասին, որ կուս. կատարում էր նրանց մեջ, և նրանց պայքարի արդյունքների մասին:

---

*ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ.*—Տիրաժ 3000, էջ 16, գինը 10 կ., 1927 թ.:

Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակի առթիվ Համամիութենական Կենտգործկոմը գումարվեց Լենինգրադում, և հրատարակվեց այս մանիֆեստը, որ շոշափում է այն խնդիրները, որ դրված են բանվորա-գյուղացիական մասսաների առաջ Հոկտ. հեղ. 10-ամյակին:

Մանիֆեստը հաստատում է բանվորական 7-ժամյա օրը:

---

*ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.*—**Վ. Նևսկի**, տիրաժ 2000, էջ 83, գինը 25 կ., 1928 թ.:

Կուսակցության առանձին համագումարներին նվիրված հանրամատչելի սերիայի գրքույկներից մեկն է ընկ. Վ. Նևսկու այս աշխատությունը: Մեր բանվորները, գյուղացիները, կոմյերիտականները և ընդհանրապես միջին պատրաստության տեր աշխատավոր ընթերցողները 3-րդ համագումարի մասին բավարար և մատչելի տեղեկություններ կգտնեն այս գրքույկում:

Գրքին կցված են ՌՍԴԲԿ 3-րդ համագումարի բանաձևերը:

---

*ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.*—**Ս. Վ. Շեստակով** (Նիկոդիմ), տիրաժ 2500, էջ 36, գինը 15 կ., 1927 թ.:

Այս գիրքը շոշափում է գյուղացիական տնտեսությունը մինչև 1927 թ., գյուղացիական շարժման սկիզբը, գյուղացիական շարժումը 1917 թ. ամառը, Հոկտեմբ. հեղափոխությունը և գյուղացիությունը, ապա և պարզում է այն, թե ինչ տվեց Հոկտ. հեղափոխությունը գյուղացիությանը:

---



*ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ, ԼԵՆԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ.*—**Արամ Շահգյալդյան**, տիրաժ 10.000, էջ 16, գինը 8 կ., 1925 թ.:

Լենինի մահվան առաջին տարեդարձի առթիվ է գրված: Հեղինակը փորձում է մի տարվա մեր նվաճումների համառոտագրությունը տալ բոլոր ճակատներում:

---

*ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ.*—**Ստեփան Շահումյան** (հոդվածների ժողովածու), տիրաժ 2000, էջ 63, գինը 20 կ., 1928 թ.:

Իդեոլոգիական ֆրոնտի այժմյան մեր պայքարի ամենադըժվարին բնագավառներից մեկն է նացիոնալիզմը և նացիոնալիստական կուսակցությունների դեմ պայքարը: Նացիոնալիզմը յուրաքանչյուր բուրժուական շարժման և պետության անքակտելի մասը լինելով, բուրժուազիայի տապալումից հետո էլ նրա պայքարում ընդդեմ պրոլետարական պետության հզոր և կարևոր զենք է հանդիսանում: ՆԵՊ-ի որով գոյություն ունեցող համառ դասակարգային պայքարի մեր օրերին, երբ գյուղի կուլակն ու քաղաքի նեպմանը օր-ավուր ավելի ու ավելի սրում են իրենց պայքարը բանվորա-գյուղացիական զանգվածի դեմ, նացիոնալիզմը նորից հանդես է գալիս որպես կարևոր ուժ, որի էության պարզաբանումը մեր ամենօրյա և անդադրում պարտականությունն է:

Այս տեսակետից միանգամայն արժեքավոր պիտի համարել Պետհրատի հրատարակությամբ լույս տեսած Ստեփան Շահումյանի մի շարք հոդվածների ժողովածուն՝ ուղղված նացիոնալիզմի դեմ»:

«Լենինյան Ուղի» № 8-9 1928 թ.

---

*ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ.*—**Ն. Ն. Պոպով**, ռուսերենի 5-րդ հրատարակությունից թարգմանից Վ. Ռշտունի, էջ 510, գինը 3 ռ., 1928 թ.:

Այս հսկա հատորը Համկոմկուսի պատմության ուրվագիծն է սկզբից մինչև կուսակցության 14-րդ համագումարը և 15-րդ կուսկոնֆերենցիան: Հատորի վերջում դրված են յերկու հավելվածներ՝ 1) ՌՍԴԲԿ ծրագիրը՝ ընդունված կուսակցության 2-րդ համագումարում և 2) բոլշևիկների ագրարային ծրագրի նախագիծը՝ առաջարկված ՌՍԴԲԿ 6-րդ (Ստոկհոլմի) համագումարին: Վերջում դրված է կարևորագույն անունների բացատրական ցանկը:

Պոպովի գիրքը լայն տարածված և ընդունված ձեռնարկ է և միանգամայն հանձնարարելի հայ ընթերցողներին:

---

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.*—**Ռ. Ռուբեն**, տիրաժ 2000, էջ 39, գինը 20 կ., 1928 թ.:

Ընկ. Ռ. Ռուբենի այս ճառը վերաբերում է Հայկոմկուսի

ղեկավարության փոփոխման պատճառներին, սպեցիֆիզմին, կուսակցական ակտիվի և կուսակցական մասսայի ղեկավարության և ինքնաքննադատության խնդիրներին։

———

ՑԵՐԿՐԻ ՏՆՏԵՍ. ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.—**Ա. Ի. Ռիկով**, տիրաժ 2000, եջ 115, գինը 60 կ., 1927 թ.։

Այս գրքում ամփոփված են ընկ. Ռիկովի 16-րդ կուսկոնֆերենցիայում արած զեկուցումը, յիզրափակման խոսքը և վերջում բանաձևը, այս գրքում հրատարակված է նաև կոնֆերենցիայի փակման նիստում արտասանած ճառը։

Ընկ. Ռիկովը գնում ու պարզաբանում է մեր Միության տնտեսական ներկա վիճակի և ապագա հեռանկարների խնդիրները։

———

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.—**Ն. Սեմաշկո**, տիրաժ 2000, եջ 36, գինը 15 կ., 1928 թ.։

Ընկ. Ն. Սեմաշկոյի գրքույկը նույն նպատակին է հետամուտ, ինչ որ ընկ. Վ. Նեվսկու գրքույկը («Կուսակցության 3-րդ համագումարը») և լավ ընթերցանության գիրք է նույն շրջանի ընթերցողների համար։

———

Ы...[illegible] ՅԵՎ ԿՎՀ-Ի ԱՊՐԻԼՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.—**Ստալին**, տիրաժ 3000, եջ 51, գինը 20 կ., 1928 թ.։

Ընկ. Ստալինն այս ճառում վերլուծում է ինքնաքննադատության, հացամթերման հարցերը, Շախտիի գործը և նրա հետ կապված տնտ. հակահեղափոխության դեմ կռվելու խնդիրները։

———

ՀԱՄԿ (բ.)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 15-րդ ԿՈՒՍ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ.—**Ի. Ստալին**, տիրաժ 2000, եջ 104, գինը 70 կոպ., 1926 թ.։

Ընկ. Ստալինը մանրամասն քննում է կապիտալիզմի կայունացման, գաղութների և կիսագաղութների, ԽՍՀՄ-ի արտաքին և ներքին դրության, մասնավորապես ժող. տնտեսության, դասակարգերի և նրանց ակտիվության խնդիրները, Լենինի գյուղացիության մասին տված լոզունգները, ապա մերկացնում է օպպոզիցիայի սխալների եյությունը։

——

ՕՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՅԵՎ ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.—**Ի. Ստալին**, թարգմ. Վ. Փոթխյան, տիրաժ 2000, եջ 119, գինը 1 ռ., 1926 թ.։

Ընկ. Ստալինի 15-րդ կուսկոնֆերենցիայում արտասանած



ճառն է, որ հատկապես նվիրված է օպպոզիցիայի եյությանը. նըշված են օպպոզիցիայի զարգացման էտապները, նրա հիմնական սխալները, լենինիզմի և տրոցկիզմի հիմնական տարբերությունները, և կցված է նաև կուսկոնֆերենցիայի բանաձևը Համկոմկուսի մեջ առաջացած օպպոզիցիոն բլոկի մասին։

———

ՏՐՈՑԿԻ՞ԶՄ ԹԵ ԼԵՆԻՆԻԶՄ.—**Ստալին**, տիրաժ 5000, եջ 27, գինը 10 կ., 1924 թ.։

Ընկ. Ստալինի այս բրոշյուրը նվիրված է Հոկտ. հեղափոխության և հետագա քաղաքացիական կռիվների մեջ Տրոցկու կատարած դերին. ընկ. Ստալինն ապացուցում է, որ Տրոցկին զուր է ջանում իրան դուրս բերել կենտրոնական դեմք։

———

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՕՊՊՈԶԻՑԻԱՆ.—**Մ. Տոմսկի**, թարգմ. Հ. Տեր-Հովհաննիսյան, տիրաժ 3000, եջ 46, գինը 15 կ., 1926 թ.։

Տոմսկու արտասանած ճառն է օպպոզիցիայի դեմ ՀԿ (բ.)Կ 15-րդ համագումարում։

———

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.—**Տոմսկի**, (զեկուցում 15-րդ կուսկոնֆերենցիայում), տիրաժ 2000, եջ 136, գինը 60 կ. 1927 թ.,

Տոմսկու այս զեկուցումն առանձնապես վերլուծման է յենթարկում օպպոզիցիայի հարուցած խնդիրները պրոֆմիության վերաբերյալ և պրոֆմիությունների պրակտիկայի հիման վրա հիմնավորում է լենինյան տեսակետը։

———

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (ժողովածու).—Գյուղուսվարի հրատարակություն, տիրաժ 1200, եջ 104, գինը 1 ռ.։

Այս գիրքը մի շարք ընկերների քաղլուսաշխատանքների և մասնավորապես խրճիթ-ընթերցարանների աշխատանքների շուրջը գրած հոդվածների ժողովածու է։ Խրճիթ-ընթերցարաններում աշխատող ակտիվի համար այս գիրքն ուղեցույց է։

———

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.—**Քրեստոմատիա ըստ Լենինի** (խմբ. Շ. Մ. Դվոլայցկու), Յերևան, 1928 թ., եջ 408, 2 ռ. 25 կ.։

—

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.—**Մանդալյան**, Յերևան, 1928 թ., եջ 28, 15 կ.։

—

ԼԵՆԻՆԻԶՄԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ.—Պ. Կերժենցեվ և Ա. Լեոնտյեվ, Յերևան, 1928 թ., եջ 348, 1 ռ. 80 կ.

—

ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ.—Վլ. Միրոշեվսկի, Յերևան, 1928 թ., եջ 310, 1 ռ. 50 կ.:

—

ՃԱՌ ՀԱՄ. Կ. (բ.) Կ. Կ. ՊԼԵՆՈՒՄՈՒՄ.—Ի. Ստալին, Յերևան, 1928 թ., եջ 24, 8 կ.:

—

ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ՀԱՅԱՍՏ. ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑ.—Ա. Մռավյան, Վաղ-պատ, 1928 թ., եջ 24, 7 կ.:

—

ՃԱՌ ՀԱՄ. Կ. (Բ.) Կ. ՆՈՅԵՄԲ. ՊԼԵՆՈՒՄՈՒՄ.—Ի. Ստալին, Յերևան, 1928 թ., եջ 64, 15 կ.:

—

ՀԱՄ. Կ. (Բ.) Կ. ՆՈՅԵՄԲ. 29-Ի ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ.—Յերևան, 1928 թ., եջ 80, 25 կ.:

—

ԿՈՄՄՈՒՆԻՍՏ. ԻՆՏԵՐՆԱՑ. ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.—Յերևան, 1928 թ., եջ 16, 40 կ.:

—

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.—Ռ. Վարենցովա, Յերևան, 1929 թ., եջ 40, 15 կ.:

—

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.—Կ. Շելյավին, Յերևան, 1929 թ., եջ 72, 20 կ.:

—

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՅԵՎ ԱՅԺՄ.—Գ. Աբով, Յերևան, 1929 թ., եջ 136, 30 կ.:

—

ԲԱՏՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.—Պ. Գրեբով, Յերևան, 1929 թ., եջ 80, 15 կ.:

—

ԲԱՏՐԱԿ. ԻՆՏԵՐՆԱՑ. ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ.—Բ. Իգակով, Յերևան, 1929 թ., եջ 48, 12 կ.:



ԳՅՈՒՂԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.—Հ. Մկրտչյան, Յերևան, 1929 թ., եջ 64, 15 կ.:

—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑ. ԱՃՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.—Ա. Խանջյան, Յերևան, 1929 թ., եջ 32, 8 կ.:

—

ԱԶ ԹԵՔՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴ. ՏՆՏԵՍ. ԶԱՐԳԱՑՄ. ՈՒՂԻՆԵՐԸ.—Ա. Գուլոյան, Վաղ-պատ, 1929 թ., եջ 84, 25 կ.:

—

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.—Ա. Յեղիազարյան, Յերևան, Վաղ-պատ, 1929 թ., եջ 48, 10 կ.:

—

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.—Հ. Ազատյան, Յերևան, 1929թ., եջ 236, 1 ռ 25 կ.:

ԼԵՆԻՆԻԶՄԸ.—Պ. Կերժենցեվ, Վաղ-պատ, 1929 թ., եջ 304, 1 ռ. 60 կ.:

—

ՀԱՅԱՍՏ. ԿՈՄՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍ. (Բ.) ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏ.—Ա. Խանջյան, Յերևան, 1929 թ., եջ 56, 12 կ.:

—

ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ՆՎԱՃՈՒՄՆ. ՅԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ.—Մոլոտով, Յերևան, 1929 թ., եջ 64, 35 կ.:

—

ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐԻ ՅԵՐԵԿՎԱ ՅԵՎ ՎԱՂՎԱ ՈՐԸ.—Յու. Յարոսլավսկի, Յերևան, 1929 թ., եջ 30, 12 կ.:

# ԼԵՆԻՆՅԱՆ ՍԵՐԻԱ

*ՊԱՐԵՆՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ.*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *թարգմ.* **Թ. Ա.** *(Նոր քաղաքականության պայմաններն ու նրա նշանակությունը), էջ 64, գինը 15 կ., 1922., Վաղարշապատ։*

*Պարենհարկի մասին ընկեր Լենինի գրած այս հոդվածը լույս է տեսել պարենմասնատրումից պարենհարկին անցնելու առթիվ։ ՆԷՊ-ը հիմնավորող և մեկնաբանող գրվածքների առաջին շարքին է պատկանում ը. Լենինի այս աշխատությունը և էական նշանակություն ունեցողներից մեկն է։*

———

*ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 5000, էջ 130, գինը 70 կ., 1925 թ.։*

*Ընկ. Լենինի այս նշանավոր աշխատությունը մաքրում է Մարքսի ուսմունքը պետության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին այն բոլոր աղավաղումներից, վորոնց յենթարկվել եր այն 2-րդ Ինտերնացիոնալի առաջնորդների կողմից։*

*Ամեն վոք իր գրադարանում պետք է ունենա այս գիրքը և լավ ուսումնասիրի։*

———

*1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 2000, էջ 123, գինը 23 կ., 1925 թ.։*

*1905 թ. հեղափոխությունը հասկանալու համար Լենինի այս գրքույկին ծանոթանալն անհրաժեշտ է։*

*Գիրքը պարունակում է հետևյալ նյութերը 1. «Զեկուցումը» Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 3-րդ համագումարում, 2. «Պրոլետարիատի կռվի նպատակը մեր հեղափոխության մեջ», 3. «Հունվարի իննը» և 4. «Ռուսաստանի գործադուլների վիճակագրության մասին»։ Այս հոդվածները հրատարակված են նաև առանձին գրքերով։*

*Գրքին կցված են բազմաթիվ ծանոթություններ դեպքերի, դեմքերի և թվականների մասին։*

———

*1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 5000, էջ 56, գինը 35 կ., 1925 թ.։*

*Գիրքը բովանդակում է 1905 թ. հեղափոխությանը նախորդող անցքերը և հեղափոխության ընթացքը և խնդիրները վերլուծող ու պարզաբանող հոդվածների բնորոշ հատվածների սիստեմատիկ ժողովածուն։ Գրքին կցված են սոց. կուսակցությունների միջանի կոչերը և անհրաժեշտ ծանոթությունները։*



———

*ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (հոդվածներ և ճառեր).*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 5000, էջ 128, գինը 70 կ., 1925 թ.։*

*Ընկ. Լենինը 1918 թ. օգոստոսի 25-ին հանդես յեկավ լուսավորության աշխատողների համառուսական համագումարում, վորտեղ կանգ առավ այն հիմնական խնդիրների վրա, վոր դրված են սոցիալիստական հեղափոխության առաջ լուսավորության գործի ասպարեզում։*

*Հետագայում ընկեր Լենինը բազմիցս անդրադարձել է լուսավորության խնդիրներին թե իր ճառերում և թե առանձին հոդվածներում։ Ահա այդ ճառերի և հոդվածների ժողովածուն է այս հատորը։*

———

*«ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԸ».*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 2000, էջ 50, գինը 30 կ., 1925 թ.։*

*Այս գրքույկում զետեղված են Վ. Ի. Լենինի «Հունվարի իննը» զեկուցումը և «Ռուսաստանի գործադուլների վիճակագրության մասին» հոդվածը։ Զեկուցումը տվել է Ցյուրիխի «Ժողտանը» բանվ. յերիտասարդության կազմակերպած ժողովում 1917 թ. հունվարի 22-ին։ Զեկուցումն արվել է գերմաներեն լեզվով, ուստի Լենինը նախապես գրի չե առել այն։ Գերմաներեն բնագիրը գտնվում է Լենինի ինստիտուտում։ Լենինյան ինստիտուտն այս զեկուցումի մասին գրում է։*

*«Կասկած չկա, վոր Վ. Ի.-ի նոր հայտնագործած աշխատությունն ամենաարժեքավոր նյութը կլինի կուս. անդամների, «լենինյանների», կոմյերիտականների, բանվորների և գյուղացիների ամենալայն մասսաներին առաջին հեղափոխության պատմության հետ ծանոթացնելու համար»։*

———

*1-ԻՆ. ԶԵԿՈՒՅՈՒՄ, 2-ՐԴ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՌՎԻ ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.*—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, *տիրաժ 2000, էջ 72, գինը 40 կ., 1925 թ.։*

*«Զեկուցումը» այն ճառն է, վոր Լենինն արտասանել է Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցության 3-րդ համագումարում, վորին ներկա չեյին մենշևիկները, նրանք առանձին գումարեցին իրենց «համառուսական կոնֆերենցիան» և այդպիսով կազմակերպչական պառակտման սկիզբը դրին։ Զեկուցումը վերաբերում է ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատների մասնակցության հարցին։*

*Լենինը «Պրոլետարիատի կռվի նպատակը մեր հեղափոխության մեջ» հոդվածում պատասխանում է Մարտովի այն հոդվա-*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

ծին, վորը շոշափում ե պրոլետարիատի և սոցիալ-դեմոկրատիայի կովի նպատակը մեր հեղափոխության մեջ։

———

**ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, թարգմ. Խաչատրյան, տիրաժ 3000, եջ 200, գինը 40 կ., 1926 թ., Մոսկվա։

Այս գիրքը բովանդակում ե իր մեջ Լենինի կոոպերացիայի մասին հայտնած բոլոր կարծիքները՝ քաղված նրա հոդվածներից, ճառերից, նամակներից, բանաձևերից, սկսած 1902 թ. («Իսկրա» թերթի շրջանից)։

Խորհրդային շինարարության և առանձնապես կոոպերացիայի ասպարեզում աշխատող ամեն մի անհատ անհրաժեշտ ե վոր ուսումնասիրե այս գրքույկը։

———

**ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԵՆԵԳԱՏ ԿԱՈՒՑԿԻՆ.—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 147, գինը 20 կ., 1926 թ.։

1918 թ. լույս տեսավ Կաուցկու գիրքը՝ «Պրոլետարիատի դիկտատուրան» վերնագրով, վորը յերկրորդ Ինտերնացիոնալի ամբողջական սնանկության լավագույն որինակն եր։ Այդ գրքում պարզաբանված մտքերի և կաուցկիական «մարքսիզմի» աղավաղումների անալիզին նվիրված ե ներկա բրոշյուրը։ Ընկեր Լենինն իր այս աշխատության մեջ ջախջախելով Կաուցկուն, քննում և պարզաբանում ե պրոլետարական հեղափոխության խնդիրները մարքսիզմի հեղափոխական վոգով։

———

**ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ (1910—1920 Թ. Թ.).—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 400, գինը 80 կ., 1926 թ.։

Ներկա գրքում ամփոփված են ընկեր Լենինի ազգային հարցին նվիրված հոդվածները և ճառերը՝ սկսած 1910 թվականից մինչև Կոմինտերնի 2-րդ կոնգրեսը (1920 թ. հուլիս ամիսը)։ Ընկեր Լենինն ազգային հարցը շոշափել ե դեռևս 1900—1903 թվերին, սակայն այդ հարցի վրա առանձնապես կանգ ե առել 1913—1914 թվականներին և հիմնավորել ե բոլշևիկյան տեսակետն այս հարցի մասին։

Ազգային հարցը Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ միշտ առաջնակարգ տեղ ե գրավել։ Այժմ ել խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը հիմնված ե Լենինի ուսմունքի վրա, ուստի հասկանալի յե այն խոշոր նշանակությունը, վոր ունի Լենինի աշխատությունների այս հատորը։

———

**ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՏԱՊ.—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 119, գինը 30 կ., 1926 թ.։

Ընկեր Լենինի այս աշխատությունը գրված ե 1916 թվին, իմպերիալիստական պատերազմի ամենասուր մոմենտին և բուր-



ժուական հասարակակարգի վերջին շրջանի իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական հատկանիշերի ուսումնասիրությանն ե նվիրված։

Հայտնի յե, թե ինչպես իմպերիալիզմի եյությունը կեղծ մարքսիստական մեկնաբանություններով աղավաղվել ե Կաուցկու և 2-րդ Ինտերնացիոնալի այլ թեորետիկների կողմից։ Լենինը տալիս ե իմպերիալիզմի ճիշտ մարքսիստական բնորոշումը, և նրա այս գիրքը Կոմինտերնի գործունեյության թեորիական անկյունաքարերից մեկն ե։

———

**ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 308, գինը 1 ռ. 80 կ., 1926 թ.։

Այս ժողովածուի մեջ տպված են ընկեր Լենինի այն հոդվածները և ճառերը, վորոնք վերաբերում են Նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ-ին)։

Ի միջի այլոց այստեղ տպված ե ընկեր Լենինի նամակը՝ ուղղված Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Դաղստանի ու Լեռնային Հանրապետության կոմմունիստներին։

Նեպի եյությունը հասկանալու և նեպի պայմաններում սոցիալիզմի շինարարության խնդիրներին խելամուտ լինելու համար այս հատորն ամենակարևոր աղբյուրն ե։

———

**ՁԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՄԵՋ.—Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 135, գինը 40 կ., 1926 թ.։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, կոմմունիզմի ծավալումը բուրժուական մի շարք յերկըրներում այդ յերկրների բանվոր դասակարգերի առաջ դրեց մի շարք խնդիրներ, վորոնց լուծման ժամանակ յերևան յեկան բազմաթիվ թեքումներ, վոր սպառնում եյին բանվոր դասակարգի պայքարի ամրությանը և միասնականությանը։ Այդ թեքումների անխնա քննադատության ե նվիրված ընկեր Լենինի ներկա բրոշյուրը, վորտեղ պարզաբանվում և հիմնավորվում են բոլշևիզմի տակտիկան և ստրատեգիան։

———

**ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ** (ճառեր և հոդվածներ).—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 5000, եջ 250, գինը 70 կ., 1927 թ.։

Լավագույն միջոցն ե Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունն ուսումնասիրելու համար։ Ընկեր Լենինի հոդվածների մեջ՝ ուսումնասիրողը քայլառքայլ ապրում և տեսնում ե սոցիալիստական հեղափոխության ալիքի բարձրացումը, զգում ե նրա պուլսը։

———

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ.—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, (կազմեց և ծանոթություններով օժտեց Պ. Մ. Տաշկարով), տիրաժ 5000, էջ 37, գինը 20 կ., 1927 թ.:

Այս գիրքը Լենինի ճառերի և հոդվածների այն հատվածներն են, որ վերաբերում են Չինաստանին—հեղափոխությանը, տնտեսությանը, իմպերիալիստական պետությունների փոխհարաբերություններին—սկսած դեռևս 1900 թ. «Իսկրա» թերթի № 1-ում գրած հոդվածից: Գիրքը բաժանված է 4 գլխի.

1 ին. Ցարական Ռուսաստանը և Չինաստանը.

2-րդ. 1905 թիվը և 1910—1912 թ. թ. Չինաստանի հեղափոխությունը.

3-րդ. Պայքար իմպերիալիստների միջև Չինաստանը բաժանելու համար.

4-րդ. Գաղութային Արևելքը և նրա դերը համաշխարհային հեղափոխության մեջ:

Գրքի վերջում կան ծանոթություններ Չինաստանի դեպքերի և գործիչների վերաբերմամբ:

———

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ.—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, Ստալին, Բուխարին, տիրաժ 3000, էջ 95, գինը 30 կ., 1927 թ.:

Այս գիրքը մի ժողովածու չէ, որտեղ ընկ. ընկ. Լենինի, Ստալինի և Բուխարինի որոշ հոդվածները, ճառերը և զեկուցումներն են զետեղված, որ վերաբերում են Հոկտեմբերյան հեղափոխության, նրա դերին, նշանակության և բոլշևիզմի հաղթանակի գլխավոր պայմաններին:

———

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 4000, էջ 200, գինը 1 ռ. 10 կ., 1928 թ.:

«Ներկա ժողովածուն ամփոփում է Լենինի գլխավոր հոդվածները կամ ճառերը (յերբեմն միայն հատվածներ), որոնք խոսում են հեղափոխության մեջ գյուղացիության ունենալիք դերի մասին:

Գրքի ընթերցումը հեշտացնելու, ինչպես նաև հնարավորություն տալու, որ հարցի առաջին փուլերի անծանոթ յերիտասարդ ընթերցողի համար պարզ լինեն մի շարք կետեր, որոշ բացատրություններ ու ծանոթություններ են տրված գրքի վերջում»:

«Կոմմունիստ» № 6 1928 թ.

———

ՍՈՑԻԱԼԻԶՄՆ ՈՒ ԿՐՈՆԸ.—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, տիրաժ 2000, էջ 61, գինը 20 կ., 1928 թ.:

Այս գրքույկում ամփոփված են ընկ. Լենինի զանազան ժամանակներում գրած հոդվածները կրոնի դեմ, ինչպես «Սոցիալիզմն ու կրոնը» (1905 թ. դեկտ.), «Բանվոր. կուս. վերաբերմունքը դեպի կրոնը (1905 թ. մայիս), «Դասակարգերն ու կուսակցությունները իրենց վերաբերմունքով դեպի կրոնն ու յեկեղեցին» (1909 թ. հունիս) և մի հոդված «Պետություն և հեղափոխություն» գրքի 4-րդ գլխից, որտեղ Մարքսի և Էնգելսի դեպի կրոնն ունեցած տեսակետներն են պարզաբանվում:

———

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ.—**Վ. Ի. ԼԵՆԻՆ**, Ն. Ն. Պապովի առաջաբանով (ճառեր և հոդվածներ), տիրաժ 5000, էջ 385, գինը 1 ռ. 20 կ., 1927 թ.:

Այս հատորում հավաքված են այն բոլոր հոդվածները և ճառերը, որ ընկ. Լենինը գրել կամ ասել է Կոմինտերնի իդեական և քաղաքական գործունեությունը ղեկավարելիս: Հայտնի յե այն հսկայական դերը, որ Լենինը խաղում էր Կոմինտերնի 1-ին, 2-րդ, 3-րդ կոնգրեսների աշխատանքներում իր անմիջական մասնակցությամբ, յերբ հիմնադրվեց, ձևավորվեց և իդեապես ու կազմակերպչորեն լիակատար ծաղկման հասավ Կոմինտերնը: Այս հատորն ընթերցողի առաջ բաց կանի ոչ միայն այն շրջանի պատկերը, յերբ լենինիզմի հիմքի վրա ուռճանում էր Կոմինտերնը, այլև ցույց կտա այն անսահման ջեռանդը և հաստատակամությունը, որով Լենինը հմտորեն անձնապես ղեկավարում էր Կոմինտերնի առաջին տարիների գործունեությունը:

———

ԼԵՆԻՆԸ ՏՈԼՍՏՈՅԻ ՄԱՍԻՆ (հոդվածների ժողովածու).—Ֆ. Ռասկոլնիկովի առաջաբանով, տիրաժ 2000, էջ 68, գինը 40 կ., 1928 թ.:

Լենինյան հոդվածների այս ժողովածուն հրատարակված է Լև Տոլստոյի ծննդյան 100-ամյակի առթիվ: Լենինը մի քանի հոդվածներով (Տոլստոյը որպես ռուսական հեղափոխության հայելին, Տոլստոյը և արդի բանվորական շարժումը, Լ. Ն. Տոլստոյը ռուսական օպպորտյունիստների գնահատությամբ) մանրամասն վերլուծում է Տոլստոյի ստեղծագործությունը՝ ճշտելով նրա տեղը և արժեքը ռուսական գրականության մեջ բանվորական շարժման տեսակետից:

Գրքի վերջում տրված են ծանոթություններ դեմքերի և դեպքերի ու կարևոր թվականների մասին:

# ԼԵՆԻՆԻ ՅԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

*ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ.*—**Ն. Կրուպսկայա**, *թարգմ. Ս. Զորյան, տիրաժ 3000, եջ 144, գինը 30 կ., 1926 թ., Մոսկվա։*

*Ն. Կրուպսկայան, Վ. Իլյիչ Լենինի կինը և ամբողջ աշխատանքի ընկերը հետաքրքրական և ճշգրիտ ձևով պատմում է Լենինի մտերմական, հասարակական, քաղաքական և հեղափոխական կյանքի մասին։ Պատմում է, թե ինչպես է առաջին անգամ ծանոթացել Լենինի հետ, պատմում է նրա ընտանիքի կյանքից, նկարագրում է Լենինի կյանքը բանտում, աքսորում (Սիբիր) և արտասահմանի զանազան քաղաքներում։*

— -—

*ԼԵՆԻՆԻԶՄԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ.*—**Պ. Կերժենցև յեվ Օ. Լեոնտյև**, *տիրաժ 6000, եջ 348, գինը 1 ռ. 80 կ., 1928 թ.։*

*Այս ստվար հատորում շարադրված են լենինիզմի հիմնական սկզբունքները։ Գիրքը խիստ կարևոր է այն տեսակետից, վոր հանրամատչելի և ամենաթարմ աշխատությունն է տվյալ նյութի մասին. շարադրանքը հասնում է մինչև Կոմինտերնի 6-րդ կոնգրեսը և Կելլոգի պայմանագիրը։*

———

*ՄԵՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԸ.*—**Աշոտ Հովհաննիսյան**, *տիրաժ 3000, եջ 77, գինը 40 կ., 1926 թ.։*

———

*ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ.*—**Ա. Մռավյան**, *տիրաժ 10.000, եջ 26, գինը 15 կ., 1925 թ., Լենինի լուսանկարով։*

———

*ԼԵՆԻՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ.*—**Ա. Մռավյան**, *(Լենինի լուսանկարով), տիրաժ 10.000, եջ 15, գինը 8 կ., 1925 թ.։*

*Ընկ. Լենինի կյանքի և նրա կատարած գործի նկարագիրն է այս փոքրիկ բրոշյուրը։*

———

*ԼԵՆԻՆ.*—**Կ. Ռադեկ**, *տիրաժ 1200, եջ 116, գինը 30 կ., 1924թ., Մոսկվա։*

*Ռադեկն իր այս գրքում ուսումնասիրում է Լենինին իբրև հեղափոխության առաջնորդի և գծագրում նրա նշանակությունը։*

———



*ԼԵՆԻՆԻԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ.*—**Ի. Ստալին**, *տիրաժ 5000, եջ 116, գինը 30 կ., 1926 թ.։*

*Ընկ Ստալինի այս գիրքն ընդգրկում է լենինիզմի հիմնական խնդիրները—լենինիզմի բնորոշումը, գլխավորը լենինիզմում, «պերմանենտ» հեղափոխության խնդիրը, պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան, կուսակցությունը և բանվոր դասակարգը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու խնդիրը, պայքար սոցիալիստական շինարարության համար։*

*Ընկ. Ստալինի գիրքը լենինիզմը ճիշտ հասկանալու լավագույն աղբյուրներից մեկն է։*

# ՄԱՐՔՍԻԶՄԻ ԿԼԱՍՍԻԿՆԵՐ

*ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ.*—**Կ. Մարքս յեվ Ֆ. Էնգելս**, *գերմ. թարգմ. Ս. Կասյան, Դ. Ռյազանովի ծանոթություններով (ծանոթությունների թարգմ. Գ. Մելոյան), Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի գրադարան № 1, խմբագրությամբ Ս. Կասյանի. Մարքսի և Էնգելսի լուսանկարներով, տիրաժ 2000, եջ 236, գինը 1 ռ. 50 կ., 1927 թ.։*

*«Մանիֆեստ»-ի այս հրատարակությունը, վոր 236 եջ է, փոխանակ 70 եջի, պարունակում է Դ. Ռյազանովի ընդարձակ և մանրամասն ծանոթությունները «Մանիֆեստ»-ում հիշված և շոշափված պատմական դեպքերի, անցքերի և հարցերի վերաբերմամբ, ինչ վոր մեծագույն չափով հեշտացնում է տեքստի ըմբռնումը։*

———

*ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ.*—**Կարլ Մարքս յեվ Ֆրիդրիխ Էնգելս**, *գերմ. թարգմ. Ս Կասյան, տիրաժ 3000, եջ 70, գինը 40 կ., 1927 թ.։*

*Կոմմունիստական գրականության այս կլասիկ աշխարհահռչակ աշխատության թարգմանությունը ընկ. Կասյանը կատարել է հմտորեն և խնամքով։ Գրքի սկզբում տպված են ընկ. Կասյանի առաջաբանը «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունների մասին, ապա և Մարքսի ու Էնգելսի Ա. հրատարակության առաջաբանը՝ գրված 1872 թ. հունիսի 24-ին, Լոնդոն. Բ. հրատարակության առաջաբանը գրել է Ֆ. Էնգելսը 1883 թ. հունի-*

սի 28-ին, Լոնդոն, Մարքսի մահից 3 ամիս հետո։ Տպված են նաև Ենգելսի առաջաբանները «Մանիֆեստ»-ի ռուսական թարգմանության և այլ հրատարակությունների առթիվ։

———

ՄԱՐՔՍՆ ՈՒ ԵՆԳԵԼՍՆ ԻՐԵՆՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ.—**Վ. Ն. Շուլգին**, (հատվածներ մարքսիզմի հիմնադիրների չիրկերից, թարգմ. Թ. Ավդալբեգյան), մանկավարժի գրադարան, տիրաժ 2500, էջ 92, գինը 30 կ., 1928 թ։

«Այս գրքույկի հեղինակը Մարքսի ու Ենգելսի աշխատություններից խնամքով հավաքել է այն բոլոր նյութերը, որ վերաբերում են ժողովրդական լուսավորության հիմնական խնդիրներին»։

«Խորհ. Հայ.» № 83—2043, 8 ապրիլի 1928 թ։

———

1825 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ը.—**Գ. Պլեխանով**, թարգմանութ. Գ. Տ.-Մ.-ի, խմբագրությամբ Դր. Սիմոնյանի, սոցիալ-քաղաքական գրադարան, տիրաժ 3000, էջ 26, գինը 30 կ., 1925 թ., Մոսկվա։

Այս գրքույկը Պլեխանովի 1900 թ. ծննուում դեկտեմբերի 14/27-ին ռուսական ժողովում արտասանած ճառն է 1825 թվականի դեկտեմբերի 14-ի դեկաբրիստների ապստամբության 75-ամյակի առթիվ։

Չնայած դեկաբրիստների ապստամբության խնդիրն այժմ բազմաթիվ նոր նյութերի հիման վրա ավելի խոր ուսումնասիրության է յենթարկվել, այնուամենայնիվ Պլեխանովի այս ճառը դեռ մինչև այժմ պահում է իր արժեքը։

———

ՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԻ ՇՈՒՐՋԸ.—**Գ. Վ. Պլեխանով** (Ն. Բելտով), թարգմ. Դ. Սիմոնյան, նախաբան և ծանոթություններ Վ. Վահանյանի. տիրաժ 1000, էջ 330, գինը 2 ռ., 1926 թ., Մոսկվա։

Պլեխանովն այս հատորում պատասխանում է Միխայլովսկուն, Կարեյևին և ուրիշներին ու նրանց իդեալիստական հայացքներին հակադրում է Մարքսի մատերիալիստական մոնիստական պատմահայեցողությունը։ Պլեխանովի այս գիրքը մարքսիստական պատմա-փիլիսոփայության կարևորագույն աշխատություններից մեկն է համաշխարհային գրականության մեջ, իսկ ռուսական կյանքում այս գրքի դերն իրոք որ վիթխարի յէ. մարքսիզմի տարածման և հիմնավորման մեջ բացառիկ դեր ունի խաղացած այն։

———



ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ.—**Գ. Վ. Պլեխանով**, թարգմ. Գ. Մելոյան, տիրաժ 2000, էջ 60, գինը 60 կ., 1928 թ., Թիֆլիս, Պլեխանովի լուսանկարով և Ար. Մելիքյանի առաջաբանով, Պլեխանովի կենսագրական համառոտ ակնարկով և նրա գրական և քաղաքական գործունեյության գնահատականով։

Այս գիրքը Պլեխանովի 4 դասախոսությունն են՝ կարդացված ծննուում 1901 թ. պատմության մատերիալիստական ըմբռնման թեորիայի շուրջը։

Ինքնին հասկանալի յե այս գրքի նշանակությունը մարքսիզմի հիմունքներին ծանոթանալ ցանկացող ամեն մարդու համար. հանձնարարականի պետք չունի գիրքը։

———

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ՅԵՎ ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԸ.—**Գ. Վ. Պլեխանով**, տիրաժ 2000, էջ 28, գինը 20 կ., 1928 թ.։

Պլեխանովի այս գրքույկի թարգմանությունը հրատարակված է Տոլստոյի ծննդյան 100-ամյակի առթիվ, որը բնորոշում է Տոլստոյի արժեքը սոցիալիստական իդեոլոգիայի տեսակետից։

———

Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ.—**Վ. Վահանյանի** ընդհ. խմբագրությամբ և առաջաբանով, թարգմ. Դ. Սիմոնյան և Գ. Մեհրաբյան, հատոր III, տիրաժ 1000, էջ 468, գինը 3 ռ., 1926 թ., Մոսկվա։

Պլեխանովի այս հատորը պարունակում է հեղինակի «Մոնիստական պատմահայեցողության զարգացման խնդրի շուրջը» աշխատությունը (առանձին էլ է հրատարակված) և պատմական մատերիալիզմի շուրջը միքանի հայտնի հոդվածներ, ինչպես՝ Ոգյուստեն Թյերին և պատմության մատերիալիստական ըմբռնումը, միքանի խոսք ի պաշտպանություն տնտեսական մատերիալիզմի, պատմության մատերիալիստական ըմբռնման մասին, պատմության մասին, անհատի դերը պատմության մեջ։ Այս հոդվածները պատմական մատերիալիզմի հիմնավորման լավագույն նմուշներից են՝ «Մոնիստական պատմահայեցողության» կողքին։

# ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. - (Քաղգրագիտության դասագիրք) **Գ. Օրեզհաուզ—Ա. Պրոտասով**, 1928 թ., վերամշակված Զ. Լավրենտյևի և Դ. Յակոբսոնի կողմից, կոմյերիտմիության և ԿԻՄ-ի

մասին Ա. Պ. ՇՈԽԻՆԻ գրած գրույցների հավելումով. տիրաժ 4000, Ա. մաս, եջ 174, գինը 1 ռ., բ. մաս, եջ 208, գինը 1 ռ. 20 կ.։

«Կուսգրագիտության ներկա դասագիրքը, իբրև ձեռնարկ, օգտագործվել է քաղաքային կրճատ դպրոցների և կոմերիտմիու- թյան քաղդպրոցների համար։ Սակայն նյութի մշակումն այնպես է կատարված, որ հարմար է նաև ինքնակրթության համար։ Ներկա հրատարակության մեջ մշակված նյութերը հասցված են մինչև XV կուսկոնֆերենցիան։

«Խորհ. Հայ.» № 124—2084, 29 մայիսի 1928 թ.։

———

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ.— **Ա. Բերզնիկով յեվ Ք. Սվեսլով**, Ա. մաս, տիրաժ 8000, եջ 400, գինը 2 ռ. 50 կ., 1926 թ.։

Քաղգրագիտության այս ձեռնարկը, որ հատկապես պատրաստված է կուսակցական դպրոցների, բանֆակների և բարձրագույն դպրոցների համար, պետքական է նաև ինքնակրթության համար։ Հատորն սկսվում է քաղաքատնտեսության հիմնական գաղափարների բացատրությունից և հասնում է մինչև ՆԵՊ-ը։ Հատորի վերջում զետեղված են յերեք հավելված.

1) Անդրկ. Սոց. Ֆեդ. Խորհ. Հանրապետության Սահմանադրությունը։

2) Հայ. Սոց. Խորհ. Հանրապետության Սահմանադրությունը։

3) Դեպի ՌԿԿ(բ) տանող ուղին (սկզբնական շրջան—մինչև Ռ.Ս.-Դ.Բ.Կ. 1898 թվի I համագումարը և պրոլետ. քաղաքականությունը մինչև 1916 թ.)։

———

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ.—Ա. Պրակ. **Մ. Ի. Գրիշին**, (դասագիրք քաղգրագիտության քաղաքային նորմալ դպրոցների և ինքնակրթության համար), թարգմ. ռուսական 7-րդ (1927 թվականի) հրատարակությունից, տիրաժ 6000, եջ 307, գինը 1 ռ. 75 կ., (Բ տպագրություն)։

«Գրիշինի այս աշխատության առավելությունն այն է, որ խտացրած ձևով տալիս է այն բոլորը, ինչ անհրաժեշտ է իմանալ կուսակցության ընթացիկ խնդիրների, անցյալ տարիների պայքարի, 1905 թ. Հոկտ. հեղափոխության, սոցիալիստական շինարարության, կապիտալիստական և պրոլետարական պետության մասին»։

«Խորհ Հայ.» № 124—2084, մայիսի 29 1928 թ.։

***

«Գրիշինի աշխատությունը կազմված է քաղաքային նորմալ դպրոցների և ինքնակրթության համար, որի ծրագիրը հաստատված է Համ.Կ.Կ.(բ)Կ.Կ.-ի ագիտ բաժնի կողմից։ Նյութի մշակումն այնպես է կատարված, որ որևե խմբակ չհաճախող ընկերները ևս հնարավորություն ունեն օգտվելու գրքից ինքնակրթության աշխատանքների համար»։

«Կոմմունիստ» № 6 1928 թ.։

———

ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ.—**Մ. Ի. Գրիշին**, Բ. պրակ, տիրաժ 6000, (թարգմ. ռուսական 7-րդ 1927 թ. հրատարակությունից), եջ 335, գինը 1 ռ. 90 կ. (տես Ա. պրակ)։

———

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.—(Դասագիրք գյուղական շարժական դպրոցների և ինքնակրթության համար), պրակ Ա., **Մ. Ի Տայցին յեվ Յ. Ք Կոզլով**, տիրաժ 6000, եջ 148, գինը 85 կ., 1927 թ.։

Քաղգրագիտության այս առաջին պրակը պարունակում է հինգ զրույց. 1) Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ում. 2) Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը և Խորհ. Միությունը. 3) Նոր տնտեսական քաղաքականության եությունը. 4) Պետ. արդյունաբերությունը և նրա դերը ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության շինարարության մեջ. 5) Գյուղի շերտավորումը և կուսակցության քաղաքականությունը գյուղացիության զանազան խմբակների նկատմամբ։

———

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.—(Դասագիրք գյուղական շարժական դպրոցների և ինքնակրթության համար), պրակ Բ. **Մ. Ի. Տայցին յեվ Յ. Ք. Կոզլով**, տիրաժ 6000, եջ 227, գինը 1 ռ. 25 կ., 1927 թ.։

Քաղգրագիտության այս յերկրորդ պրակը պարունակում է 7 զրույց. 1—2) Կոոպերացիան գյուղում և նրա դերը գյուղատնտեսության առաջխաղացման մեջ դեպի սոցիալիզմ. 3) Կուս. շինարարության հիմնական խնդիրները ընթացիկ ժամանակաշրջանում. 4–5) Կուսակցությունը և խորհուրդները գյուղում. 6) Կոմ. յերիտմիությունը և նրա աշխատանքը գյուղում 7) Կուսակցությունը, բանվոր դասակարգը և գյուղացիությունը ցարական ինքնակալության դեմ մղած կռվի մեջ։

———

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.—**Մ. Ի. Տայցին յեվ Ք. Ք. Կոզլով**, (Բ. պրակ), տիրաժ 6000, եջ 375, գինը 1 ռ. 25 կ., 1928 թ.։

Քաղաքական գրագիտության այս ձեռնարկը պատրաստված է գյուղական շարժական դպրոցների և ինքնակրթության համար։

———

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.—(Դասագիրք գյուղական շարժական դըպրոցների և ինքնակրթության համար), պրակ Գ. **Մ. Ի. Տայչին** և **Ֆ. Ֆ. Կոզլով**, տիրաժ 4000, եջ 98, գինը 50 կ., 1928 թ.։

Քաղգրագիտության այս Գ. պրակը պարունակում է 4 գըրույց. 1—2) Կուսակցությունը, բանվոր դասակարգը և գյուղացիությունը փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների մեջ. 3) Կուսակցությունը, բանվոր դասակարգը և գյուղացիությունը քաղաքական կռվի վերջին և ՆԵՊ-ի շրջանում. 4) Հեղափոխական պայքարը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ի նշանակությունն ամբողջ աշխարհում և հեղափոխության հաղթանակի համար։

— ——

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.—**Մ. Ի. Տայչին յեվ Ֆ. Ֆ. Կոզլով**, դասագիրք գյուղական շարժական դպրոցների և ինքնակրթության համար, (պրակ Գ.) թարգմ. Բ. Հարությունյան, տիրաժ 4000. այս պրակը հասնում է մինչև 472 եջը, գինը 50 կ., 1928 թ.։

Պարունակում է 4 զրույց՝ սկսած 12-րդ զրույցից։

Այս զրույցների նյութերն են՝ կուսակցությունը, բանվոր դասակարգը և գյուղացիությունը փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների մեջ, քաղաքացիական կռվի վերջին և ՆԵՊ-ի շրջանում, հեղափոխության պայքարը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ի նշանակությունը աշխարհում և հեղափոխության հաղթանակի համար։

— - ———

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ.—(Բ. տպագրություն) հավելումներով. թարգմ. Սիմակ, տիրաժ 6000, եջ 176, գինը 80 կոպ., 1928 թ.։

Քաղգրագիտության այս դասագիրքը կազմված է զրույցների ձևով, պարզ և մատչելի յե, սպասարկելու յե կոչված հատկապես մեր գյուղական դպրոցների կարիքները։

# ԿՈՄՅԵՐԻՏ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

## ՅԵՎ ԼԿՅԵՄ I ԱՍՏ. ՔԱՂԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.—**Վ. Աստվածատրյան**, (Նամակ Ա.), տիրաժ 1000, եջ 15, գինը 10 կ., 1928 թ.։

«Նամակը» գրված է հատկապես գյուղյերիտ դպրոցների աշակերտների համար և տալիս է թե գործնական և թե տեսական ցուցմունքներ գարնանային աշխատանքների մասին։

———

ՋՐՈՒՅՑ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՀԵՏ 1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ.—**Անգրեյ**, կոմյերիտական գրադարան, պիոներական բաժին, թարգմ. Հ. Պետրոսյան, տիրաժ 4000, եջ 20, գինը 8 կ., 1927 թ.։

Պիոներներին հասկանալի լեզվով այս գրքույկը տալիս է 1905 թվի անցքերը, ինչպես՝ ռուս-յապոնական պատերազմը, Գապոնի գործունեյությունը, հեղափոխությունը նավատորմում, հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, Լենինի և բոլշևիզմի դերը, հեղափոխությունը։

——–

ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ—ԼԵՆԻՆԻ ՊԵՍ.—Թարգմ. Ն. Զարյան, կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, եջ 35, գինը 10 կ., 1927 թ.։

Այս չափածո գրվածքը բեմադրելու պատկերներ է տալիս. գրքի սկզբում գրված են բեմադրության տեխնիկայի մասին հրահանգներ, գծագրական ցուցմունքներ, յերգի և յերաժշտության մասեր։

———

ՈՎ Է ՂԵԿԱՎԱՐՈՒՄ—**Ջ. Օտրաձյան**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 38, գինը 20 կ., 1925 թ.։

Այս գրքույկում պարզ և բոլորի համար մատչելի լեզվով բացատրվում են մեր սահմանադրության հիմքերը։

———

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.—**Գր. Աղամալյան**, կոմյերիտական գրադարան № 21, տիրաժ 10.000, եջ 19, գինը 13 կ., 1925 թ.։

Գրքույկը նպատակ ունի տալ կոմյերիտականներին Խորհ. Հայաստանի գյուղատնտեսության մոտավոր պատկերը։ Գրքույկում բերված են թվական տվյալներ մեր գյուղատնտեսության մասին։

———

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— ԼԿՅԵՄ առաջին աստիճանի քաղդպրոցի գրադարան № 8. տիրաժ 4000, եջ 40, գինը 10 կ., 1926 թ.։

Այս գիրքն արհմիությունների ընդհանուր պատկերն է տալիս, նրանց դերը բանվ. շահերի պաշտպանության մեջ, նրանց մասնակցությունը արդյունաբերության կազմակերպման գործի, արհմիության նշանակությունն իբրև կոմմունիզմի դպրոց։

———

**ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**—**Ն. Բուխարին**, (զեկուցում Համ. ԼԿՅԵՄ 8-րդ համագումարում), տիրաժ 2000), էջ 83, գինը 25 կ., 1928 թ.:

Ընկ. Բուխարինի այս զեկուցումը նվիրված է յերիտասարդության համար մղվող պայքարի սրման, դասակարգային թըշնամիների և «ներքին փաստարարների», թշնամու դեմ պայքարելու յեղանակների և կոմյերիտմիության ներքին և միջազգային խնդիրների քննությանը:

———

**ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԴԱՏ.**—**Յելենա Ռոբինսկայա**, Մանկական գրադարան № 11, տիրաժ 5000, էջ 20, գինը 10 կ., 1926 թ.:

Անապաստան յերեխաների ոգտին պիոներական խմբակների կողմից տուփերով փող հավաքելիս պիոներ Սուրիկը տուփից փող է գողանում: Այս գրքույկը նվիրված է Սուրիկի դատին:

———

**ՏՐՈՑԿԻԶՄԻՑ ՄԵՆՇԵՎԻԶՄ (Տրոցկիստ. Յերիտմիություն).**—**Գ. Գումեզին**, տիրաժ 3000, էջ 260, գինը 85 կ., 1928 թ.:

Հայաստանի կոմյերիտմիության մեջ յերևան յեկած տրոցկիստական խմբակի իդեական սնանկությունը մերկացնելուն է նվիրված այս գրքույկը:

«Ընկ. Գումեզինի բրոշյուրը գոհացուցիչ պարզությամբ դրսևորում է տրոցկիզմի ամբողջ մանր-բուրժուական եյությունը»—գրում է ընկ. Նազարեթյանը գրքի առաջաբանում:

———

**ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ.**—**Գումեզին**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 69, գինը 25 կ., 1925 թ.:

Գրքույկը նվիրված է ԼԿՅԵՄ կանոնադրության բացատրությանը, նրա կազմակերպության ձևին և անելիքներին:

———

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻՆ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.**—**Գ. Գրեզեր**, թարգմ. Գ. Հակոբյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 80, գինը 25 կ., 1926 թ.:

«Այս փոքրիկ գիրքը գրել է գերմանացի մի կոմյերիտական և նպատակ ունի ԽՍՀՄ-ի գյուղացի յերիտասարդությանը պատմել կապիտալիստական յերկրների բանվորա-գյուղացիական յերիտասարդության կյանքի մասին»:

ՌԼԿՅԵՄ Կենտկոմի Քաղլուսվար

———



**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ (Խորհուրդների 3-րդ համագումարի մասին).**— Տիրաժ 4000, էջ 142, գինը 50 կ., 1925 թ.:

Խորհուրդների համամիութենական 3-րդ համագումարի լրագրական հաշվետվությունների քաղվածքներից կազմված այս գիրքը պարզաբանում է գյուղական կոմյերիտականներին մեր ներքին և արտաքին դրությունը, մեր արդյունաբերությունը, գյուղական տնտեսության ամրացման և բարձրացման միջոցները, շինարարական խնդիրները և այլն:

———

**ԳՅՈՒՂԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.**—ԼԿՅԵՄ առաջին ատիճ. քաղդպրոցի գրադարան, տիրաժ 4000, էջ 40, գինը 10 կ., 1926 թ.:

Գրքույկը թվում է այն ճանապարհները, վորոնցով գյուղն ընթանում է դեպի սոցիալիզմ:

———

**ՄԵՐ ՈՐԵՐԻ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ.**—**Ցիվել յեվ Գոլդբերգ**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 3000, էջ 235, գինը 75 կ.:

Այս գիրքը յերկու կոմյերիտականի պատահական ճանապարհորդության նկարագրությունն է և կենդանի ու վառ գծերով տալիս է ընթերցողին մեր որերի Հնդկաստանի հասարակական, տնտեսական, քաղաքական և կենցաղային կյանքի վողջ պատկերը:

———

**Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅԵՎ ԱՆԻ ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ.**—**Վարդան Տարախչյան**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 61, գինը 25 կ., 1926 թ.:

Տարախչյանի այս բրոշյուրը նպատակ ունի ի մի հավաքել յերիտասարդների և անչափահասների աշխատանքի պաշտպանությանը վերաբերող բոլոր կանոնադրությունները. ընդարձակ և մանրամասն մեկնաբանություններ են տրված յերիտ. ներկայացուցիչների անելիքների մասին: Բրոշյուրը պետք է ուղեցույց ծառայի յերիտ. ներկայացուցիչների համար:

———

**ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻԿԸ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ ԳՆԱՑ.**—**Պավել Դորոխով**, կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, էջ 47, գինը 20 կ., 1927 թ.:

Մի մանկատան սան Լենինին տեսնելու ցանկությամբ վոգևորված փախչում է մանկատնից և գնում Լենինին տեսնելու: Նրա Մոսկվա հասնելը զուգադիպում է Լենինի մահվանը, և նա միայն Լենինի թաղմանն է ներկա լինում ու տեսնում նրա դիակը,—ահա այս հետաքրքրական պատմվածքի նյութը:

———

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ.— ԼԿՅԵՄ առաջին ատրճանի քաղգպրոցի գրադարան № 14, տիրաժ 4000, էջ 47, գինը 20 կ., 1927 թ.:

Յերիտասարդական կոմմունիստական բանակի թիվը բոլոր յերկրներում, նր․ պայքարը բանվոր յերիտասարդության համար, Համ. ԼԿՅԵՄ-ը և Յերիտկոմինտերնը, կոմյերիտի աշխատանքը բջիջում և բջիջից դուրս,—այս են գրքույկի քննության
հարցերը:

———

ԿՈՄՍՈՄՈԼՆ ՈՒ ԿՈՕՊԵՐԱՑԻԱՆ.—**Ա. Յերսով**, թարգմ. Տարախչյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 89, գինը 25 կ., 1926 թ.:

Այս գրքույկը նվիրված է կոմսոմոլի և կոօպերացիայի կապի, նրա կոօպերացիայում ունեցած դերի և, որ գլխավորն է, կոմսոմոլի կոօպերատիվ գծով գյուղում կատարելիք աշխատանքի խնդիրներին:

———

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՄ. ԼԿՅԵՄ ՏՆՏ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.—**Վ. Զավյալով**, տիրաժ 4000, էջ 73, գինը 30 կ., 1928 թ.:

Վ. Զավյալովը 1927 թ. մարտի 30-ին արած այս զեկուցման մեջ մանրամասն քննում է այն խնդիրները, որ դրված են կոմյերիտմիության առաջ արտադրության սոցիալիստական ռացիոնալացման կապակցությամբ, և այն դերը, որ նա պետք է խաղա այդ գործում:

———

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ՅԵՎ ՀԻՇԻ ՀԿԿ(բ) ՄԵՋ ՄՏՆՈՂ ԱՄԵՆ ՄԻ ԲԱՆՎՈՐ.—**Գ. Զինովյեվ**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 99, գինը 30 կ., 1926 թ.:

Այս գրքույկը տալիս է կուսակցության մեջ մտնող բանվորին կոմ. կուսակցության համառոտ ուրվագիծը՝ սկսած կոմմունիստական մանիֆեստի հրատարակման տարուց (1847), ապա և կուսակցության նոր շրջանի խնդիրների պարզաբանումը: Գրքին կցված են կուսակցության նոր անդամներին վերաբերող 15 կանոն:

———

ՍՏԵՓԱՆ ԽԱԼՏՈՒՐԻՆ.—**Ս. Ի. Լեշչինսկայա**, կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, էջ 30, գինը 10 կ., 1927 թ.:

Պարզ, դյուրըմբռնելի ոճով պատմված է այս գրքույկում Ստեփան Խալտուրինի կյանքն ու հեղափոխական գործունեյությունը և տրված է նրա բնութագիրը: Գրքի շապկի վրա կա Խալտուրինի նկարը:

———



ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵԳԵՆԴԸ.—**Յեմոն Լոզինով**, տիրաժ 4000, էջ 101, գինը 40 կ., 1927 թ.:

Այս գիրքը նվիրված է Քրիստոսի շուրջն ստեղծված առասպելների վերլուծմանը, ավետարանիչների սուրբին և Քրիստոսի լեգենդի առաջանալու պատճառներին: Հեղինակը փաստերով հաստատում է, որ Քրիստոսը դասակարգային մի զենք է բուրժուազիայի ձեռքին պրոլետարիատի գիտակցությունը մթագնելու համար, ապա գծագրում է այն գիրքը, որ բանվորական մասսաները պետք է բռնեն Քրիստոսի և քրիստոնեական աշխարհայեցողության հանդեպ:

———

ՀԱՂԹԱՆԱԿ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ.—**Պ. Լապտեվ**, թարգմ. Կարա-Դարվիշ, պատանի պիոների գրադարան № 1, տիրաժ 4000, էջ 70, գինը 10 կ., 1926 թ.:

Հեղինակը պատմում է այն նվաճումների մասին, որ կատարել է տեխնիկան, ինչպես՝ շոգեկառքի, շոգենավ կառքի, ջերմաքարշի, էլեկտրաքարշի, ավտոմոբիլի, տրամվայի, շարժվող մայթի մասին և այլն: Գիրքը պատանի ընթերցողների համար հետաքրքրական և շահեկան շատ կողմեր ունի:

———

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ Է ԼԻՆԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ.—**Վ. Ի. Լենին**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 47, գինը 15 կ., 1926 թ.:

Այս գրքույկի առաջաբանում գրված է.

«Սակավաթիվ են այս գրքի էջերը, սակայն նրանց մեջ լիովին տեղավորվել է ամեն մի յերիտասարդ բանվորի և գյուղացու համար ամենաթանկագինն ու կարևորը: Այս այն կտակն է, որ Լենինը թողել է յերիտասարդությանը»:

**Մունցի**

———

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ.—ԼԿՅԵՄ 1 ատր. քաղդպրոցի գրադարան № 10, տիրաժ 4000, էջ 36, գինը 20 կ., 1927 թ.:

Միության անցյալը, նրա աճումը (1918 թվից սկսած), նրա դերն արտադրության մեջ, գյուղատնտեսության մեջ—ահա այս հարցերի պարզաբանումը կգտնի ընթերցողն այս գրքում: Ամեն մի կոմյերիտական պետք է կարդա այս գրքույկը:

———

ԽՍՀՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ.—ԼԿՅԵՄ առաջին ատրճանի քաղդպրոցի գրադարան № 12, տիրաժ 4000, էջ 36, գինը 20 կ., 1927 թ.:

Կապիտալիզմի մասնակի կայունացման, կապիտալիստական

յերկրների բանվորների վճարած հարկերի չափի, գաղութների ճնշված ժողովուրդների, կապիտալիզմի ներքին հակասությունների, պրոլետարական հեղափոխության անխուսափելիության, ապա և ԽՍՀՄ-ի շինարարության, կապիտալիստ. յերկրների և ԽՍՀՄ-ի զինված ուժերի, ԽՍՀՄ սոցիալիզմի կառուցման հարցերին ե նվիրված այս գրքույկը։

———

*ԱՌՈՐՅԱ.*—**Յեգոր Կազլով**, *թարգմ. Ա. Խոնդկարյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 3000, եջ 90, գինը 25 կ., 1925 թ.։*

Սա մի պատմվածք ե կոմյերիտական-կուսակցական կենցաղային կյանքից. Թարգմանությունը հաջող ե, կարդացվում ե հետաքրքրությամբ։

———

*ՔՐԻՍՏՈՍ ՋՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ.*—**Վլ. Կուզմին**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 28, գինը 10 կ., 1925 թ.։*

Ջատկի և Քրիստոսի հարության առասպելը մերկացնող մի շարադրություն ե այս փոքրիկ գրքույկը։

———

*ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ.*—*(Սանիտարական հուշատետր պատանի բանվորների համար)* **Ս. Կալմանսոն յեվ Դ. Ռեկարյուկով**, *Թարգմ. Գար. Հակոբյան, տիրաժ 4000, եջ 46, գինը 15 կ., 1925 թ.։*

Պատանի բանվորի համար այս գիրքն ամենօրյա գիրք ե իր առողջությունը պահպանելու համար, հեղինակները բացատրում են, թե առողջության համար ինչ դեր են կատարում մարդու կաշին, ատամներն ու բերանը, քթի խոռոչը, շնչառությունն ու օդը, ուտելիքը, խմելիքը, քունը, հանգիստը, աշխատանքը, մարզանքը. սեռական կյանքը, վեներական և այլ վարակիչ հիվանդությունները։

———

*ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՏԵՐՈՒՄ.*— *(ԿԻՄ-ի հերոսներն ու նահատակները), կազմեցին* **Ռ. Մասլին յեվ Զ. Վեյնբերգեր**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 90, գինը 25 կ., 1925 թ.,*

Այս գրքույկը նվիրված ե Գերմանիայում, Ֆրանսիայում, Ռուրի շրջանում, Հունգարիայում, Իտալիայում, Բուլգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Եստոնիայում, Լիտվայում, Ֆինլանդիայում, Յապոնիայում ընկած ԿԻՄ-ի հերոսներին և նահատակներին։ Գրքում թված են բոլորի անունները և ազգանունները փոքրիկ կենսագրականներով, ապա հիշված են այն պարագաները, վորոնցում զոհվել են նրանք։



*ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ.*— **Վ. Կասիմենկո**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 61, գինը 20 կ., 1925 թ.։*

Կոմյերիտմիության գյուղում տանելիք աշխատանքների վերլուծումն ե այս գրքույկը։ Առանձնապես կարևոր են այս գրքույկի այն հատվածները, վորոնց մեջ խոսվում ե գյուղի հասարակական և քաղաքական աշխատանքի և դրա թերությունների մասին։

———

*ԻՆՉ ՊԻՏԻ ԻՄԱՆԱ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՄԱՍԻՆ.*—**Ի. Կուրգեյեվ**, *կոմյերիտական գրադարան, Թարգմ. Լ. Աբ., տիրաժ 4000, եջ 80, գինը 20 կ., 1927 թ.։*

Կարմիր նավատորմն իբրև ԽՍՀՄ պաշտպան, քաղաքական աշխատանքը Կարմիր նավատորմում, Կարմիր նավատորմը հեղափոխական շարժման մեջ, նավատորմի նշանակությունն ապագա պատերազմում—ահա այս գրքույկում արծարծված հարցերը։

———

*ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ.*— *Թարգմ. Գ. Տ. Աստվածատրյան, ԼԿՅԵՄ առաջին աստիճանի քաղդպրոցի գրադարան № 11, տիրաժ 4000, եջ 59, գինը 25 կ., 1927 թ.։*

Կոմյերիտմիության պրոլետարական և կուսակցական ղեկավարությունը, կոմյերիտմիության անդամների դաստիարակությունը—ահա այն յերկու հիմնական հարցը, վորոնց նվիրված ե այս գրքույկը։

——

*ԱՍՏՎԱԾ ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ.*—**Պ. Վլասենկո**, *տիրաժ 4000, եջ 68, գինը 30 կ., 1926 թ.։*

Հեղինակը՝ հենվելով գիտության տվյալների վրա, տալիս ե աստուծո չգոյության փաստերը, կրոնի ստեղծած նախապաշարումները, անմիտ ծիսակատարությունները և այլն, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային իշխանության բռնած դիրքը կրոնի հանդեպ։ Հետո բերում ե խորհ. իշխանության դեկրետը կրոնի վերաբերյալ։

———

*ՍՈՖԻԱ ՊԵՐՈՎՍԿԱՅԱ.*—**Վալենտինա Կորդես**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 96, գինը 35 կ., 1927 թ.։*

Այս գրքույկը մանրամասն կենսագրությունն ե Ալեքսանդր 2-րդի վրա մահափորձ կազմակերպող հեղափոխականուհի Սոֆիա Պերովսկայայի։ Գծագրված ե նաև նրա դերը ռուսական հեղափոխական պատմության մեջ։

———

*ՊԱՏՐԱՍՏ.*—**Ն. Կրուպսկայա**, *(Լենինի յերեխայության նկարով), տիրաժ 5000, եջ 14, գինը 4 կ., 1927 թ.:*

*Այս գրքույկն ուղղված է պիոներներին, գրքույկում բացատրված է, թե ինչու Լենինը միշտ կոչ եր անում կուսակցության անդամներին միշտ պատրաստ լինել և թե ինչի պիոներները պետք է միշտ պատրաստ լինեն:*

———

*ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ.—Կոմյերիտական գրադարան, տիրաժ 3000, եջ 162, գինը 75 կ., 1928 թ.:*

*Այս գիրքը հոդվածների ժողովածու յե: Բոլոր հոդվածներն էլ նվիրված են ռազմականացման, յերկրի պաշտպանության խնդիրներին, հոդվածներ ունեն Ս. Ս. Կամենևը, Ռ. Մուկլևիչը, Վ. Պուտնան, Ի. Կլոչկոն, Ն. Արտեմենկոն, Բ. Կալբուսին, Ն. Սումսկին, Ս. Ֆրումը և Ֆրունզեն:*

*«Կոմյերիտմիության ռազմական աշխատանքը» ժողովածուի մեջ մատնանշված և առաջադրված են կոմյերիտմիության ռազմական աշխատանքի վերաբերյալ բոլոր կարևորագույն խնդիրները»:*

**Ա. Բուբնով**

———

*ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏ. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.*—**Ա. Կուրելլա**, *թարգմ. Ռ. Դաշտոյան, տիրաժ 4000, եջ 119, գինը 30 կ., 1927 թ.:*

*Սա մի համառոտ ուրվագիծ է կոմյերիտինտերնի պատմության՝ հետևյալ բովանդակությամբ.—պրոլ. պատանեկական կազմակերպությունները պատերազմի ժամանակ, կոմյերիտինտերնի կազմակերպումը, Բեռլինի կոնգրեսը, կոմյերիտինտերնի առաջին քայլերը, ԿԻՄԸ և ԿԻՄ-ի սեկցիաների բայլշևիկացումը:*

———

*ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆ Ե.—ԼԿՅԵՄ առաջին աստիճանի քաղդպրոցի գրադարան № 13, տիրաժ 4000, եջ 44, գինը 20 կ., 1927 թ.:*

*Կոմինտերնի կազմվելը, Կոմինտերնը բանվորական մասսայի համար մղվող պայքարում, Կոմինտերնի պայքարը գյուղացիության նվաճելու համար, համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման ղեկավարությունը և այլն,—ահա այս հարցերին է նվիրված գրքույկը:*

———

*ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.—ԼԿՅԵՄ 1-ին աստիճանի քաղդպրոցի գրադարան № 9, տիրաժ 4000, եջ 47, գինը 25 կ., 1927 թ.:*

*Ինչ նշանակություն ունի կոմկուսակցությունը բանվոր դասակարգի համար, նրա աճումը, կառուցվածքը—այս հարցերի համառոտ, սեղմ և պարզ բացատրությունն է տալիս այս գրքույկը:*



———

*ՅԵՐԻՏ. ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*—**Վլ. Միրոշևսկի**, *թարգմ. Ա. Խոնդկարյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 64, գինը 10 կ., 1925 թ.:*

*Գրքույկը հանրամատչելի մի ակնարկ է Յերիտ. Կոմմունիստական Ինտերնացիոնալի պատմության մասին:*

———

*ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՈՏԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ.*— **Ռ. Մաքսինա**, *կոմյերիտ գրադարան, պիոներ. սերիա, տիրաժ 3000, եջ 52, գինը 20 կ., 1927 թ.:*

*Այս գրքույկը Ռ. Մաքսինայի այն զեկուցումն է պիոներական շարժման կացության մասին, վոր արված է 1927 թ. մարտի 28-ին:*

*Զեկուցման մեջ հարուցված և լուծված են պիոներական շարժման մի շարք կարևոր խնդիրներ:*

———

*ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԸ (Ընկ. Կամո).*—**Ս. Ֆ. Մեդվեդևա-Տ.-Պետրոսյան**, *թարգմ. Գ. Տեր-Հակոբյանի, Պ. Լեպեշինսկու առաջաբանով և Ա. Զորինի ծանոթություններով, տիրաժ 5000, եջ 69, գինը 25 կ., 1926 թ.:*

*Այս գիրքը հեղափոխական հերոս ընկեր Կամոյի կենսագրությունն է, մինչև հիմա նրա կյանքի մասին գրվածներից ամենալիակատարը:*

———

*ՍՊԱՐՏԱԿ.*—**Ա. Միխայլով**, *թարգմ. Լ. Սաղաթելյան, կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, եջ 48, գինը 15 կ., 1927 թ.:*

*Ապստամբ ստրուկների ղեկավար հին հռոմեական Սպարտակի պատմությունն է այս՝ գեղարվեստական ձևով: Թե առանձին և թե խմբակային ընթերցանության լավ գիրք է և միանգամայն հանձնարարելի:*

———

*ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԼՐԱԳՐԵՐ.*—**Ն. Մակավեյեվ**, *թարգմ. Մ. Արմեն, կոմյերիտական գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, եջ 68, գինը 20 կ., 1927 թ.:*

*Այս գրքույկը պարունակում է կենդանի լրագրի նյութեր և ցույց է տալիս նրանց բեմադրման տեխնիկան:*

———

*6 ՏԱՐԻ.*—**Ա. Շահինյան**, *պատկերազարդ շապկով (կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, էջ 82, գինը 40 կ., 1927 թ.։*

*Այս գիրքը նվիրված է այն նվաճումներին, վոր արել է Խորհ. Հայաստանի պիոներական կազմակերպությունը 1921 թվից մինչև 1927 թ., սկսելով 18 պատկոմից, հասցնելով իր անդամների թիվը 40,000 պիոների և հոկտեմբերիկի։*

———

*ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.*—**Ա. Շոխին**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 3000, էջ 173, գինը 30 կ., 1927 թ.։*

*Շոխինի այս գրքույկում ներկայացված է այն վիճակը, վորում ապրում էր յերիտասարդությունը ցարիզմի որով, նրա մասնակցությունը հեղափոխական աշխատանքին և ցարիզմի տապալմանը, Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները յերիտասարդության համար։*

———

*ՊԻՈՆԵ՛Ր, ՀԻՇԻՐ ՅԵՐՐՈՐԴ ՈՐԵՆՔԸ.*—*Կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 3000, էջ 32, գինը 10 կ., 1928 թ.։*

*Պրոլետարական մանուկների դրությունը բուրժուական յերկրներում և մեր պիոներների կողմից նրանց ցույց տրվող նյութական աջակցությունը,—այս է հիշեցնում պիոներին գրքույկը։*

———

*ՊԻՈՆԵՐՆԵ՛Ր, ԴԵՊԻ ՃԱՄԲԱՐԸ.*—*Կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 2000, էջ 48, գինը 20 կ., 1927 թ.։*

*Այս գրքույկը նվիրված է այն խնդրին, թե ինչ է ճամբարը, ճամբարի աշխատանքը, ճամբար գնալուց առաջ ինչ պետք է սովորել, ինչպես կազմակերպել ճամբարը, աշխատանքի բաժանումը ճամբարում և այլն։*

———

*ՊԻՈՆԵՐ ԿԱՐԼ ՄՅՈՒԼԼԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.*—*Կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), պատկերազարդ, տիրաժ 4000, էջ 45, գինը 15 կ., 1927 թ.։*

*Այս նամակները Գերմանիայի Նյլգերսբուրգ քաղաքի ՄՈՊՐ-ի մանկատան կյանքից առնված պատկերներ են, գրված են աշխույժ և շնորհալի կերպով և կարդացվում են հետաքրքրությամբ։*

———

*ՊԻՈՆԵՐՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ.*—*Կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 4000, էջ 64, գինը 20 կ., 1927 թ.։*

*Մանկական կոմմ. միությունների ղեկավարների միջազգային 3-րդ. կոնֆերենցիայի աշխատանքի ամփոփումներն են այս գրքույկի գլխավոր բովանդակությունը։ Գրքի յերկրորդ մասը նվիրված է միջազգային մանկական կոմմունիստական շարժման կացության և հեռանկարներին։ Վերջում դրված են արտասահմանյան մանկ. կոմ. կազմակերպությունների և արտասահմանյան մանկ. կոմ. թերթերի ցուցակները և հակառակորդ խմբակների թիվը։*



———

*ԻՆՋ Է ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ.*—**Յա. Ռեզվուշկին**, *կոմյերիտ գրադարան № 45, տիրաժ 4000, էջ 82, գինը 25 կ., 1927 թ.։*

*Գիրքը պարզաբանում է կոմյերիտմիության դերը և նշանակությունը, վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպության, ԽՍՀՄ-ի պաշտպանի, վորպես յերիտասարդության շահերի պաշտպանի, վորպես սոցիալիստական շինարարության մասնակցի և բանվորա-գյուղացիական յերիտասարդության կոմմունիզմի դպրոցի։*

———

*ՌՈՒՍ. ԿՈՄ. ԿՈՒՍ. (բ) 13-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*—*թարգմ. Վ. Փոթեյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 2000, էջ 104, գինը 40 կ., 1924 թ.։*

*Այս գրքույկն ընկ. Բուխարինի ճառն է ՌԿԿ(բ) 13-րդ համագումարի արդյունքների մասին, այստեղ պարզաբանվում են յերիտասարդության վերաբերմամբ համագումարի ընդունած վորոշումները և բռնած գիծը։*

———

*ՄԻ ՋՐՈՒՅՑ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ.*—**Գ. Սաֆրազբեկյան**, *կոմյերիտ գրադարան № 28, տիրաժ 5000, էջ 20, գինը 8 կ., 1925 թ.։*

*Մի փոքրիկ զրույց է սա, վոր կարմիր-բանակայիններին բացատրում է մեր իրավակարգի, կոմկուսի, դաշնակիզմի, բանակի դասակարգային կազմակերպման խնդիրները։*

———

*ՊԱՐԶ ԶՐՈՒՅՑՆԵՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ.*—**Վլ. Սարաբյանով**, *տիրաժ 4000, էջ 171, գինը 65 կ., 1925 թ.։*

*Գիրքը կազմված է անպատրաստ ընթերցողի համար և շոշափում է մեր տնտեսական կյանքի համարյա բոլոր կողմերը. այսպես՝ պետական կապիտալիզմը, ռազմական կոմմունիզմը, ՆԷՊ-ը, խորհ. գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, փոխադրությունը, ֆինանսները, դեպի կոմմունիզմ ընթանալու ուղին՝ կան թվական և փաստական ճոխ և բազմակողմանի տվյալներ։*

———

*ՅԵՎՐՈՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ.*—**Գ. Սանդոմիրսկի**, *փոխ. Լ. Արխայանի, տիրաժ 4000, էջ 120, գինը 35 կ., 1925 թ.:*

*Հանրամատչելի կերպով շարադրելով մեծ պատերազմի պատճառները՝ հեղինակն անցնում է պատերազմից հետո իմպերիալիստական պետությունների կնքած խաղաղության պայմանագրերին, զինաթափման կոնֆերանսներին և ԽՍՀՄ-ի ու կապիտալիստական յերկրների փոխհարաբերություններին:*

---

*ՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐ.*—**Հաջիկ.** *կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), տիրաժ 1500, էջ 48, գինը 25 կ., 1927 թ.:*

*Խաղերի այս ժողովածուն հատկապես կազմված է այնպիսիներից, վոր կարելի յե խաղալ սենյակներում, ձմեռվա ամիսների համար են և ընդունված են պիոներական կազմակերպություններում:*

---

*ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ՝ ԼԿՅԵՄ ՀԱՄ. 5-րդ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.*—**Ն. Սլեպցով**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 3000, էջ 136, գինը 50 կ., 1927 թ.:*

*Այս գրքույկը միության 5-րդ կոնֆերենցիայի արդյունքների համառոտ շարադրանքն է հանրամատչելի ձևով:*

---

*ՀԱՄ. ԿԿ (բ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.*—**Վադիմ Սմուշկով**, *կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 84, գինը 20 կ., 1927 թ.:*

*Այս գիրքը, վոր հանձնարարված է Համ. ԼԿՅԵՄ ԿԿ-ի ագիտպրոպի կողմից, քննության է առնում ԽՍՀՄ-ի տնտեսությունը, սոցիալիզմի շինարարությունը և արտադրողական ուժերի զարգացումը, ինդուստրիացումը, պայքարը մասնավոր կապիտալի դեմ, կոոպերացիան և նրա դերը, պլանային ղեկավարությունը, գյուղացիական տնտեսությունը և սոցիալիզմը, սոցիալիստական կուտակումը, կուսակցության և ոպպոզիցիայի տնտեսական ծրագրերը:*

---

*1925—26 Թ. Թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ.—Փոխ. Սիրաս, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 26, գինը 10 կ., 1925 թ.:*

*Պարզ և գյուղացիներին հասկանալի վոճով պարզաբանված են այս գրքույկում 1925—26 թ. գյուղատնտեսական միասնական հարկի նշանակությունը, ձևերը և վոր խավերից ու ինչ չափով վերցնելու խնդիրը:*

---



*ՊԻՈՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 1928 Թ.—Խմբագրությամբ Գ. Ստեփանյանի և Ռ. Փորսուղյանի, տիրաժ 6000, էջ 142, գինը 40 կ., 1928 թ.:*

---

*ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.*—**Ի. Գ. Վերեշչագին**, *թարգմ. Գար. Հակոբյան, Ա. Շիրյամովի ընդհ. խմբագրությամբ, հանձնարարված Համ. ԼԿՅԵՄ-ի Կենտկոմի ագիտպրոպի կողմից, տիրաժ 4000, էջ 139, գինը 50 կ., 1927 թ.:*

*Այս գիրքը տալիս է խորհրդային իշխանության կառուցվածքը, համեմատելով այն նախկին ռուսական կայսրության կառուցվածքի հետ: Գիրքը ձեռնարկ է կոմյերիտականների համար, բայց հարմարեցրած է նաև ինքնակրթությամբ պարապողների կարիքներին:*

---

*ՌԴԱՋՈՒ ԱՐԱՄԸ.—Կոմյերիտ գրադարան (պիոներական սերիա), փոխ. Ս. Բոպադիրյան, տիրաժ 3000, էջ 31, գինը 10 կ., 1928 թ.:*

*Այս պատմվածքը պատանի Արամի սավառնակ կառուցելու և այդ սավառնակով թռչելու նկարագրությունն է: Պատմվածքը հետաքրքիր է և պիոներների համար հաճելի ընթերցանության նյութ է:*

---

*ՈՒՇՔ ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ.—Կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 23, գինը 10 կ., 1928 թ.:*

*Գրքույկն անհրաժեշտ գիտելիքներ է տալիս կոմյերիտականներին կով և ձի պահելու, կլիմայի, հիվանդությունների, ինչպես նաև հորթերի խնամքի խնդիրների մասին:*

---

*ՎԱՂԱԺԱՄ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԸ.*—**Ս. Եգրեյ Ուսպենսկի**, *թարգմ. Գար. Հակոբյան, կոմյերիտ գրադարան, տիրաժ 2000, էջ 38, գինը 35 կ., 1927 թ.:*

*Սա մի հանրամատչելի շարադրանք է վաղաժամ սեռական հարաբերությունների վնասների մասին՝ գրված պարզ, բայց գիտական ձևով:*

---

*ՊԻՈՆԵՐ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ.*—**Ն. Պոդսոցկի**, *Յերևան, 1928 թ., էջ 48, 20 կ.:*

---

*ՀԱՄ. ԼԿՅԵՄ VIII ՀԱՄԱԳՈՒՄ. ԲԱՆԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.—Յերևան, 1928 թ., էջ 170, 50 կ.:*

---

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԵՔ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾԸ.—**Ա. Շոխին**, Վաղ-պատ, 1928 թ., եջ 88, 50 կ.։

—

ԴԱՍԱԳԻՐՔ ԳՅՈՒՂԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՔԱՂԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ. պրակ Ա.—**Ֆ. Կոզլով յեվ Լ. Ռովենսկի**, Վաղ-պատ, 1929 թ., եջ 156, 70 կ.։

Նույնը, պրակ Բ., եջ 130, 60 կ.։

Նույնը, պրակ Գ., եջ 90, 40 կ.։

—

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՔԱՂԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱ.—**Գ. Լեվգուր**, Վաղ-պատ, 1929 թ., եջ 160, 90 կ.։

—

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ.—**Յա. Ռեզվուշկին**, Թիֆլիս, 1928 թ., եջ 64, 35 կոպ.։

—

ԸՆԹԱՑԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿ.—**Գ. Լեվգուր**, Թիֆլ., 1929 թ., եջ 88, 45 կ.։

—

ՀԱՄ. ԼԿՅԵՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (հոկտ. 28-ին, 1928 թ.).—Թիֆլիս, 1929 թ., եջ 32, 15 կ.։

—

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԸ.—Յերևան, 1929 թ., եջ 128, 50 կ.։

—

ՀԱՄ. ԼԿՅԵՄ. ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.—**Ա. Շոխին**, Թիֆլիս, 1929 թ., եջ 208, 1 ռ. 10 կ.։

—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՄՈՏԱԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.—Վաղ-պատ. 1929 թ., եջ 82, 25 կոպ.։



# ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ.—**Ա. Լուկաչեվսկու** խմբագրությամբ և Յեմ. Յարոսլավսկու առաջաբանով, տիրաժ 3000, եջ 422, գինը 2 ռ. 20 կոպ., 1928 թ.։

Այս գիրքը գիտականորեն պարզում է կրոնի և գիտության տարբերությունը, լուսաբանում է կրոնի և քրիստոնեության ծագումը, ցույց տալիս, թե ինչպես կրոնը զենք եր կապիտալիզմի և ռուսական ինքնակալության ձեռքին։ Առանձին գլուխներ են նվիրված կրոնի և սոցիալիստական շինարարության, կրոնի և բարոյականության հարցերին։ Գրքի վերջում մեթոդական ցուցմունքներ կան հակակրոնական խմբակների համար։

———

ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵԳԵՆԴԸ.—**Անտոն Լոգինով**, տիրաժ 4000, եջ 101, գինը 40 կ., 1927 թ.։

Այս գիրքը նվիրված է Քրիստոսի լեգենդի առաջանալու պատճառներին։ Հեղինակը փաստերով հաստատում է, վոր Քրիստոսը դասակարգային մի զենք է բուրժուազիայի ձեռքին պրոլետարիատի գիտակցությունը մթագնելու համար, ապա գծագրում է այն դերը, վոր բանվորական մասսաները պետք է բռնեն Քրիստոսի և քրիստոնեական աշխարհայեցողության հանդեպ։

———

ՍՈՑԻԱԼԻԶՄՆ ՈՒ ԿՐՈՆԸ.—**Վ. Ի. Լենին**, մանրամասնությունները տես «Լենինյան սերիա» բաժնում։

———

ՔՐԻՍՏՈՍ ՉՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ.—**Վլ. Կուզմին**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, եջ 28, գինը 10 կ., 1925 թ.։

Զատկի և Քրիստոսի հարության առասպելը մերկացնող մի շարադրություն է այս փոքրիկ գրքույկը։

———

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ.—(Թույլատրըված ՊետԳիտԽորհի կողմից) Յեմ. Յարոսլավսկու առաջաբանով, տիրաժ 2000, եջ 362, գինը 2 ռ. 20 կ., 1928 թ.։

Այս ձեռնարկը հատկապես սահմանված է գյուղական հակակրոնական ակտիվի և գյուղական հակակրոնական խմբակների համար և ընդգրկում է կրոնի, կյանքի, մարդու ծագման և դրանց հետ կապված այլ բազմաթիվ հարցերի լուսաբանությունը։

———

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՎԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Ծննդոց գիրք).—2-րդ մաս, **Յեմ. Յարոսլավսկի**, թարգմ. Հ. Սաուկյան, տիրաժ 3000, եջ 84, գինը 25 կ., 1925 թ.։

Աստվածաշնչի Ծննդոց գրքի գիտական վերլուծությանն է նվիրված այս գիրքը։ Հիանալի ցուցադրված է, թե ինչքան քիչ «սուրբ» բան կար Ծննդոց գրքում, և թե ինչքան «աստծո» հետ կապ չունեցող պատմություններով է խճողված այն։

Ընկ. Յարոսլավսկու գիրքը հակակրոնական պրոպագանդայի լավագույն զենքերից մեկն է։

———

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԸ.—**Նիմանգ**, տիրաժ 2000, եջ 40, գինը 15 կ., 1928 թ.։

Հեղինակը գիտական-պատմական վերլուծությամբ լուսաբանում է աստվածածնի տոնի ծագումը և ծիծաղելի դարձնում այդ տոնի մասին տերտերների ստեղծած առասպելները։

———

ԱՍՏՎԱԾ ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ.—**Պ. Վլասենկո**, տիրաժ 4000, եջ 68, գինը 30 կ., 1926 թ.։

Հեղինակը հենվելով գիտության տվյալների վրա, տալիս է աստծո չգոյության փաստերը, կրոնի ստեղծած նախապաշարումները, անմիտ ծիսակատարությունները և այլն, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային իշխանության բռնած դիրքը կրոնի հանդեպ։ Հետո բերում է խորհրդային իշխանության դեկրետը կրոնի վերաբերյալ։

---

# ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ.—**Վ. Լինցվարեվ**, թարգմանեց և հավելվածներով լրացրեց Մանուկ Ղազարյան, պրակ Գ., տիրաժ 4000, եջ 232, գինը 1 ռ. 40 կ., 1927 թ.։

(Տես պրակ Ա.)։

Այս պրակի վերջում դրված է կոոպերացիայի մասին յեղած գրականության ընդհանուր ցուցակ։

———

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ.—**Վ. Լինցվարեվ**, թարգմանեց ծանոթություններով լրացրեց Մանուկ Ղազարյան, պրակ Բ., տիրաժ 4000, եջ 230, գինը 75 կ., 1927 թ.։

(Տես պրակ Ա.)։

———



ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ. - **Վ. Լինցվարեվ**, թարգմանեց և ծանոթություններով լրացրեց Մանուկ Ղազարյան, պրակ Ա., տիրաժ 4000, եջ 112, գինը 75 կ., 1927 թ.։

Մեր դպրոցներում ընդունված այս ձեռնարկը բաղկացած է յերեք մասից. 1) պարզաբանում կոոպերացիայի սոցիալ տնտեսական հիմքերի և նրա դասակարգային բնույթի. 2) նկարագրություն բոլոր տեսակի կոոպերատիվների կազմակերպչական և գործնական աշխատանքների 3) ժամանակակից կոոպերատիվ շարժման հետ կապ ունեցող հարցեր։

Ամեն մի մասը հայերեն հրատարակության մեջ կազմում է մի պրակ։

———

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.—**Վ. Ի. Լենին**։

(Մանրամասնությունը տես «Լենինյան սերիա» բաժնում)։

———

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ.—**Ն. Լ. Մեշչերյակով**, տիրաժ 5000, եջ 167, գինը 1 ռ. 10 կ., 1925 թ.։

Այս գիրքը լիակատար ծանոթություն է տալիս կոոպերացիայի ծագման, զարգացման և զանազան տեսակի կոոպերացիաների մասին։ Հավելվածում կա մի հատված՝ Լենինը կոոպերացիայի մասին։

Մեշչերյակովի գիրքը կոոպերացիայի մասին յեղած լավագույն աշխատություններից մեկն է համարվում։

---

# ՌԱԶՄԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.—(Քրեստոմատիա ընթերցանության համար), Բ. պրակ, կազմեց Ս. Ասլիբեգյան, տիրաժ 1500, գինը 35 կ., 1928 թ.։

Քրեստոմատիայի Բ. պրակը խոսում է սոցիալիստական շինարարության մասին, ինչպես նաև արտաքին առևտրի, հարկերի, ֆինանսների, հողային օրենսգրքի, պատերազմի վտանգի, յերկրի պաշտպանության, ավիացիայի, քիմիայի մասին, ապա նաև այն մասին, թե ինչ պարտականություններ ունի կարմիրբանակայինն արձակուրդների ընթացքում։

———

ՀՈՆՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.—(Քրեստոմատիա ընթերցանության համար), Ա պրակ, կազմեց Ս. Ասլիբեգյան, տիրաժ 3000, էջ 288, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.։

Այս քրեստոմատիան կարմիր-բանակայիններին հարուստ ընթերցանության նյութ է տալիս Հոկտեմբերյան հեղափոխության, Լենինի կյանքի և գործի, ինչպես նաև Հայաստանի խորհրդայնացման անցքերի մասին։

———

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.—**Ա. Բաղդասարյան**, Շ. Ամիրխանյանի առաջաբանով, տիրաժ 2000, էջ 150, գինը 1 ռ. 20 կ., 1928 թ.։

Այս գիրքն առաջին փորձն է Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ռազմական գործողությունների նկարագիրը տալու ասպարեզում։ Գրքին կցված են 8 քարտեզ՝ ռազմական գործողությունների ուղեգիծը և կռվի կենտրոնները ցույց տալու համար։

———

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ.—Մաս I, կազմեց **Ա. Բաղդասարյան**, տիրաժ 2500, էջ 227, գինը 1 ռ. 20 կ, 1928 թ.։

Այս ձեռնարկը հրատարակված է բարձրագույն կրթական հիմնարկների, 2-րդ աստիճանի դպրոցների, տեխնիկումների, Պաշը-Ավիաքիմի ռազմական խմբակների ու պահեստի կրտսեր ու միջին հրամկազմի համար և ամբողջ աշխատունակ բնակչությունը յերկրի պաշտպանության համար նախապատրաստելու նպատակին է հետամուտ։

———

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ.—**Գրիգ**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 53, գինը 30 կ., 1926 թ.։

Այս գրքույկի նպատակն է տալ համառոտ տեղեկություններ միլիցիոն սիստեմի էության, յերկրային զորամասերի կառուցվածքի և յերկրի ռազմականացման մասին։ Գրքի վերջում դրված է հատուկ ծրագիր յերկրային զորամասերի փոփոխական կազմի ուսուցման և ծառայության կարգի վերաբերյալ։

———

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՅԺՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ.—**Ն. Լեսեվիցկի**, (պատկերազարդ), տիրաժ 4000, էջ 63, գինը 25 կ., 1926 թ.։

Ռազմական նորագույն տեխնիկայի նկարագրությանն է նվիրված այս գիրքը. տեքստը լուսաբանելու համար կան շատ նկարներ։

Գրքին կցված է նաև համաշխարհային պատերազմի զոհերի վիճակագրությունը։

———



ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍՈՒՐՆ Է.—**Ն. Ն. Խարիտոնով**, տիրաժ 3000, էջ 49, գինը 30 կ., 1928 թ.։

Ընկ. Խարիտոնովն իր գրքույկում պարզաբանում է ամեն մի բանակի դասակարգային բնույթը, պրոլետարիատի դիկտատուրայի և Կարմիր բանակի կապը, Կարմիր բանակի ու Համկոմկուսի կապը և քաղ. դաստիարակությունը Կարմիր բանակում։

———

ԱՊԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՅԼՇԵՎԻԶՄԸ.—**Դ. Մարեցկի**, տիրաժ 2000, էջ 4, գինը 25 կ., 1927 թ.։

Կապիտալիստական յերկրների կատաղի սպառազինումը, կասկածից դուրս է, որ նոր պատերազմներ և ավերներ է պատրաստում ամբողջ աշխարհում։ Այս կապակցությամբ հեղինակը պարզաբանում է այն անելիքները, որ դրված են միջազգային բայլշևիզմի, միջազգային պրոլետարիատի հեղափոխական առաջնորդի առաջ։

———

ԻՆՉՈՒ ՅԵ ՀԱՐԿԱՎՈՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ.—**Մ. Ծիռով**, կոմյերիտ գրադարան, տիրաժ 4000, էջ 35, գինը 15 կ., 1928 թ.։

Թեև խորհ. իշխանությունը ձգտում է խաղաղության, բայց միջազգային բուրժուազիան մեզ ատում է և սառն սրում մեր դեմ։ Ի՞նչ դեր ունի կատարելու Կարմիր բանակն այսպիսի պայմաններում,—ահա այս հարցին է պատասխանում գրքույկը։

———

ՌԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻՂԸ.—**Ռ. ամ Սարգսյան**, տիրաժ 3000, էջ 59, գինը 50 կ., 1925 թ.։

Հեղինակը համառոտ պատմում է ոդային տորմիղի ծագումը, զարգացումը, խոսում է ռազմական տորմիղի. քաղաքացիական տորմիղի մասին, հաղորդակցության, գյուղի կարիքներին ծառայելու, անտառային տնտեսության մեջ կատարած նրա գերի մասին, ոդային տորմիղի, ինչպես նաև զանազան յերկրներում այժմյան դրության մասին։

# ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԳՅՈՒՂՈՒՄ.—Բանվորուհու և գեղջկուհու գրադարան № 9, **Ա. Գենս**, տիրաժ 2000, եջ 27, գինը 15 կ., 1927 թ.:

Գրքում տրված են գործնական ցուցմունքներ գյուղում մայրության և մանկության պաշտպանության գործի կազմակերպման մասին, ապա գրքի վերջում գրված է օրինակելի մի սննդացուցակ յերեխաների համար, ինչպես նաև 9 կետից բաղկացած կանոններ մսուրի և 7 կետից բաղկացած կանոններ մայրերի համար:

———

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ.—**Ա. Մ. Կալիգինա**, բանվորուհու և գեղջկուհու գրադարան (իրավաբանական սերիա), թարգմ. Հ. Հարություն, տիրաժ 3000, եջ 31, գինը 20 կ., 1925 թ.:

Այս գրքույկում մատչելի լեզվով ցույց է տրված, թե հին կառավարության օրով ինչպիսի ծանր պայմաններում եյին գտնվում գեղջկուհիները և ընդհանրապես կանայք: Պարզաբանված են այն տարբերությունները, վոր կան բուրժուական և Խորհրդային Միության մեջ կանանց իրավունքի նկատմամբ:

———

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ.—**Մ. Կույբիշեվա**, բանվորուհու և գեղջկուհու գրադարան, փոխ. Հ. Հարություն, տիրաժ 4000, եջ 32, գինը 15 կ., 1926 թ.:

Հեղինակը շատ պարզ լեզվով բացատրում է խորհուրդների կազմությունը, ընտրությունները, համագումարները, գործադիր կոմիտեները, կուսքաղաքականությունը գեղջկուհիների իրավունքների մասին և այլն:

———

Վ. Ի. ԼԵՆԻՆ (ՈՒԼՅԱՆՈՎ).—**Վ. Ի. Նեվսկի**, Բանվորուհու և գեղջկուհու գրադարան, տիրաժ 4000, եջ 48, գինը 30 կ., 1926 թ.:

Ընկ. Լենինի կյանքի և գործունեյության պատմությանն է նվիրված այս գրքույկը: Ընկ. Լենինի կյանքի և գործունեյության մասին գրված բազմաթիվ գրքերից ընկ. Նեվսկու այդ աշխատությունն ամենապարզերից և մատչելիներից մեկն է:

———

ԻՆՉՊԵՍ, ՈՒՄԻՑ ՅԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐ ՀԱՎԱՔՈՒՄ.—**Վ. Նոսով**, թարգմ. Հ. Հարություն, Բանվորուհու և գեղջկուհու գրադարան № 8, տիրաժ 2000, եջ 20, գինը 15 կ., 1927 թ.:

Պարզ, բանվորուհիներին և գեղջկուհիներին դյուրըմբռնելի



լեզվով պատմված է, թե ինչ է հարկային քաղաքականությունը, բուրժուական և Խորհրդային Միության հարկային քաղաքականության տարբերությունը, պարենմասնատրումից պարենհարկին անցնելը, միասնական գյուղատնտեսական հարկը, ապա բացատրված է, թե ինչի վրա եյին ծախսվում ցարական հարկերը և ինչի վրա յեն ծախսվում Խորհրդային Միության հարկերը:

———

ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄԱ.—**Պ. Զերգանցեվ**, տիրաժ 2000, եջ 47, գինը 15 կ., 1928 թ.:

Այս գրքույկը շոշափում է խորհրդային օրենքը և միութենական աշխատանքի պայմանագիրը բատրակների, բատրակուհիների և հովիվների պաշտպանության վերաբերյալ և այս բոլորը համեմատում է ցարական ժամանակների հետ: Գրքույկը գրված է յերկու նպատակով—կամ բատրակների և բատրակուհիների ժողովներում զեկուցելիս ոգտվել դրանից, կամ ուղղակի գրքի բարձրաձայն ընթերցում կատարել:

## ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՀԵՍՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՖԱԲՐԻԿԱՆ.—Թարգմ. **Ա. Ե. Ստ.-ի**, հասարակագիտական սերիա № 12, տիրաժ 3000, եջ 40, գինը 20 կ., 1927 թ.:

Այս գրքույկն ընդգրկում է մինչկապիտալիստական արտադրական ձևերը, դասակարգերի ծագումը և նրանց զարգացումը, ծանր արտադրության հոգևարքը և կապիտալիստական արտադրության առաջացումը, պրոլետարիատը և հավելյալ արժեքի թեորիան:

———

ՁԵՌՆԱՐԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ.—Կազմեցին Ռափ. Աբրահամյան և Յեղ. Հասրաթյան, (հրատարակված Քաղլուսգլխվարի գծով), տիրաժ 3000, եջ 105, գինը 80 կ., 1927 թ.:

Այս ձեռնարկը քաղլուսվարի դպրոցներում պարապող դասատուների համար է: Վոչ միայն նյութ է մատակարարում ուսուցչին, այլ ցույց է տալիս դասավանդման մեթոդը:

———

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.—Թարգմ. Հ. Հարությունյանի, հասարակագիտական սերիա № 15, տիրաժ 3000, եջ 30, գինը 20 կ., 1927 թ.:

Գրքույկում զետեղված են կտորներ Վ. Ի. Լենինի այ[illegible] հոդ-

վածներից, վորոնք վերաբերում են հետևյալ հարցերին՝ բանվոր-
կուսակցությունը և գյուղացիությունը, պրոլետարիատը և գյու-
ղացիությունը, գյուղացիները և բանվորները, ինչպես նաև խոր-
հրդային իշխանության հողային դեկրետը, վորը գրել է Վ. Ի.
Լենինը 1917 թ. հոկտ. 26-ին։

———

ՆԱԽԱՄԱՐԴՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ.—**Մ. Գրեմյացկի**, ռուս. թարգմ. Հ. Ստեփանյան (հասարակագիտական սերիա) № 17, տիրաժ 3000, եջ 72, գինը 40 կ., պատկերազարդ, 1928 թ.։

Նախամարդու գործիքները, այն նյութերը, վորոնցից նա շինել է իր գործիքները, այն ընթացքը, վորով կատարվել է նախամարդու տեխնիկայի զարգացումը,—ահա գրքույկի քննության առած խնդիրները։ Գիրքն ունի տեքստի համապատասխան նըկարներ։

———

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե.—**Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, փոխ. Յե. Լալայանի, աշխատանքի Ա. աստ. դպրոցի գրադարան, («Դարեր և մարդկանց աշխատանքը» սերիա), պրակ Զ., Գ. հրատարակություն, տիրաժ 4000, եջ 64, գինը 15 կ., 1928 թ.։

Զ. պրակը նվիրված է մեր արդի խորհրդային կյանքի միքանի հարցերին. նկարագրված է կոլլեկտիվ արտադրության մի-լոր տեսակների կապը, հողն ու մարդիկ ԽՍՀՄ-ի մեջ, բոնոյան կոմմունան, ԽՍՀՄ-ի սոցիալական և աշխատանքի Բրիգիպանությունը, ԽՍՀՄ-ի քաղաքական կազմը և այլն։

———

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ.—**Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, փոխ. Յե. Լալայանի, աշխատանքի Ա. աստիճ. դպրոցի գրադարան, («Դարեր և մարդկանց աշխատանքը» սերիա), պրակ Ե., Գ. հրատարակություն, տիրաժ 4000, եջ 124, գինը 25 կ., 1928 թ.։

Ե. պրակը նվիրված է արդյունաբերական կապիտալիզմի շրջանի նկարագրությանը։

———

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ.—**Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, փոխ. Յեր. Լալայանի, աշխատանքի Ա. աստիճ. դպրոցի գրադարան, («Դարեր և մարդկանց աշխատանքը» սերիա), պրակ Դ., Գ. հրատարակություն, տիրաժ 4000, եջ 37, գինը 10 կ., 1928 թ.։

Դ. պրակի բովանդակությունն է առևտրական կապիտա-



լիզմի շրջանը—Ֆրանսիական գյուղացիների ապստամբությունը, թագավորն ու ժողովուրդը Ֆրանսիայում, Ստեփան Ռազին և Պուգաչովյան ապստամբությունը Ռուսաստանում։

———

ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ.—**Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, (պրակ Գ.), փոխադրություն ռուսերենից Յե. Լալայանի, (Գ. հրատարակություն), աշխատանքի Ա. աստիճ. դպրոցի գրադարան, տիրաժ 4000, եջ 28, գինը 10 կ., 1928 թ.։

Գ. պրակը նվիրված է ֆեոդալիզմին և քաղաքների առաջանալուն։

———

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ.—(Պրակ Բ.) Յերկրագործության յերախայրիքը, **Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, փոխադր. ռուսերենից Յե. Լալայանի, (Գ. հրատարակություն), աշխատանքի Ա. աստիճ. դպրոցի գրադարան, տիրաժ 4000, եջ 71, գինը 15 կ., 1928 թ.։

Այս Բ. պրակում նկարագրված է տոհմերի թափառական կյանքը, նրանց տնտեսությունը։ Առանձնապես հետաքրքրական է 12-րդ գլուխը, վորը նվիրված է վարելահողի և արոտատեղիի դարավոր պայքարին Հայաստանում։

———

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ.—**Յե. Զվյագինցեվ յեվ Օ. Բերնացեվսկի**, (պրակ Ա.), ռուս. փոխադրություն Յե. Լալայանի, (Գ. հրատարակություն), աշխատանքի Ա. աստիճ. դպր. գրադարան, տիրաժ 4000, եջ 78, գինը 20 կ., պատկերազարդ, 1928 թ.։

Մեր դպրոցների հասարակագիտության դասավանդման աջակցելու յե կոչված այս գիրքը, վորի Ա. պրակը նվիրված է նախնական մարդու կյանքին։

———

ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.—**Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկի**, թարգմ. Հ. Հովակիմյան, հասարակագիտական սերիա № 15, տիրաժ 3000, եջ 35, գինը 20 կ., 1927 թ.։

Գրքույկը քննության է առնում տնային արդյունաբերությունը, արհեստը, տնայնագործությունը մինչև հեղափոխությունը, ապա ժամանակակից մանր արդյունաբերությունը, արտնայնագործական արդյունաբերությունն Անդրկովկասում, տնայնագործական արդյունաբերությունը Հայաստանում։

———

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ.— **Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկիյ,** թարգմ. Հ. Հովակիմյան, հասարակագիտական սերիա № 19, տիրաժ 3000, եջ 32, գինը 20 կ., 1927 թ.։

XVIII դարի կեսին Անգլիայում տեղի ունեցած արդյունաբերական հեղաշրջումը, ինչպես հայտնի յե, համաշխարհային նշանակություն ունի և վոչ միայն Անգլիայում, այլև ամբողջ Յեվրոպայում արդյունաբերական կապիտալիզմի բուռն ծաղկման սկիզբն ե։ Ահա այս ե, վոր փորձում են պարզաբանել հեղինակները։

———

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ.—**Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկիյ,** թարգմ. Հ. Հովակիմյան, հասարակագիտական սերիա № 16, տիրաժ 3000, եջ 28, գինը 20 կ., 1927 թ.։

Ընդհանրապես աշխատանքի բաժանման և մանուֆակտուրայի, ապա հատկապես անգլիական մանուֆակտուրայի ծագման և եյության հարցերն են քննության առնվում այս գրքույկում։

———

ԲԱՆՎՈՐԻ ԿԵՆՑԱՂԸ ԿԱՊԻՏԱԼԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՐԳՈՒՄ.— **Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկիյ,** թարգմ. Հ. Հովակիմյան, հասարակագիտական սերիա № 17, տիրաժ 3000, եջ 31, գինը 20 կ., 1927 թ.։

Գրքույկի վերնագրից պարզ ե նրա բովանդակությունը, միայն անհրաժեշտ ե ավելացնել, վոր հեղինակները ջանացել են պատկերացնել ամեն մի արդյունաբերական ճյուղի բանվորի կենցաղը գործարանում և տանը թե կապիտալիզմի և թե խորհ. իրավակարգի ժամանակ։

———

ՖԱԲՐԻԿԱ.—**Ժավորոնկով յեվ Զյուբինսկիյ,** հասարակագիտակ. սերիա № 24, թարգմ. Հ. Հով., տիրաժ 3000, եջ 48, գինը 25 կ., 1927 թ.։

Այս գիրքը շոշափում ե մեքենայի խոշոր արտադրությունը, ֆաբրիկայի և տնայնագործի պայքարը, Միացյալ Նահանգների Պիտսբուրգ քաղաքի գործարանների նկարագրությունը, մարդու և բնության ուժերի աշխատանքը, մի խոսքով փորձում ե այժմյան գործարանի լրիվ պատկերը տալ։

———



ՌՈՒՍ ԳՅՈՒՂՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ.— **Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկիյ,** հասարակագիտական սերիա № 18, թարգմ. Հ. Հովակիմյան, տիրաժ 3000 եջ 41, գինը 20 կ., 1927 թ.։

Այս գրքույկի թեմաներն են՝ ճորտատիրական իրավունքի ծագումը, ռուս գյուղացիների դրությունը XVII և XVIII դարերում։

———

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ.—**Բ. Ն. Ժավորոնկով յեվ Ս. Ն. Զյուբինսկիյ,** թարգմ. Կ. Ազաբաբյան, հասարակագիտական սերիա № 11, տիրաժ 3000, եջ 53, գինը 30 կ., 1926 թ.։

Գիրքը նվիրված ե Դանիայի, Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի գյուղատնտեսության նկարագրությանը թվական տվյալներով, ինչպես նաև գյուղատնտեսական բնակչության դասակարգային շերտավորմանը։

———

ԽՍՀՄ-Ի ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ.—Թարգմ. **Ս. Ե. Ստ.,** հասարակագիտ. սերիա № 21, տիրաժ 3000, եջ 19, գինը 20 կ., 1927 թ.։

ԽՍՀՄ արդյունաբերության բոլոր առանձին տեսակները թվական տվյալներով նկարագրված են այս գրքույկում, վոր նույնպես դպրոցական ձեռնարկ ե։

———

ԽՍՀՄ-Ի ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.— Թարգմ. **Ս. Ե. Ստ.,** հասարակագիտ. սերիա № 22, տիրաժ 3000, եջ 22, գինը 20 կ., 1927 թ.։

ԽՍՀՄ արդյունաբերության նկարագիրը տվող այս գրքույկը դպրոցական կարիքներ բավարարելուն ե հետամուտ և մեր դպրոցներում ընդունված ձեռնարկ ե։

———

ԽՈՐՀ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ.—Ռուս. թարգմ. Հ. Հարությունյան, հասարակագետ. սերիա, տիրաժ 3000, եջ 28, գինը 20 կ., 1926 թ.։

Խորհրդային իշխանության գյուղում ունեցած նվաճումների ամփոփումն ե այս տետրակը, վոր մեր դպրոցներում ընդունված ե իբրև ոժանդակ ձեռնարկ հասարակագիտության դասավանդման համար։

———

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1914—1917 թ. թ.).—Թարգմ. Ան. Ստամբոլցյան, հասարակագիտ. սերիա № 17, տիրաժ 3000, եջ 32, գինը 20 կ., 1927 թ.։

Գիրքը նվիրված ե մեծ պատերազմի պատճառների, նրա սկզբնավորության նկարագրությանը, կան թվական ճոխ տվյալ-

ներ պատերազմի մարդկային և նյութական կորուստների մասին։ Վերջին գլուխը նվիրված է «հաշտության դաշնագրին»։

———

*ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հ. ՄԿՐՏՉՅԱՆ, տիրաժ 3000, էջ 24, գինը 10 կ., 1928 թ.։*

Հեղինակը գործնական խնդիր է դնում իրեն, այն է՝ պարզաբանել կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպման ձևերը, կազմակերպելու նախադրյալները, կուլակի վտանգը կոլտնտեսություններում, կոլտնտեսությունների տեսակները։ Դրված է նաև այն խնդիրը, թե ով կարող է կոլտնտեսությունների անդամ լինել։

———

*ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1914 Թ.— Թարգմ. Ան. Ստ., հասարակագիտ. սերիա № 23, տիրաժ 3000, էջ 31, գինը 20 կ., 1927 թ.։*

Սա յել կազմված է իբրև դպրոցական ձեռնարկ, և դրան համապատասխան էլ մշակված է նյութը։

———

*ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—* **Սուրխաթյան**, *Բ. հատոր, տիրաժ 15,000, էջ 704, գինը 3 ռ., 1927 թ.։*

«Հայ գրականության» Բ. հատորն ընդգրկում է արևելահայ գրականության նոր և նորագույն շրջանի հեղինակները կենսագրականներով և գնահատականներով։ Հատորն սկսվում է Շիրվանզադեյով և վերջանում է ուղեկից և պրոլետ գրողներով։ Այս հատորը նույն նպատակին է ծառայում, ինչ առաջինը։

———

*ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.—* **Սուրխաթյան**, *Ա. հատոր, տիրաժ 15,000, էջ 830, գինը 3 ռ. 50 կ., 1927 թ.։*

Հայ գրականության այս հատորում զետեղված են արևելահայ գրականության նմուշները Խաչատուր Աբովյանից մինչև Վահան Միրաքյանը։ Կան հեղինակների կենսագրականները և նրանց ստեղծագործությունների գնահատականները։ Այս հատորը մեր II աստ. դպրոցների համար ձեռնարկ է հանդիսանում, կարող է նաև ազատ ընթերցանության համար օգտակար գիրք լինել։

———

*ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՅՈՒՏԻՑ ՀԵՏՈ.— Թարգմ. Ան. Ստ.-ի, հասարակագիտ. սերիա № 20, տիրաժ 3000, էջ 32, գինը 20 կ., 1927 թ.։*

Հանրամատչելի ձևով գիրքը պատմում է ժամանակակից



տեխնիկայի զարգացումը՝ մեքենայի գյուտից սկսած և ցույց տալիս այն հսկայական նվաճումները, որ կատարված են այժմ։ Գրքի վերջում դրված է մեծ գյուտերի ժամանակագրական մի տախտակ։

———

*ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.—* **Ա. Ի. Տյումենև**, *թարգմ. Թ. Ավդալբեգյան, յերրորդ տպագրություն, տիրաժ 5000, էջ 263, գինը 1 ռ. 30 կ., 1927 թ.։*

Տյումենևի «Աշխատանքի պատմությունն» իսկապես տնտեսական ֆազերի պատմությունն է՝ նախնադարյան կոմմունիզմից սկսած։ Հայերեն թարգմանությանը կցված է թարգմանչի կազմած քաղաքատնտեսական և հասարակագիտական տերմինների համառոտ բառարանը։

———

*ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ».—* **Պ. Գ. Տիմաֆեյեվի**, *թարգմ. Գար. Հակոբյան, տիրաժ 4000, էջ 126, գինը 40 կ., 1926 թ.։*

Գիրքը նպատակ ունի պատանի և անպատրաստ ընթերցողին ծանոթացնել ԽՍՀՄ բնական անթիվ հարստություններին և այլ հեռանկարներին, որ կապված են այդ հարստությունները մեր արդյունաբերության և գյուղատնտեսության համար օգտագործելու հետ։ Գրված է մատչելի և պարզ լեզվով։

## ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

*ՅԵՐԿՈՒ ՊԱՏՄՎԱԾՔ.—* **Անուշ**, *(բանվ. գյուղ. գեղարվեստ. գրադարան), տիրաժ 1500, էջ 36, գինը 12 կ., 1928 թ.։*

Անուշի այս յերկու պատմվածքներն են 1. «Պատգամավորուհին» և 2. «Վճռական քայլ»։ Առաջինն այն մասին է, թե ինչպես «բոլշևիկությունը» ազատագրում է հարսին, իսկ յերկրորդն այն մասին, թե ինչպես աղջիկը բռնում է իր հորը, յերբ վերջինս կողոպտում է կոոպերատիվը։

———

*ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ.—* **Գ. Աբով**, *բանվ. գյուղ. գեղարվեստ. գրադարան, տիրաժ 3000, էջ 62, գինը 25 կ., 1928 թ.։*

«Աբովի գրքույկում զետեղված են յերեք պատմվածք։ Հաջող է «Յես քու հունարին մատաղ, Մելիքսեթ ջան» պատմված-

քը։ Արովը հետաքրքրական ձևով նկարագրել է «ելեքտրական»-ի բացումը, վորն խսկապես տոն է գյուղի համար»։

«Գրական Դիրքերում» № 6 (11) 1928 թ.

———

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ.—**Արագի**, տիրաժ 2500, եզ 226. գինը 1 ռ., 1926 թ.։

Արագին այս հատորում ամփոփել է իր պատմվածքներից 32 հատ, վորոնց մեջ են նաև «Կոմմունա»-ի շարքը և արևելյան մոտիվները։

———

ԴԱՍԱԼԻՔԸ.—**Ալազան**. տիրաժ 3000, եջ 120, գինը 5 կ., 1927 թ.։

Պրոլետգրող Ալազանի այս առաջին վիպակը քաղաքի և գյուղի նոր շինարարության ֆոնի վրա տալիս է դասալիք կոմյերիտականի տիպը։ Իբրև առաջին փորձ, պատմվածքը պետք է հաջող համարել։

———

ՔՍԱՆՎԵՑԸ.—Կազմեց Ալազան, տիրաժ 2000, եջ 61, գինը 75 կ., 1928 թ.։

«Մինչև այժմս մեր ակումբներն ու խրճիթ-ընթերցարանները չունեն թեմատիկ գեղարվեստական ժողովածուներ՝ նվիրված պրոլետարական հեղափոխական տոներին։ Ռուսերեն լեզվով գոյություն ունեցող բազմաթիվ «Чтец-декламатор»-ները պետք է վոր օրինակ ծառայեյին նաև մեր Քաղլուսգլխվարի և ՀԱՄԽ-ի կուլտ-բաժնի համար։

Ներկա ժողովածուն գալիս է վորոշ չափով լրացնելու այդ բացը»։

«Լենինյան Ուղի» № 8-9 1928 թ.

———

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ.—**Մկրտիչ Արմեն**, տիրաժ 2000, եջ 273, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.։

Պատմվածքների այս ժողովածույում հավաքված են Արմենի 13 պատմվածքը։ Մեծ մասամբ կոմյերիտականների կյանքից են Արմենի պատմվածքները, յերկուսն էլ կոմսոմոլիստկա Թըրքուհիների։ Այս ժողովածուն արժանի յե հատկապես մեր յերիտասարդ ընթերցողների ջերմ ուշադրության։

———

ԵՍ ՋՈՒՐՆ ԻՐԱ ՃԱՄՓՈՎ ԿԳՆԱ.—**Արաքս**, (վիպակ), տիրաժ 2500, եջ 123. գինը 50 կ., 1928 թ.։

Արաքսի այս վիպակը մի բանվորի պատմությունն է այն մասին, թե ինչպես նա հիվանդության պատճառով գործարանից վերադառնում է գյուղ, և նրա ջանքերով գյուղի կենցաղի լավացման հիմքն է դրվում։

———



ԽԱԲՎԱԾ ԱՍՏՂԵՐ.—Վիպակ. **Ֆեթ-Ալի Ախունդ-Զադե**, տիրաժ 2500. եջ 40. գինը 20 կ., 1928 թ.։

Հրատարակված է Ֆեթ-Ալի Ախունդ-Զադեյի մահվան 100-ամյակի առթիվ։ Պարունակում է հեղինակի կենսագրությունը և գնահատականը։ Հեքիաթային վեպ է Պարսկաստանի Սեֆեիդների տոհմին պատկանող Շահ Աբբաս I-ի կյանքից։

«Ախունդ-Զադեյի գլխավոր նպատակն է յեղել այդ վիպակով հրավիրել ժողովրդական մասսաներին դեպի գիտակցություն։ Այս տեսակետից նրա այս պատմվածքը դաստիարակիչ է յեղել խավարում հեծող արևելյան ժողովրդական մասսաների համար»։

«Խորհ. Հայ.» 1928 թ. ապրիլ 1 № 77

———

ԳՈՒՅՑԵ ՀԱՋՈՂՎԻ.—(Գյուղական կենցաղային կոմեդիա 4 գործողությամբ), **Բրագինսկի**, ազատ փոխադրություն Գուր. Գաբրիելյանի, հրատ. Քաղլուսգլխվարի, գյուղի գեղարվեստ. գրադարան № 1, տիրաժ 1500, եջ 50, գինը 50 կ., 1928 թ.։

Կոմեդիայի նյութը մեր օրերի գյուղի կյանքն է և հատկապես գավառական բեմերի համար է գրված։

———

ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂԸ.—**Ա. Բոգդանով**, ֆանտաստիկական վեպ, տիրաժ 5000, եջ 244, գինը 65 կ., 1925 թ.։

«Կարմիր Աստղը» մի վեպ է աստղերի և մոլորակների մասին, գրված է վերին աստիճանի հետաքրքրական և գրավիչ ձևով։

———

ՄԹՆԱՁՈՐ.—**Ակսել Բակունց**, տիրաժ 2500, եջ 183, գինը 1 ռ. 20 կ., 1927 թ.։

Ակսել Բակունցի պատմվածքների ժողովածուն է այս (ամբողջ 18 պատմվածք)։ Պատմվածքների նյութը գլխավորապես վերցված է Զանգեզուրի կյանքից։ Այս պատմվածքներով Բակունցը մեր պրոլետգրողների մեջ իր հատուկ տեղը գրավեց։

———

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ.—**Ակսել Բակունց**, բանվ. գյուղ. գեղարվեստ. գրադարան, տիրաժ 3000, եջ 43, գինը 20 կ.։

«Ակսել Բակունցի գրքույկում զետեղված են չորս պատմվածքներ—«Տրախոմի մաշին», «Արտելիա», «Թանգին» և «Ծատուն Տղան»։ Սրանք բոլորն էլ շոշափում են մեր տնտեսության տարբեր խնդիրները՝ գյուղի մեքենայացումը, կոոպերացիան, հողաբաժանությունը և արտելային տնտեսությունը»։

«Գրական Դիրքերում» № 6 (11) 1928 թ.

———

Ծառայում է ուսուցիչների համար. մեթոդական և գործնական ձեռնարկ է այս։ Չպետք է շփոթել մյուս «Բնություն և աշխատանք» վերնագիրը կրող գրքի հետ. սա ուսուցիչների համար է, իսկ մյուսն աշակերտների։

———

ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ.—**Մ. Ջառաֆյան** և **Ա. Արարատյան**, բնագիտության աշխատանքի գիրք, առաջին աստ. 3-րդ խմբի համար, պատկերազարդ, տիրաժ 10.000, էջ 151, գինը 1 ռ., 1927 թ.։

Հետազոտական մեթոդը կիրառելու մի փորձ է այս դասագիրքը։ Տրվում է աշակերտի ձեռքը, վորպես նրա կատարելիք տարեկան ամբողջ աշխատանքների պլան։

———

ԲԱՄԲԱԿ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 27, գինը 10 կ., 1927 թ.։

Այս գրքույկը նվիրված է բամբակի մշակման, ցանի, վարի, սերմի տեսակի, հողի, քաղհանի, տունկերի նոսրացման, ջրելու, տունկերն ետելու, չանաքի, բամբակի հիվանդությունների, բերքը հավաքելու, բամբակը գործարաններում մշակելու, բամբակագործության ռայոնների նկարագրության։

———

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՆ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 16, գինը 10 կ., 1927 թ.։

Գրքույկում նկարագրված է թռչունների փետրափոխությունը, ինքնապաշտպանությունը, յերամները, աշխատանքի բաժանումը և փոխադարձ ոգնությունը, չվելու կարգը և չվավայրերը։

———

ԱՅԳԻ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 23, գինը 10 կ., 1927 թ.:

Գրքույկը նվիրված է այգու տեղի, տունկերի դասավորության, հողի մշակման, փոսեր պատրաստելու, տնկելու ժամանակի, տնկելու ձևի, խնամքի, այգու վնասատուների, նրանց դեմ կռվելու միջոցների, պտղատու մի քանի ծառերի նկարագրությանը:

———

ՏԵՐԵՎԱԹԱՓ ՅԵՎ ԱՇՆԱՆ ԳՈՒՅՆԵՐ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 19, 10 կ., 1927 թ.:

Գրքույկում բացատրվում են տերևաթափի պատճառները, տերևաթափի նշանակությունը, թափվող տերևների բազմերանգ գույներ ստանալու պատճառները:

———

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՅԵՎ ՁՄԵՌՆԱՅԻՆ ՔՈՒՆԸ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 43, գինը 10 կ., 1927 թ.:

Յերեք կենդանու—չղջիկի, սարդի և բզեզի—կենցաղի և աշխատանքի նկարագրությունն է այս գրքույկը:

———

ՄԱՐԳԱԳԵՏԻՆ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 46, գինը 10 կ., 1927 թ.:

Այս գրքույկը նվիրված է մարգագետնի բազմերանգ ծաղիկների և խոտերի նկարագրության և կյանքին:

———

ՄԵՂՈՒ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 44, գինը 15 կ., 1927 թ.:

Գրքույկը տալիս է մեղվանոցի տեղի, մեղվի ընտանիքի, մեղվանոցի պատրաստության, գործիքների, փեթակի, մեղուների աշխատանքի ձևերի, մեղվի հիվանդությունների, պարսի, բերքի, ձմռան պատրաստության և մեղվապահության կանոնների նկարագրությունը:

———

ՕԴ ՅԵՎ ՋՈՒՐ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 47, գինը 15 կ., 1927 թ.:

Այս գրքույկը բացատրում է օդի բաղադրիչ տարրերը, ջրային գոլորշիները, անձրևի պատճառը, յեղանակի գուշակումը, ջրի բաղադրիչ տարրերը, հողի և ջրի մեջ գտնված սննդարար տարրերը, պարարտացումը, բույսերի սնունդը, գազերի նշանակությունը և այլն:

———



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 30, գինը 10 կ., 1927 թ.:

Նոր տեխնիկայի համաձայն գյուղատնտեսությամբ զբաղվելու գործիքների և մեքենաների նկարագրությանն է նվիրված գրքույկը՝ գործիքների և մեքենաների պատկերներով:

———

ԿՈՎԻ ԿԵՐԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 44, գինը 15 կ., 1927 թ.:

Կովի խնամքի—կերակրում, կերի տեսակ, կերի կարգ, գոմ, լույս, օդ, մաքրություն, առողջություն—մանրամասն նկարագրությունն է այս գրքույկը:

———

ԱՆՏԱՌ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 51, գինը 15 կ., 1927 թ.:

Բույսերի համակեցությունը, մամուռները, քոսերը, սունկերը, հատապտուղները և այլն,—սրանց կյանքի նկարագիրն է տրված այստեղ:

———

ՇԵՐԱՄ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 29, գինը 10 կ., 1927 թ.:

Շերամի որդի, բոժոժի, թրթուրի, թթենու, շերամի հիվանդությունների բոլոր խնդիրները քննված են այս գրքույկում:

———

ՏՈՐՖ, ՔԱՐԱԾՈՒԽ ՅԵՎ ՆԱՎԹ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, եջ 28, գինը 10 կ., 1927 թ.:

Արդյունաբերության զարգացման հիմքը կազմող այս յերեք վառելանյութի գոյացման և նշանակության պարզաբանումով է զբաղվում գրքույկը:

———

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ.—Բնություն և աշխատանք սերիա, տիրաժ 6000, եջ 29, գինը 10 կ., 1927 թ.:

Այս գրքույկը բացատրում է, թե ինչպես պետք է հավաքել բույսերը, չորացնել և հերբարիում կազմել, հերբարիումը կազմելուց հետո՝ ինչպես պետք է պահել այն:

———

ՀԱՆՔԵՐ.—Բնություն և աշխատանք սերիա, տիրաժ 6000, եջ 47, գինը 15 կ., 1927 թ.:

Այս գիրքը նվիրված է զանազան տեսակ մետաղների, դը-

րանց գործածության, արժեքի, արդյունահանության յեղանակի, յուրաքանչյուրի յերևան գալու ժամանակների հարցերին:

— — —

ԲԱՆՋԱՐԱՆՈՑ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 27, գինը 10 կ., 1927 թ.:

Բանջարանոցի կազմակերպման, տեղի, վարելահողի, գործիքների, մարգեր պատրաստելու, պարարտացման, սերմերի ընտրության և այլն խնդիրներն են գրքույկի բովանդակությունը. տրված է նաև բանջարանոցի փասատուների նկարագիրը:

— — —

ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 61, գինը 20 կ., 1927 թ.:

Մեր ընտանի թռչունների տված օգուտների, բազմացման, թուխսի, ինկուբատորի կազմության, կերի, թռչնանոցի և առհասարակ ընտանի թռչունների խնամքի հարցերին է նվիրված այս տետրակը:

— — —

ԱԿՎԱՐԻՈՒՄ ՅԵՎ ՏԵՐՐԱՐԻՈՒՄ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 38, գինը 15 կ., 1928 թ.:

Մի էքսկուրսիայի նկարագրություն է այս դեպի ջրերը. սրան կից բացատրում է, թե ինչպես պետք է պատրաստել ակվարիում, ակվարիումի կենդանիները, տեսակները, ապա ասված է, թե ինչ է տերրարիումը:

— — —

ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐ.—Բնություն և աշխատանք սերիա, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 23, գինը 10 կ., 1928 թ.:

Կաթի գոյացման, կաթի կազմի, կարագի, պանիր պատրաստելու, մածնի և այլ կաթնամթերքների նկարագրությունն է տրված այստեղ:

— — —

ՀՈՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.—Ա. Պ. Նեչայեվ, թարգմ. Ռ. Աբրահամյան, 12 նկարով, տիրաժ 6000, էջ 61, գինը 35 կ., 1926 թ.:

Այս գիրքը նվիրված է հողի պատմության, նրա ծագման. տեսակների գոյանալուն և հողերի կազմության նկարագրությանը:



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴԸ.—Պ. Ս. Աֆանասեվ, մանկավարժի գրադարան, տիրաժ 4000, էջ 54, 1926 թ.:

Աֆանասևն իր այս գրքում տալիս է աշխատանքի մեթոդի հոգեբանական և սոցիալիստական հիմնավորումը և ակտիվ աշխատանքային մեթոդի մասին գոյություն ունեցող տարբեր կարծիքները:

— — —

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃ. ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՌԱՄՍՅԱԿԸ.—Պ. Պ. Բլոնսկի, մանկավարժի գրադարան, տիրաժ 3000, էջ 47, գինը 15 կ., 1925 թ.:

Հեղինակը տալիս է յերկրորդ յեռամսյակի գործնական աշխատանքների պլանը, թե ինչ թեմաներ պետք է տրվեն և առհասարակ ինչ պետք է լինի այս յեռամսյակի աշխատանքների բովանդակությունը:

— — —

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՅԵՌԱՄՍՅԱԿԸ.—Պ. Պ. Բլոնսկի, մանկավարժի գրադարան, տիրաժ 4000, էջ 104, գինը 30 կ., 1925 թ.:

Բլոնսկին իր այս գրքով գուտ, գործնական նպատակ է հետապնդում, այն է՝ օգնելու ուսուցչին արդի մասսայական դպրոցի իրական պայմաններում նույնիսկ աշակերտների մեջ աշխատանքները կարգավորելու:

— — —

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑ.—Պ. Պ. Բլոնսկի, պրակ Գ., հրատարակված է Ալեք-պոլի (Լենինականի) գավ. լուսբաժնի կողմից, բայց պահեստը գտնվում է Պետհրատում, էջ 182, գինը 75 կ., 1923 թ.:

Այս ձեռնարկում արտացոլված է նոր դպրոցական ապա-րիզում կատարվող կենդանի աշխատանքի և կոլեկտիվ ստեղծագործության պատկերը, պարունակում է իր մեջ նոր դպրոցի եյությունը լուսաբանող և պրակտիկ աշխատանքից բղխած բազմաթիվ հարցերի պատասխաններ և ցուցումներ:

— — —

ՉՊԵՏՔ Է ՊԱՏԺԵԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ.—Ն. Կուլիշեր-Բունցելման, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 3000, էջ 26, գինը 8 կ., 1928 թ.:

Թվելով յերեխաներին պատժելու վնասները՝ հեղինակը հանձնարարում է ներշնչել յերեխային վստահություն և սեր ու այդ յեղանակով հարկավոր ուղղությամբ ազդել նրա վրա և ոչ թե պատժի:

— — —

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.—**Պրոֆ. Մ. Պ. Գրիգորևի** առաջաբանով, փոխ. Գ. Մուրադյան, մանկավարժի գրադարան, տիրաժ 4000, էջ 112, գինը 35 կ., 1926 թ.:

Այս գիրքն ամերիկյան գյուղական դպրոցների ծրագրի դրական և բացասական կողմերի պարզաբանությունն է:

———

ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՅԵՐԵԽԱՅԻ ՔՈՒՆԸ.—**Մ. Գրինբերգ**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 3000, էջ 40, գինը 12 կ., 1928 թ.:

Սա անհրաժեշտ մի ուղեցույց է այն մայրերի համար, վորոնք վոչ մի գաղափար չունեն յերեխայի քնի, ոդի մաքրության պառկեցնելու դիրքի և քնելուց առաջ կերակրելու մասին և այլն:

———

ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ ՅԵՐԵԽԱՅԻՆ.—**Լ. Ս. Գեսելինա**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 3000, էջ 36, գինը 15 կ., 1928 թ.:

Յերեխաներին սնուցանելու ձևի, վորակի և քանակի հարցերին է նվիրված այս գրքույկը: Գրքույկում զետեղված է մինչև անգամ որինակելի սնունդի մի ցուցակ 10 որվա համար: Կա նաև մի ցուցակ առողջ յերեխայի որական բաժնի մասին ըստ տարիքի:

———

ԿԱՌՈՒՑԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ.—**Մ. Դուրգարյան**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 2500, էջ 36, գինը 12 կ., 1928 թ.:

Մանկական հրապարակի դաստիարակչական առավելությունները և նրանց կառուցելու միջոցները քաղաքում և գյուղում,—այս է ընկ. Դուրգարյանի գրքույկի թեման:

———

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔ.—**Գ. Եգիկյան**, տիրաժ 1500, էջ 31, գինը 20 կ., 1927 թ.:

Այս գիրքը նվիրված է դպրոցական շենքի տեղի, մեծության, ստորաբաժանումների, լուսավորության, ոդի և ոդափոխության, շենքի տաքացնելու և շենքի մաքրության հարցերին:

———

ՁԵՌԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ.—**Գ. Եգիկյան**, մանկավարժի գրադարան, տիրաժ 1500, էջ 62, գինը 50 կ., 1927 թ.:

Ձեռագրի ուսուցման խնդիրը մանկավարժական բարդ և



վիճելի հարցերից է: Հեղինակը ծանոթացնում է խնդրի այն լուծմանը, վոր գիտական վերջին ուսումնասիրությունների արդյունքն է:

———

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ.—**Գ. Եգիկյան**, մանկավարժի գրադարան, տիրաժ 1500, էջ 39, գինը 40 կ., 1927 թ.:

Ուղղագրության ուսուցման զանազան մեթոդներին նվիրված այս գրքույկը խիստ աժմեական նշանակություն ունի և հանձնարարելի յե մեր ուսուցիչներին:

———

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՊՐՈՑԸ.—**Իգնատյեվ**, (մանկավարժի գրադարան), տիրաժ 3000, էջ 56, գինը 15 կ., 1928 թ.:

Այս գրքույկի նպատակն է գավառագիտական աշխատանքը նոր դպրոցի, ժամանակակից նոր սերնդի դաստիարակության կարիքներին հարմարեցնելու մասին ցուցումներ տալ և ՊԳԽ-ի նոր ծրագրով աշխատանք վարող ուսուցչի համար չափազանց կարևոր է:

———

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.—(Ժողովածու), մանկավարժի գրադարան, փոխ. և կազմ. Լևոնյան և Պողոսյան, տիրաժ 1500, էջ 101, գինը 40 կ., 1927 թ.:

Մի քանի հոդվածների ժողովածու յե այս գիրքը.—ինքնավարությունը վորպես դաստիարակության մեթոդ, կոլլեկտիվ ինքնակազմակերպության էությունը, մանկավարժի դերը, ինքնավարության սխեմաները:

Կա մի հավելված, վոր նվիրված է ԼԺԿ-ի կենտ. ցուցադր. դպրոցի (Յերևան) աշակերտության ինքնավարության: Վերջում դրված է ինքնավարություն կազմակերպելու սխեման:

———

ԼԵՆԻՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.—**Զ. Լիլինա**, մանկավարժի գրադարան, տիրաժ 2000, էջ 80, գինը 30 կ., 1925 թ.:

Հեղինակը փորձում է տալ Վլ. Իլյիչ Լենինի մտքերը թե մեծերին և թե փոքրերին սովորեցնելու, դաստիարակելու, ղեկավարելու մանկավարժական մեթոդների և ընդհանրապես դաստիարակության խնդիրների մասին:

———

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԵԽԱՆ.—**Կորնիլով, Դեռնլե, Ուլովա**՝ թարգմ. Մ. Բոշնաղյանի, մանկավարժի գրադարան, տիրաժ 2000, էջ 44, գինը 15 կ., 1926 թ.:

Պրոլետարական յերեխայի կյանքի պայմանները, հոգեբանությունն ուսումնասիրելու մի փորձ է այս գիրքը:

———

ՅԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԸ.—**Լ. Կրասնոգորսկայա**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 4000, էջ 24, գինը 10 կ., 1928 թ.:

Վերնագիրն արդեն ասում է, վոր այս գրքույկը խոսում է միջավայրի ազդեցության մասին մանուկների վրա: Նյութը բավարար չափով մշակված և հիմնավորված է:

---

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ.—**Կազանսկի**, (մանկավարժի գրադարան), տիրաժ, 4000, էջ 68, գինը 15 կ., 1928 թ.:

Այս գրքույկը չափազանց անհրաժեշտ է գյուղական դպրոցների համար. գյուղական դպրոցում աշխատողն այստեղ կգտնի, թե ինչպես պետք է կռվել գյուղում առողջապահական պայմաններ ստեղծելու համար, ինչպես գրքերի ցուցակ կազմել, պատի լրագիր հրատարակել և այլն և այլն:

---

ԱՆՏԱՌԻ ՈՐԸ.—**Ու. Մուշեղյան**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 3000, էջ 96, գինը 30 կ., 1928 թ.

Սա մի ձեռնարկ է ուսուցչի համար և պարզում է անտառի նշանակությունը տնտեսական և առողջապահական տեսակետից: Գրքի վերջում դրված են «Անտառի որվա» համար լոզունգներ, հանրամատչելի գրականության ցուցակ անտառաբուծության վերաբերյալ:

---

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՓՈՔՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ.—**Ի. Մայզել**, ԼԺԿ-ի սոցդասվարի գլխ. վարչության հրատարակություն, տիրաժ 3000, էջ 46, գինը 15 կ., 1928 թ.:

Այս փոքրիկ գիրքը պարունակում է փոքր յերեխաների բոլոր գլխավոր հիվանդությունների նկարագրությունը, այդ հիվանդություններից նախապաշտպանվելու միջոցները և սկզբնավորության նշանները: Գիրքը հանձնարարվում է հատկապես ծնողներին:

---

ԻՆՉՈՒ ՅԵՐԵԽԱՆ ՍՆԱՀԱՎԱՏ Է ԴԱՌՆՈՒՄ.—**Յոհանսոն**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 2500, էջ 20, գինը 10 կ., 1928 թ.:

Յոհանսոնն զբաղվում է այն հարցով, թե ինչպես ծնողները յերեխաներին կարող են սնահավատ դարձնել, յերբ իրերի և յերևույթների սխալ բացատրություններ են տալիս նրանց:

---



ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ.—Թարգմ. **Ս. Շավարշյան**, մանկավարժի գրադարան, տիրաժ 5000, էջ 40, գինը 15 կ., 1924 թ.,

Այս գրքույկը տալիս է կոմպլեքսային և առարկայական սիստեմի տարբերությունը, կոմպլեքսային դասավանդման տեղն ու բնույթը ուսուցման տարբեր աստիճաններում, զբաղմունքների բաշխումն ըստ ժամանակի, զանազան մեթոդների դերը կոմպ- դասավանդման ժամանակ, կոմպ. սիստեմի մեթոդական պահանջները, ապա պարզում է, թե ինչ պետք է անի ուսուցիչը, որ իրագործի կոմպլեքսային սիստեմը:

---

ՍՈՎՈՐԵՑԵՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԽՈՍԵԼ ՅԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ.—**Յե. Ս. Շաբադ**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 2500, էջ 23, գինը 15 կ., 1928 թ.:

Գիրքն անհրաժեշտ գիտելիքներ է տալիս ծնողներին այն հասակի յերեխաների հետ վարվելու մասին, յերբ նրանք դեռևս դպրոց չեն հաճախում: Գրքի վերջում կա նաև մանկական գրքերի մի ցուցակ:

---

ԿՅԱՆՔՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԸ ՅԵՎ ՆՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ.—**Ս. Շացկիյ**, մանկավարժի գրադարան, տիրաժ 3000, էջ 44, գինը 15 կ., 1926 թ..

Գրքույկը նվիրված է աշխատանքի դպրոցը կյանքի հետ կապելու, աշակերտին ակտիվ ուսումնասիրող, կյանքի ակտիվ մասնակից դարձնելու խնդիրներին:

---

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.—**Ն. Վ. Շուլգին**, թարգմ. Վ. Տ.-Առաքելյան (4-րդ հրատարակություն), տիրաժ 3500, էջ 146, գինը 50 կ., 1928 թ.:

Այս գրքում խտացված է հետհոկտեմբերյան դպրոցի դաստիարակչական նոր ձևերի փորձը: Այդ փորձը, ինչպես հեղինակն է ասում, վերջնականապես ձևակերպվեց Կոմմունիստական Դաստիարակության Ինստիտուտի աշխատանքների միջոցին:

---

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ 3—8 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ.—**Յե. Շաբադ**, ԼԺԿ-ի սոցդասվարի հրատարակություն, տիրաժ 2500, էջ 28, 1928 թ.:

Այս գրքույկի նպատակն է ծնողներին և ընտանեկան դաստիարակությամբ հետաքրքրվողներին ցուցմունքներ տալ հետև-

վյալ երկու խնդրի մասին. 1) ինչ է դաստիարակությունը և 2) յերբ պիտի սկսել դաստիարակությունը և ինչպես առաջ տանել այն:

———

*ՄԱՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.*—**Ն. Ն. Պագյապոլսկի**, մանկավարժի գրադարան, տիրաժ 3000, էջ 34, գինը 15 կ., 1925 թ.:

Այս գրքույկը փորձում է գծել այն սահմանը, թե ինչքան է կիրառելի մանկան աշխատանքը գյուղատնտեսության մեջ, փորձում է կազմակերպել մանուկների աշխատանքն այնպես, վոր այն օգտակար լինի թե մանուկներին և թե գյուղական տնտեսությանը:

———

*ՄԱՐՔՍԻԶՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ.*—Պրոֆ. **Ն. Մ. Պակրովսկի**, տիրաժ 5000, էջ 36, գինը 15 կ., 1925 թ.:

Ընկ. Պակրովսկին իր այս դասախոսության մեջ պարզում է, թե ինչ է մարքսիզմը և դրական պատասխան տալիս այն հարցին, թե արդյոք կարելի չէ 11—16 տար. պատանիներին բացատրել մարքսիստական աշխարհայացքի երկու հիմնական գծերը՝ մատերիալիզմը և դիալեկտիկան, ապա մատնանշում է մարքսիզմը 1-ին և 2-րդ աստիճանի դպրոցներում դասավանդել ու ձևերը:

———

*ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ.*—**Մ. Պիստրակ**, թարգմ. Հ. Սաուկյան, խմբ. Արշ. Շավարշյան, մանկավարժի գրադարան, տիրաժ 1500, էջ 143, գինը 1 ռ. 50 կ., 1927 թ.:

Այս գիրքը նվիրված է գլխավորապես ժամանակակից բուրժուական մանկավարժական հոսանքների քննությանը: Ապա հեղինակը հինը քննադատելուց հետո նոր դպրոցի մի շարք պրոբլեմներն է դրել և նրանց լուծման ուղիները գծել:

———

*ՊԱՇՏՊԱՆԻՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ.*—**Վ. Պոլյակով**, փոխադր. Կենտ. Մանկ. Թանգարանի աշխատակիցների, ԼԺԿ-ի ուսդասվարի հրատարակություն, տիրաժ 3000, էջ 112, գինը 60 կ., պատկերազարդ, 1928 թ.:

Վ. Պոլյակովի այս ժողովածուն գյուղատնտեսությանն օգտակար թռչունների պաշտպանության գործին մանուկների մասնակցելու հարցը հաջող կերպով կապում է գյուղի արտադրական ուժերի բարձրացման հսկայական կարևորություն ունեցող հարցի հետ է նշում դրա դաստիարակչական մեծ նշանակությունը:



# ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱՆԵՐ

*ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.*—Քրեստոմատիա ընթերցանության համար, կազմեց Ս. Ասլիբեկյան, պատկերազարդ, տիրաժ 3000, էջ 288, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.:

Այս քրեստոմատիան պատրաստված է հատկապես կարմիրբանակայինների ընթերցանության համար և ունի առավելապես ռազմական և ռազմագիտական թեքում: Բացի Կարմիր բանակի մասին ընդարձակ տեղեկություններից՝ զետեղված է Հոկտեմբերյան հեղափոխության խրոնիկան, ինչպես նաև Հայաստանի խորհրդայնացման նկարագրությունը: Քրեստոմատիայի վերջին մասը նվիրված է կապիտալիստական շրջափակման մեջ գտնված բանվորության վիճակին, ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների փոխհարաբերություններին, իմպերիալիստական դավերին ԽՍՀՄ դեմ:

———

*ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.*—Բ. պրակ (քրեստոմատիա ընթերցանության համար):

(Տես ռազմական սերիան):

———

*ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ 1905 ԹՎԻ* (Ռուսական առաջին հեղափոխության պատմությունից).—**Մ. Ն. Բելոուսով**, տիրաժ 5000, էջ 231, գինը 1 ռ. 30 կ., 1926 թ.:

1905 թ. հեղափոխությանը նվիրված այս քրեստոմատիան բազմաթիվ նյութեր է տալիս 1905 թվի նախօրյակի հասարակական հոսանքների, բանվորական շարժումների, զինված ապստամբության պատրաստվելու, բոլշևիկյան առաջին կազմակերպության, 1905 թվի գյուղացիական շարժումների, ընդհանուր գործադուլի և Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբության մասին և այլն:

———

*ԼԵՆԻՆՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ.*—Կազմեց **Յե. Բրոնին**, խմբագրությամբ Մ. Ռաֆեսի, պատկերազարդ, տիրաժ 5000, էջ 290, գինը 2 ռ., 1926 թ.:

Լենինյան այս քրեստոմատիան պարունակում է հետևյալ մասերը. 1) Լենինը մեռավ, 2) Առաջնորդի մահվան վրա, 3) Իլյիչի կյանքը, 4) Լենինի ասածներից: Այս բոլորի մեջ ամփոփված են մեծ հեղափոխության առաջնորդի կյանքի և գործունեության վերաբերյալ բազմաթիվ փաստեր և բազմաթիվ հոդվածներ նրա մասին:

———

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (19 և 20-րդ դարեր).—Քրեստոմատիա, Ա. պրակ, կազմեց Կ. Ղազարյան, եջ 250, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.:

Այս պրակը նվիրված է Արևմտյան Յեվրոպայի դասակարգային կռվի պատմությյան, սկսած արդյունաբերական հեղաշրջումից Անգլիայում մինչև 1848 թվի հեղափոխությունները:
Քրեստոմատիան ունի բազմաթիվ փաստաթղթեր և բացատրական հոդվածներ:

———

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (19 և 20-րդ դարեր).—Կազմեց Կարո Ղազարյան, (Քրեստոմատիա), Բ. պրակ, տիրաժ 3000, եջ 320, գինը 2 ռ., 1928 թ.:

Քրեստոմատիայի այս 2-րդ պրակն ընդգրկում է առաջին Ինտերնացիոնալից մինչև յերկրորդ Ինտերնացիոնալի եպոխան. կազմված է նույն սկզբունքներով, ինչ առաջինը:

———

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (19 և 20-րդ դարերը).—Քրեստոմատիա, պրակ Ա., կազմեց Կ. Ղազարյան, տիրաժ 3000, եջ 252, գինը 1 ռ. 30 կ., 1927 թ.:

«Ռուսաստանի դասակարգային պայքարի պատմության» այս Ա. պրակն իր մեջ ամփոփում է 19-րդ դարի յերկրորդ կեսի հեղափոխական ամբողջ շարժումը:
Կան բազմաթիվ փաստաթղթեր և արդի մարքսիստ. նշանավոր պատմաբանների գրվածքներից վերցրած հատվածներ, վորոնք բնութագրում են այս կամ այն յերևույթը:

———

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (19 և 20-րդ դարերը).—Քրեստոմատիա, պրակ Բ., կազմեց Կ. Ղազարյան, տիրաժ 3000, եջ 405, գինը 1 ռ. 80 կ., 1927 թ.:

Այս պրակը Ռուսաստանի առաջին հեղափոխության (1905 թ.) ժամանակաշրջանն է ընդգրկում:
Կազմված է նույն սկզբունքով, ինչ առաջին պրակը:

———

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (19 և 20-րդ դարերը).—Քրեստոմատիա, պրակ Գ., կազմեց Կ. Ղազարյան, տիրաժ 3000, եջ 185, գինը 1 ռ., 1927 թ.:

Այս պրակն ընդգրկում է 1905 թվից հետո Ռուսաստանի տնտեսական-քաղաքական կյանքը և փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանը: Պրակի վերջում դրված է գրականության ճոխ ցուցակ յերեք պրակներում տպագրված նյութերի լայն ուսումնասիրության համար:



———

ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ.
Թարգմ. Վ. Ռշտունի, տիրաժ 3000, եջ 96, գինը 40 կ., 1925 թ.:

Այս գրքույկը կազմված է 1905 թ. հեղափոխությունը մարքսիստա-լենինյան խմբակներում մշակելու համար (պարապմունքների ծրագիր և քրեստոմատիա): Ժողովածուն պարապմունքների համար ղեկավարին տալիս է նյութ, ինչպես նաև մեթոդական ցուցմունքներ:
Նյութերի մեծագույն մասը Լենինի աշխատություններից է առնված:

———

# ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԽԱՂ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ.—(Այբբենարան), կազմեց Զ. Աճեմյան, Ա. աստիճանի դպրոցների համար, պատ. Բ. տպագրություն, տիրաժ 40,000, եջ 85, գինը 60 կ., 1928 թ.
կերազարդ,
Այս աշխատությունն արդի մանկավարժական պահանջների համեմատ այբբենարան կազմելու առաջին փորձն է:

———

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԵՖՈՐՄԸ.—Մ. Աբեղյան, տիրաժ 1200, եջ 114, գինը 80 կ., 1925 թ.:

Ստ. Մալխասյանը «Մարտակոչ»-ի եջերում հանդես յեկավ նոր ուղղագրության ռեֆորմի դեմ, հատկապես հարձակվելով Մ. Աբեղյանի լեզվաբանական տեսակետների վրա: Այս գիրքն Ստ. Մալխասյանի հոդվածների պատասխանն է և գիտական ամենալիքի յե յենթարկում հայոց լեզվի և ուղղագրության բազմազան հարցերը և հիմնավորում նոր ուղղագրությունը:

———

I ԱՍՏ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ.—Տիրաժ 2500, եջ 88, գինը 50 կ., Վաղարշապատ:

Այս գրքի հրատարակությունը ԼԺԿ-ին առընթեր ղեկավարչության գծով է կատարված, պարունակում 1-ին աստիճանի աշխատանքի դպրոցի մանրամասն ծրագիրը:

———

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ.—**Յո. Գ. Բարիսով**, թարգմ. Ան. Ստամբոլցյան, տիրաժ 5000, էջ 209, գինը 1 ռ. 50 կ., 1926 թ.:

Թարգմանությունը կատարված է 6-րդ լրացրած և վերամշակված և Պետական Գիտական Խորհրդի կողմից պարգևատրված հրատարակությունից: Այստեղ ընթերցողը կգտնի ԽՍՀՄ-ի տնտեսության ամբողջական պատկերը, թեև թվական տվյալները միքիչ հնացած են:

— —

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.—Պրոֆ **Գ. Ս. Գուրվիչ**, թարգմ. Յե. Տ.-Մինասյան, 1928 թ., տիրաժ 3000, էջ 378, գինը 2 ռ. 20 կ., (Բ. տպագրություն):

«Պրոֆ. Գուրվիչի աշխատանքն առավելապես նպատակ ունի միջակ պատրաստություն ունեցող ընթերցողին: Բաղկացած է 15 գլուխներից: Ծոխ և սլլաղան կերպով մշակված է ըստ չերևութին չոր և անհրապույր այդ նյութը»:

«Խորհ. Հայ», № 93—2043 8 ապրիլի 1928 թ.

— —

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ.—**Մ. Գասպարյան**, քաղլուսվարի գծով հրատարակված, տիրաժ 10,000, էջ 136, գինը 80 կ., 1927 թ.:

Մաթեմատիկայի այս դասագիրքը պատրաստված է կիսագրագետների դպրոցների և ինքնակրթությամբ պարապողների համար:

— — —

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՇԻՎ.—Կազմեց **Մ. Գասպարյան**, Ա. աստ. դպրոցի ուսման չերկրորդ տարի, տիրաժ 10,000, էջ 148, գինը 1 ռ., 1926 թ.:

Այս դասագրքի կիրառման մասին մեթոդական ցուցումներ կարելի յե գտնել «Ժող. Լուս» № 2-ում:

— — —

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ.—**Ռ. Գաբրիելյան**, Բ մաս—Բույսի կյանքը, էջ 16, գինը 40 կ., 1922 թ.:

Բույսի կյանքը ներկայացնող այս գծագրական նկարները նույնպես ոգտագործվելու յեն դասընթացի ժամանակ:

— — —

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ.—**Ռ. Գաբրիելյան**, Ա. մաս.—Անկենդան բնություն, էջ 16, գինը 40 կ., 1922 թ.:

Ամբողջ տետրակն անկենդան բնության գծագրական նկարներ են, վոր ոգտագործվելու յեն դասընթացի ժամանակ:

— — —



ԲԻՈԼՈԳԻԱ.—**Ռ. Գաբրիելյան**, 1-ին մաս—Կյանք, նկարներով, տիրաժ 10,000, էջ 191, գինը 1 ռ. 30 կ., 1926 թ.:

Բիոլոգիայի այս դասագիրքը գրված է Բ. աստ. դպրոցների, տեխնիկումների և բանֆակների համար և ընդգրկում է՝ կենդանի նյութը և նրա հատկությունները, բույս, կենդանի, մարդ, անաբիոզ, կյանք և անկենդան բնություն, կյանքի ծագումը, ժառանգականություն և բիոլոգիայի նոր գաղափարները:

— — —

ВАЛЕНТНОСТЬ И СТРОЕНИЕ АТОМА.—В. С. Демирчоглян, տիրաժ 3000, էջ 144, գինը 1 ռ. 25 կ., 1926 թ.:

Վ. Դեմիրչօղլյանն այս գրքում հիմնավորում է իր նոր թեօրիան ատոմի մասին:

— — —

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.—**Խ. Ցերիցյան** (պրակ Ա.), տիրաժ 3000, էջ 92, գինը 50 կ., 1928 թ.:

Անասնապահության այս Ա. պրակը նվիրված է մեր անասնապահությանը և նրա բացերին: Այս ձեռնարկը սահմանված է գյուղյերիտ և գյուղատնտեսական դպրոցների համար իբրև դասագիրք:

— — —

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.—**Խ. Ցերիցյան**, (Գ. պրակ)—Հորթին կերակրելու և խնամելու ռացիոնալ ձևերը, պատկերազարդ, աշխատանքի դպրոցի ձեռնարկ, տիրաժ 3000, էջ 86, գինը 50 կ., 1928 թ.:

Այս ձեռնարկն աշխատանքի դպրոցի ձեռնարկ է, բայց պետք է ծառայի նաև գյուղյերիտ և գյուղատնտեսական դպրոցներին և գյուղատնտ. խմբակներին և այլ կոլլեկտիվներին, վորոնց համար և հատկապես ամեն մի գլխից հետո բերված են խնդիրներ և առաջադրություններ.

—

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՏՐ.—Խմբ. **Հ. Ելիբեկյան**, 2-րդ մաս, Ընդհանուր աշխարհագրություն, Ա. աստիճ. դպրոցների համար, տիրաժ 15,000, էջ 33, գինը 30 կ., 1926 թ.:

Աշխարհի հինգ ցամաքների քարտեզներն են ամփոփված այս տետրում համապատասխան բացատրություններով:

— —

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՏՐ.—Խմբ. **Հ. Ելիբեկյան**, Բ. հրատարակություն, 1-ին մաս, ԽՍՀՄ-ի աշխարհագրություն, տիրաժ 8000, էջ 32, գինը 20 կ., 1927 թ.:

Այս տետրն ինքնուրույն աշխատանքների համար է, կազմված է քարտեզներով, դիագրամմաներով և նկարներով:

— — —

ՖԻԶԻԿԱ.–կազմեց Հ. Ցիբեկյան, (Բ. բարեփոխված հրատարակություն), պատկերազարդ, ձեռնարկ 7-ամյա, գյուղերի և 2-րդ աստ. դպրոցների համար, տիրաժ 5000, էջ 116, գինը 80 կ., 1928 թ.:

Ֆիզիկայի այս դասագիրքն ընդգրկում է հետևյալ նյութերը. մետրական չափեր, ջերմային յերևույթներ, ուժերը և նրանց ազդեցությունը մարմինների վրա, հեղուկների հատկությունները, գազերի հատկությունները, մոլեկուլային յերևույթներ, տեխնիկան և մեր կենսական հարմարությունները:

———

ՄԱՐԴ.—Մ. Զառաֆյան, (աշխատանքի դպրոցի ձեռնարկ), համառոտ կազմախոսություն և բնախոսություն 1-ին աստ. դպրոցների համար, պատկերազարդ, տիրաժ 10,000, էջ 75, գինը 60 կ. 1927 թ.:

Հեղինակն այս դասագրքում տալիս է՝ 1) աշխատանքային դպրոցի ծրագրի սահմաններում մարդու մարմնի մասին անհրաժեշտ մինիմալ գիտելիքներ և 2) հետազոտական ու լաբորատորական դասերի աշխատանքի նյութ:

———

ԲՆԱՎԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.—Ա. Ի. Զենս-Լիտովսկի յեվ Ի. Ս. Աբրամով, թարգմ. Պ. Հովյան, ԼԺԿ-ի սոցդաս-վարչության հրատարակություն, էջ 235, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.

Բնավայրի ուսումնասիրությունը—դա գավառագիտության առարկան է, որի բովանդակության, աշխատանքի ձևերի, տեղական թանգարանի կազմակերպության հարցերին է նվիրված այս գիրքը, տալով բնավայրի ուսումնասիրության համառոտ ծրագրեր և աշխատանքի պլաններ:

———

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԻՐՔ.—Ա. Վ. Լանկով, փոխ. Շավարշյան, Բ. տպագրություն, Դ. տարի, Ա. աստիճ. դպրոցների համար, տիրաժ 10,000, էջ 112, գինը 80 կ., 1927 թ.:

Լանկովի այս գիրքն էլ կազմված է այնպես, որ խնդիրներ է առաջադրում աշակերտին շրջապատող բնությունից ու կյանքից:

———

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԻՐՔ.—(Ըստ Ա. Վ. Լանկովի), փոխ. Ա. Շավարշյան, Գ. տարի, տիրաժ 15,000, էջ 118, գինը 75 կ., 1926 թ.:

Լանկովի գրքի փոխադրությունը հարմարեցված է մեր



դպրոցների պայմաններին. խնդիրներ կազմելու համար մեծ չափով օգտագործված են մեր յերկրի տնտեսությանը վերաբերող տվյալները:

———

ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԱԳԻՐՔ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ.—Վ. Ն. Լվով, վորոշ հավելումներով և փոփոխություններով թարգմանեց Մ. Զառաֆյան, Բ. մաս, տիրաժ 3000, էջ 155, գինը 1 ռ. 40 կ., 1927 թ.:

կենդանաբանության այս Բ. մասն ընդգրկում է ողնաշարավորները. (մեթոդի մասին տես Ա. մաս):

———

ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԱԳԻՐՔ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ.—Վ. Ն. Լվով, վորոշ հավելումներով և փոփոխություններով թարգմանեց Մ. Զառաֆյան, Ա. մաս, տիրաժ 3000, էջ 148, գինը 1 ռ. 40 կ., 1927 թ.:

Պրոֆ. Լվովն իր գրքի մասին ասում է. «Աշակերտը հենց սկզբից հնարավորություն ունի սովորելիք կենդանիների մասին ռեալ գաղափար ստանալու և վոչ սոսկ գրքի տեղեկություն»: Գիրքը պատրաստված է 7-ամյակների, 2-րդ աստ. դպրոցների, տեխնիկումների և բանֆակների համար:

———

ԶՆՆԱԿԱՆ ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ.—Վիլիամ Կեմպբել, թարգմ. Հ. Նավակատիկյան, պատկերազարդ, էջ 216, գինը 2 ռ., 1922 թ., Վաղարշապատ:

Այս դասագրքի Ա. մասն ընդգրկում է ամենապարզ ձևեր և կաղապարներ պատրաստելը՝ չափումների թեթև վարժություններով, Բ. մասը՝ կետերը, գծերը, անկյունները, բազմանկյունները և շրջանները:

———

ԱՐԵՎՄՏԱ-ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ.—Պրոֆ. Պ. Ս. Կոգան, թարգմ. Գ. Ալթունյան, տիրաժ 3000, էջ 392, գինը 2 ռ. 50 կ., 1926 թ.:

Գրականության պատմության այս գիրքն սկսում է 19-րդ դարու սկզբից, հասնում է մինչև նիցշեականությունը և սիմվոլիզմը (Իբսեն, Մետերլինկ): Պրոֆ. Կոգանի այս «Ուրվագծերը» արևմտյան յեվրոպական գրականության պատմությանը վերաբերող մարքսիստական լավագույն գործերից են համարվում:

———

ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ.—Ա. Կիսելյով, թարգմ. Արշակ Տոնյան, Ա. հրատարակություն, Բ. մաս, Ա. աստիճանի

դպրոցների համար, տիրաժ 2000, էջ 162, գինը 1 ռ. 90 կ., 1925 թ., Վաղարշապատ։

Յերկրաչափության այս Բ. մասն ընդգրկում է տարածաչափությունը։ Գրքի վերջում դրված է Ա. Բ. հատորներում գործածված յերկրաչափական բառերի և արտահայտությունների բառարան մոտ 420 բառով։

---

ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ.—**Ա. Կիսելյով**, թարգմ. Արշակ Տոնյան, (Յերկրորդ բարեփոխված հրատարակություն), մաս Ա, Բ. աստիճանի դպրոցների համար, տիրաժ 6000, էջ 279, գինը 2 ռ. 80 կ., 1926 թ.։

Յերկրաչափության այս առաջին մասն ընդգրկում է հարթաչափությունը։

---

ՏԻԵԶԵՐՔ.—Պրոֆ. **Ն. Կամենշչիկով**, թարգմ. Հ. Սաուկյան, խմբագրությամբ, առաջաբանով և հավելումներով Հայր. Հովհաննիսյանի, պատկերազարդ, տիրաժ 6000, էջ 104, գինը 80 կ., 1926 թ.։

Այս դասագիրքն 1-ին աստիճանի դպրոցների 4-րդ խմբերի համար է։ Աշակերտներին ծանոթացնում է յերկնքի հիմնական յերևույթների, մոլորակների, աստղերի և գիսաստղերի հետ և այլն։

---

ԿԱՐՏՈԳՐԱՖԻԿ ԳՐԱՖԻՏՈՒԹՅՈՒՆ.—Թարգմ. Հար. Պետրոսյան, տիրաժ 2000, էջ 24, գինը 25 կ., 1927 թ.։

Քարտեզների զանազան տեսակները պատրաստելու մեթոդների ցուցումներ է պարունակում այս գիրքը. կան համապատասխան նկարներ և տախտակներ։

---

ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ.—Կազմեց **Ս. Հակոբյան**, 5 րդ տարի, տիրաժ 3000, էջ 406, գինը 2 ռ., 1928 թ.։

«Կարմիր Արևի» 5-րդ տարին պարունակում է հայ և թարգմանական գրական նմուշներ հետևյալ նյութերի մասին՝ 1) գյուղը նահապետական տնտեսության շրջանում, 2) գյուղը կալվածատերերի և կապիտալի լծի տակ, 3) գյուղը քայքայման շրջանում, 4) գյուղը զարթնումի և պայքարի շրջանում, 5) Նոր գյուղը։

Գրքի վերջում դրված է անհասկանալի բառերի բառարան։

---



ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ.—Կազմեց **Ս. Հակոբյան**, 4-րդ տարի, վերամշակված, Բ. հրատարակություն, տիրաժ 25.000, էջ 281, գինը 1 ռ. 40 կ., 1928 թ.։

Հայոց լեզվի Դ. տարվա այս դասագիրքը հայ և թարգմանական գրականության նմուշներից է կազմված հետևյալ բաժիններով. 1) ԽՍՀՄ. գյուղը, քաղաքը, կոմկուսը և Կարմիր բանակը։ 2) ԽՍՀՄ և մյուս յերկրները, տիրողները և գաղութները, 3) Ինչպես կազմվեց ԽՍՀՄ. կյանքը հին գյուղում և քաղաքում, 4) Ինչպես կազմվեց ԽՍՀՄ, պայքարը և հեղափոխությունը, 5) Նոր. շինարարություն, էլեկտրիֆիկացիա, ջրանցք, կուլտուրա և կենցաղ։

Գրքի վերջում զետեղված է նաև դժվար հասկանալի բառերի բառարան։

---

ՀԱՄԱՌՈՏ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.—**Հայրապետ Հովհաննիսյան**, տիրաժ 4000. էջ 153, գինը 1 ռ. 20 կ., 1926 թ.։ պատկերազարդ,

Այս դասագիրքը հրատարակված է 2-րդ աստիճանի դպրոցների և մանկավարժական տեխնիկումների համար՝ համաձայն ուսուցչական համագումարի մշակած ծրագրի։ Այս դասագիրքը ձգտում է բավարարել աշխատանքային դպրոցի այդ պահանջը, ըստ վորի աշակերտը պետք է ուսումնասիրող դառնա, ինքը դիտողություն կատարի և իր ստացած գիտելիքներն ինքնուրույն ստուգման յենթարկի։

---

ՀՍԽՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.—**Հայրապետ Հովհաննիսյան**, պատկերազարդ, տիրաժ 5000, էջ 157, գինը 1 ռ. 40 կ., 1928 թ.։

Այս գիրքը Հայաստանի տնտեսական աշխարհագրության առաջին փորձն է։ Թվական մանրամասն տվյալներով տալիս է Խորհ. Հայաստանի հողային տարածությունը, սահմանները, ինտեսական վիճակը, արվեստական վոռոգումը և խորհ. տնտեսությունները, վենտարը, արվեստական վոռոգումը և բովանդակ գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը։ Վերջում կա մի գրական հավելված, վորտեղ զետեղված են Վահան Թոթովենցի յերկու գրվածքները մեր շինարարության մասին։ Կան նաև հարցեր աշակերտների ինքնուրույն աշխատանքների համար։

---

ՅԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.—**Հայրապետ Հովհաննիսյան**, առաջին մաս, պատկերազարդ, տիրաժ 4000, էջ 246, գինը 2 ռ., 1926 թ.։

Այս ձեռնարկը նպատակ ունի միաժամանակ թե իբրև դասագիրք և թե իբրև ընթերցանության գիրք ծառայելու։ Տալիս է յերկրի կառուցվածքի նոր տեսությունը, ապա հանքերի և միներալների, լեռների տեսակների, յերկրաբանական յերևույթների, յերկրի կեղևի համառոտ պատմությունը։

---

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ընդհանուր և Խորհ. Հայաստանի).—Մասն 1-ին, **Հայրապետ Հովհաննիսյան**, պատկերազարդ, տիրաժ 3000, էջ 183, գինը 1 ռ. 50 կ., 1927 թ.:

Ֆիզիկական աշխարհագրության այս ձեռնարկը հարմարեցված է մեր դպրոցների պահանջներին:

---

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ.— Թարգմ. **Լ. Աբովյան**, տիրաժ 4000, էջ 254, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.:

Հասարակագիտության աշխատանքի այս գիրքը հրատարակված է իբրև ձեռնարկ ուսուցման 5-րդ տարվա համար: Այս հատորը պարունակում է իր մեջ քաղաքը—Հոկտեմբերից առաջ և հետո և գյուղը—Հոկտեմբերից առաջ և հետո:

---

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ.—Ռուսական Բ. հրատարակությունից թարգմ. **Ցե. Տեր-Մինասյան**, տիրաժ 4000, էջ 363, գինը 2 ռ. 20 կ., 1928 թ.:

Հասարակագիտության աշխատանքի այս գիրքը հաստատված է իբրև ձեռնարկ ուսուցման յոթերորդ տարվա համար:

---

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (հասարակության տնտեսական զարգացման հետ կապված). Պրոֆ **Ցե. Ն. Մեդինսկի**, Թարգմ. Մ. Սանթրոսյան, 2-րդ հատոր, (արդյունաբերության կապիտալիզմի դարաշրջան), տիրաժ 3000, էջ 351, գինը 2 ռ. 25 կ., 1928 թ.:

Այս աշխատության մեջ հեղինակը կիրառում է պատմական մատերիալիզմի մեթոդը մանկավարժության պատմության խնդիրներն ուսումնասիրելիս: Համարվում է այս ուղղությամբ լավագույն գործը:

Հայերեն թարգմանված է միայն Բ. հատորը:

---

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.—**Ք. Միխալևսկի**, տիրաժ 5000, էջ 475, գինը 2 ռ. 75 կ., 1928 թ.:

Քաղաքատնտեսության այս գիրքը թույլատրված է իբրև ձեռնարկ Պետուսխորհի Գիտական-Քաղաքական Սեկցիայի կողմից: Միխալևսկին գրել է գիրքը Համ Կ(բ)Կ ԿԿ Պրոպագանդի ենթաբաժնի մեթոդական հանձնաժողովի ցուցումների համաձայն, ուղեցույց կիրառելով այն ծրագրերը, որ մշակել է խորհկուսդպրոցների վերջին համագումարը (1926 թ.):

---

ՏԱՐՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— **Մենն յեվ Տվիսս**, Ա. մաս, 2-րդ պրակ, պատկերազարդ, տիրաժ 10.000, էջ 354, գինը 1 ռ. 50 կ., 1926 թ.:

Ֆիզիկայի այս պրակն ընդգրկում է հետևյալ նյութերը՝



էլեկտրական հոսանք, մակածյալ հոսանքներ, էլեկտրական էներգիա, ձայն և ալիքներ, ջերմաշտական ձայներ, լույս և տեսողություն, գույներ և գունավորումներ, ճառագայթող էներգիա:

---

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ.—Ձեռնարկ լիկկայաններում և կիսագրագետ հասակավորների հետ պարապող ուսուցիչների համար, յերկրորդ տպագրություն, տիրաժ 5000, էջ 112, գինը 80 կ., 1925 թ.:

Այս ժողովածուն հնարավորություն է տալիս ոչ միայն ծանոթանալ մեթոդների հետ, այլ և ըմբռնելու գործի հասարակական, քաղաքական և կուլտուրական մեծ նշանակությունը, գիտակցել, որ գրագիտությունը խորհ. շին. գործին նպաստող անհրաժեշտ պայմանն է:

---

ԱՇԽԱՏԱՆՔ.—Ա. մաս. խմբագրեց, վերամշակեց և լրացրեց **Ստ. Մանուկյան**, Բ. տպագրություն, տիրաժ 20.000, էջ 88, գինը 50 կ., 1926 թ.:

Այս գիրքը հայոց լեզուն սովորելու ընթերցարան է բանվորների և գյուղացիների համար.

---

ԱՇԽԱՏԱՆՔ.—Բ. մաս, խմբագրեց, վերամշակեց և լրացրեց **Ստ. Մանուկյան**, Բ. տպագրություն, տիրաժ 5000, էջ 223, գինը 1 ռ., 1926 թ.:

«Աշխատանքի» Բ. մասը նույն ընթերցողների համար է կազմված, ինչ առաջինը: Գրքի վերջում կա Անդրկովկասյան մեծադիր քարտեզը:

---

ԳՐԱԳԵՏ.—**Ս. Մ.**-ի խմբագրությամբ, տիրաժ 30.000, էջ 48, գինը 30 կ., 1926 թ.:

«Գրագետը» մեծահասակների այբբենարան է, ապա և առաջին ընթերցարանը:

---

ԼՈՒՍԱՐՁԱԿ.—Կազմեց **Ստ. Մանուկյան**, Գ. տարի, չորրորդ բարեփոխված տպագրություն, պատկերազարդ, տիրաժ 15.000, էջ 251, գինը 1 ռ. 20 կ., 1928 թ.:

Հայոց լեզվի Գ. տարվա այս դասագիրքը նույն յեղանակով և կազմված, ինչ առաջին յերկու մասերը:

---

ԼՈՒՍԱՐՁԱԿ.—Կազմեց **Ստ. Մանուկյան**, Բ. տարի, պատկերազարդ, տիրաժ 60.000, էջ 230, գինը 1 ռ., 1926 թ.:

«Լուսարձակի» Բ. տարին պարունակում է ինքնուրույն և

թարգմանական գրվածքներ այս կարգով՝ 1) Ամառն պատկերներ, 2) Աշունը մեզնում, 3) Ձմեռը մեզնում, 4) Գարունը մեզնում:

**ԼՈՒՍԱՐՁԱԿ.**—Կազմեց **Ստ. Մանուկյան**, Ա. տարի, Բ. վերամշակված տպագրություն, պատկերազարդ, տիրաժ 30.000, էջ 103, գինը 60 կ., 1927 թ.:

Այբբենարանից հետո հայոց լեզվի Ա. տարվա դասագիրք է սա, վորի նյութերն են՝ 1) Ձմեռը մեզնում և 2) Գարունը մեզնում:

**ԴԱՍԱԳԻՐՔ ԱՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹՅԱՆ.**—Պրոֆ **Օտտո, Շմայլ**, Բ. մաս, (կենդանաբանություն), գերմ. բնագրից թարգմ. Նիկ. Սարգսյան, պատկերազարդ, տիրաժ 3000, էջ 225, գինը 1 ռ. 40 կ., 1924 թ.:

Մեր 2-րդ աստիճանի դպրոցների համար է թարգմանված այս նշանավոր հեղինակի դասագիրքը, վոր ճանաչված առավելություններով օժտված մի աշխատություն է:

**ԿՅԱՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.**—Պրոֆ **Պ. Շմիդտ**, (փոփոխություններով թարգմանված), ձեռնարկ 2-րդ աստիճանի դպրոցի համար, տիրաժ 3000, էջ 208, գինը 1 ռ. 20 կ., 1928 թ.:

Կյանքի ծագումը, կենդանի նյութը, կյանքի միավորը, շարժումը, զգացողությունը, բազմացումը, ծերությունը, մահը և կյանքի հետ կապված յերևույթները, ահա այս ձեռնարկի քննության յենթարկած հարցերը:

**ՆՈՐ ՅԵՎ ՀԻՆ ՉԱՓԵՐԸ.**—**Յա. Ի. Պերելման**, թարգմ. Ա. Շավարշյան, էջ 40, գինը 45 կ., 1924 թ.:

Պերելմանի այս գիրքը նվիրված է մետրական չափերին և դրանց ռուսականին վերածելու ամենապարզ ձևերի բացատրությանը:

**ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** (համառոտ ուրվագիծ).—**Մ. Պակրովսկի**, Գ. մաս, տիրաժ 4000, էջ 224, գինը 1 ռ. 70 կ., 1927 թ.:

Ռուսաց պատմության այս Գ. մասն ընդգրկում է 20-րդ դարի պատմ. մինչև 1905 թվի հեղափոխությունը (ներառյալ):

**ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** (համառոտ ուրվագիծ).—**Մ. Պակրովսկի**, Ա. և Բ. մաս, տիրաժ 4000, էջ 216, գինը 1 ռ. 50 կ., 1926 թ.:

Գրքի այս Ա. և Բ. մասերն ընդգրկում են ռուսաց պատմ.



հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարի վերջը: Պակրովսկու այս աշխատությունը համարվում է մարքսիստական մեթոդով գրված ռուսաց լավագույն պատմությունը:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**—**Հ. Պետրոսյան** (Բ. բարեփոխված և լրացված հրատարակություն), Ա. մաս., տիրաժ 5000, էջ 88, գինը 60 կ., 1927 թ.:

Պետրոսյանի «Գործնական քերականության» Ա. մասի այս Բ. հրատարակությունն ավելի լրիվ է և բարեփոխված, ընդգրկում է վողջ ստուգաբանությունը:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.**—**Հ. Պետրոսյան**, (Բ. բարեփոխված և լրացված հրատարակություն), Բ. մաս, տիրաժ 5000, էջ 61, գինը 50 կ., 1927 թ.:

«Գործնական քերականության» Բ. մասն ընդգրկում է խոսքի կամ նախադասության կազմը, հոլովները, կապերը, համաձայնությունը, շարադասությունը ասացվածը և խոսքերի կապակցությունը, կետադրությունը:

**ՔԻՄԻԱ.**—Կազմեց **Նիկ. Սարգսյան**, մասն յերկրորդ, տիրաժ 5000, էջ 171, գինը 1 ռ. 20 կ., 1928 թ.:

Վեցերորդ տարվա դասընթացի աշխատանքի գիրք է այս՝ գյուղերի, 7-ամյա և 2-րդ աստիճանի դպրոցների համար. գրված է լաբորատոր—հետազոտական մեթոդով, բաժանված է յերկու գլխավոր մասի—գործնական և տեսական:

**ԴԱՍԱԳԻՐՔ ՔԻՄԻԱՅԻ**—**Ս. Սազանով**, և **Վ. Վերխովսկի**, փոխ. Հ. Ելիբեկյանի, (յերրորդ բարեփոխված հրատարակություն), տիրաժ 4000, էջ 211, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.:

Քիմիայի դասագրքի այս հատորն ընդգրկում է անորգանական քիմիան:

**ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ.**—Կազմեց **Սուրխաթյան**, 7-րդ տարի, տիրաժ 4000, էջ 439, գինը 2 ռ. 80 կ., 1926 թ.:

Սուրխաթյանի կազմած այս դասագիրքը 2-րդ աստ. դպրոցների բարձր խմբերի համար է և կազմված հայ և թարգմանական գրականության արձակ և չափածո նմուշներից: Ունի հետևյալ մասերը. 1) մարդը՝ գերի բնության ուժերին և նախապաշարմունքներին, մարդը՝ տիրող բնության ուժերին, 2) հին աշխարհի տիպեր—բուրժուական, կալվածատիրական, 3) մեր հաղթանակը և շինարարությունը, 4) կոմունիստական դեմքեր—նոր մարդիկ 5) աշխատանքի թագավորություն:

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ.—Պրոֆ **Ռ. Վիպպեր**, պատկերազարդ, տիրաժ 4000, էջ 205, գինը 1 ռ. 40 կ., 1925 թ.։

Պատմության այս դասագիրքն սկսում է Յեվրոպայի քարե դարից և հասնում է մինչև քրիստոնեյության հաղթանակը Հռոմեական կայսրության մեջ։

Վիպպերի այս և մյուս գրքերն իրենց տեսակետներով անընդունելի չեն մեր դպրոցների համար։

---

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ.—**Դ. Ա. Բեմ, Ա. Ա. Վոլկով, Ռ. Ե. Ստրուվե**, թարգմ. Արշակ Տոնյան, մասն Բ, յերկրորդ հրատարակություն, (թարգմ. բնագրի 2-րդ հրատարակությունից), տիրաժ 2500, էջ 123, գինը 1 ռ. 80 կ., 1928 թ.։

Տարրական դասընթացին վերաբերյալ վարժությունների և խնդիրների համառոտ մի ժողովածու, վոր ընդգրկում է՝ աստիճաններ բնական ցուցիչով և արմատներ, քառակուսի հավասարումներ, շարքեր (հառաջատություններ), աստիճանի գաղափարի ընդլայնումը, լոգարիթմ։

---

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ.—**Դ. Ա. Բեմ, Ա. Ա. Վոլկով, Ռ. Ե. Ստրուվե**, Թարգմ. Արշակ Տոնյան, (բնագրի 2-րդ հրատարակությունից), մասն Ա. յերրորդ հրատարակություն, տիրաժ 4000, էջ 175, գինը 1 ռ. 50 կ., 1928 թ.։

Հանրահաշվի այս առաջին մասը, վոր տարրական դասընթացին վերաբերյալ վարժությունների և խնդիրների համառոտ մի ժողովածու չե, ընդգրկում է՝ տառերի գործածությունը, 4 հիմնական գործողությունները, հարաբերական թվեր, կոտորակներ, Ա. աստիճանի հավասարումներ, աղյուսակներ և գրաֆիկներ և ֆունկցիաների գրաֆիկական պատկերացումը։

---

ՇԶԱԿՆԵՐ.—**Մ. Դուրգարյան յեվ Գասպարյան**, Բ. տարի, Յերևան, 1928 թ., էջ 232, 1 ռ. 20 կ.։

---

ԿՅԱՆՔ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ.—**Լ. Խուդոյան յեվ Ս. Ճուղուրյան**, Գ. տարի, Վաղարշապատ, 1928 թ., էջ 396, 2 ռ. 20 կ.։

---

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ VI տարի.—Յերևան, 1928 թ., էջ 408, 2 ռ.։

---

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ VI ՏԱՐԻ.—**Յե. Զարենց**, Վաղարշապատ, 1928 թ., էջ 389, 2 ռ. 40 կ.։

---



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ.—**Ս. Սոկոլով, Պ. Ուվարով**, Թիֆլիս, 1928 թ., էջ 278, 1 ռ. 60 կ.։

---

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. **Նատալի**, Յերևան, 1928 թ., էջ 184, 1 ռ. 10 կ.։

---

ԼՈՒՍԱՐՁԱԿ I ՏԱՐԻ.—**Ստ. Մանուկյան**, Վաղարշապատ, 1929 թ., էջ 96, 60 կ.։

---

ԾՐԱԳԻՐ ՅՈԹՆԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ (Քաղաքի) ՈՒՍՄԱՆ V, VI, VII, տարիների համար, Վաղարշապատ, 1929 թ., էջ 192, 1 ռ. 20 կ.։

---

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ.—**Ա. Վերմիշյան**, Յերևան, 1929 թ., էջ 56, 15 կ.։

---

ՆՄՈՒՇՆԵՐ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ.—**Յե. Զարենց**, աշխատանքի 2-րդ աստիճ. դպրոցների VI խմբի, բանֆակների, տեխնիկ. ձեռնարկներ, Վաղարշապատ, 1929 թ., էջ 96, 50 կ.։

---

ՆՄՈՒՇՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ.—**Յե. Զարենց**, աշխատանքի 2-րդ աստիճ. դպրոցն. VI խմբի, բանֆակն., տեխ. ձեռնարկներ, Վաղ-պատ, 1929 թ., էջ 100, 55 կ.։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Публичная Библиотека

Հ. Ս. Խ. Հ.

«ՀԱՅԳԻՐՔ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
*Յերևան, Հեռախոս № 106*

**ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՅԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹ-ՆԵՐՈՒՄ, ԿԻՈՍԿՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՈԼՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ-ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

# ԳՐՔԵՐ

ՀԱՅԵՐԵՆ, ՌՈՒՍԵՐԵՆ ՅԵՎ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ

*Բոլոր աստիճանի դպրոցների, բանֆակների և համալսարանների համար.*

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՅԵՎ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ԳՐԵՆԱԿԱՆ, ԴԻՎԱ-ՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՈՒ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՆՈՏԱՆԵՐ

## ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ

*Դիմել Պետհրատի միակ ներկայացուցիչ «Հայ-գիրք» ընկերության գլխավոր վարչությանը, Յ.-րևան, Րաֆֆու փողոց 29, կամ բաժանմունք-ներին ու ներկայացուցչություններին։*

*«Հայգիրք» ընկ. Յերևանի խանութներին ու բո-լոր բաժանմունքներին կարելի յե դիմել գրքեր վաճառքի տալու համար։*

ՀՀ Ազգային գրադարան
NL0134835

Հ. Ս. Խ. Հ.

# „Հ Ա Յ Գ Ի Ր Ք“

*Բաժնետիրական ընկերությունը ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ հրատարակություններ տարածող միակ ներկայացուցիչն է ամբողջ Խորհրդային Հայաստանում ու հիշյալ հրատարակությունների միակ մատակարարողը՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայկական գաղութներին.*

## „ՀԱՅԳԻՐՔ“ ԸՆԿ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ԼԵՆԻՆԱԿԱՆ,
2. ԴԱՐԱՔԻԼԻՍԱ,
3. ԴԻԼԻՋԱՆ,
4. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ,
5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
6. ԱՇՏԱՐԱԿ,
7. ՂԱՄԱՐԼՈՒ,
8. ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ,
9. Գ Ո Ր Ի Ս,
10. ՔԵՇԻՇՔԵՆԴ,
11. Մ Ե Ղ Ր Ի
12. ԱԼԼԱՀՎԵՐԴԻ.

*Պետհրատի հրատարակությունները տարածելու համար «ՀԱՅԳԻՐՔ» ընկ. միակ և արտոնյալ ներկայացուցիչներն են*

Едиными представителями Акц. о-ва „АРМЕНКНИГА“ по распространению изданий Армengиза являются:

*1. Վրաստանում «Զակկնիգա» բաժ. ընկ. Թիֆլիսում։*

*2. Ադրբեջանում Ազպետհրատ Բագվում։*

*3. Աբխազիայում Աբխազիայի ԼԺԿ կենտ. գրապահեստ Սուխումում։*

*4. Հյուսիսային Կովկասում՝ Ռուսպետհրատի բաժանմունք՝ Նոր Նախիջևանում։*

В Грузии Акц. о-во „Закнига“ в Тифлисе

В Азербайджане—Азгиз, в Баку

В Абхазии— Центр. книж. скл. Наркомпроса Абхазии, в Сухуме

На Северном Кавказе, отделение Росгиза, в Нахичевани н/Д

### ՊԱՅՄԱՆՆԵՐ՝

*1. Պատվերները կատարվում են ամբողջ արժեքի 25%-ն իբրև կանխավճար ստանալուց անմիջապես, մնացած գումարի հաշվով արվում է վերադիր վճարում։*

*2. Փաթեթումն ու ճանապարհածախսը պատվիրողների հաշվին։*

*3. Ապրանքը հանձնվում է ֆրանկո Յերևան—«ՀԱՅԳԻՐՔ» ընկ. պահեստ, չապահովագրված։ Յեթե պատվիրողը ցանկանում է, ապահովագրվում է նրա հաշվին։*

*4. Ճանապարհին կորչելու կամ փչանալու պատասխանատվությունը «ՀԱՅԳԻՐՔ» ընկ. իր վրա չի վերցնում։*

ՊԵՏՀՐԱՏԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

*Գրառեպ. 2104 (բ), Հրատ. № 959, պ. № 368, տիրաժ 1500.*